ԱՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

չլսված պատմությունների շարք

ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

Չլսված պատմությունների շարք

Մի քանի բառ գրքի մասին.

Խճանկար կազմով «Ֆրագմենտներ» գրքի յուրաքանչյուր գլուխ, կոտրված հայելու ապակու մի բեկոր է, որը ներկայացնում է մարդկային փորձառության բազմաթիվ երանգներ, որոնք հազվադեպ են երևում օրվա լույսի ներքո: Սրանք պատմություններ են, որոնց մոռացել է ժամանակը, շշուկներ, որոնք ստվերվում են պատմության հիմնական պատմվածքների թնդյունով:

Յուրաքանչյուր էջ շրջելուց հետո ընթերցողը տեղափոխվում է մոլորակներ, որտեղ մարդկության ուղու վրա ազդած իրադարձությունների հերոսներն ու լուռ վկաները վերջապես ասելիք են ունենում:

Սուզվեք չուսումնասիրված կյանքերի խճճվածությունների մեջ, որտեղ առօրյան դառնում է արտասովոր, իսկ խլացված ձայները ռեզոնանսվում են չասված ճշմարտությունների ուժով:

«ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ: Չլսված պատմությունների շարք»-ը երգ է մոռացված պատմությունների ճկունությանը և խորը կապերի ուսումնասիրություն, որոնք կապում են մեզ բոլորիս:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անավարտ զրույցներ
2. Վերամիավորում լճի ափին
3. Թալեբի օրը
4. Գաղտնի տրիբունալը
5. Վերջին հանդիպում
6. Իտալական ֆուտբոլը
7. Աբսուրդ մանրապատումներ
8. Մոնոլոգ

Անավարտ զրույցներ

Փաբը, որտեղ փորձում էի գրել պատմվածքս, կահավորված էր փոքր կլոր սեղաններով, անկյուններում դարակների վրա հետաքրքիր արձանիկներ էին շարված, պատերին կախված էին ժամանակակից արվեստի գործեր: Հնչում էր Դեյվիդ Լինչի միքսը Լայք Լիի հետ: Աշխատանքային օրվա այդ ժամին քիչ հաճախորդներ կային, ու մթնոլորտը տրամադրում էր ստեղծագործելու:

Բերեցին մենյուն, բայց ես միայն կոֆե էի ուզում:

Կոֆեինի ազդեցությունն իմ համար կենսական է, երբ պետք է կենտրոնանալ գրելու կամ առհասարակ գործ անելու վրա: Հույս ունեի, որ էս անգամ էլ կօգնի կենտրոնանալ պատմվածքիս վրա, բայց մտքերս անընդհատ շեղվում էին: Մի ժամից Եվան պիտի գար, ու ես փորձում էի պատկերացնել ինչպիսին կլինի մեր առաջին հանդիպումը:

Երկար սպասելու կարիք չեղավ, նա սպասվածից շուտ եկավ: Ողջագուրվեցինք ու նստեցինք դեմ առ դեմ:

Եվայի հետ ծանոթացել էի ֆեյսբուքով: Իրական կյանքում այլ մարդ էր, քան նկարներում: Հավանաբար, ինչպես աղջիկների մեծ մասը, տարվում էր հեռախոսի ֆիլտրերով: Թեև ժպտում էր, բայց շարժուձևից զգացվում էր, որ խառնաշփոթ հոգեվիճակում էր ու ինչ-որ պահի տրամադրության ուժեղ անկում էր ապրելու:

- Ո՞նց ես, - սկսեցի մեր խոսակցությունը:

- Տատանողական զգացողություններով, - պատասխանեց Եվան, - լինում են չէ՞ պահեր, երբ տրամադրությունդ կտրուկ փոխվում ա: Մուդսվինգինգ էլի:

- Ըհը: Սովորաբար թվում ա, թե անպատճառ ա, բայց ես կարծում եմ՝ պատճառը մի բանի հանդեպ ակնկալիքներ ունենալն ա ու վախենալը, որ խոչընդոտների ես հանդիպելու: Անկախ քեզնից տրամադրությունդ ընկնում ա, բայց մինչև ծավալվելը, ի՞նչ կցանկանայիր խմել,- հարցրեցի՝ մատուցողին նշան անելով, որ բերի մենյուն:

Եվան առանց տատանվելու կապուչինո պատվիրեց: Իմ պես կոֆեի սիրահար էր, իր խոստովանությամբ, օրվա ընթացքում հինգ բաժակից ավել էր խմում:

- Ամեն օր զարթնում եմ ու որոշում, որ էսօր երեք բաժակից ավել չեմ խմելու, բայց հետո զգում եմ, որ չեմ դիմանա ու տենց անցնում եմ իմ լիմիտը: Չես պատկերացնի՝ երեկ խմել եմ յոթ բաժակ ու արդեն զգում էի, որ կոֆեինի քանակությունն օրգանիզմումս էնքան շատ ա, որ ձեռքերս դողում էին լարվածությունից:

- Հիմա էլ եմ ինչ-որ լարվածություն զգում քո մոտ: Ինչի՞ հետ ա կապված:

- Ձախողված հարաբերությունների: Երկու տարուց ավել հարաբերությունների մեջ էի ամուսնացած տղամարդու հետ ու էս վերջերս հասկացա, որ նա կնոջն ա սիրում:

Ակամայից ժպտացի, Եվան դա նկատեց ու միանգամից լարվեց:

- Ի՞նչ որ քմծիծաղ եմ տեսնում դեմքիդ...

- Չէ, իրականում անեկդոտ հիշեցի, որ ակտուալ ա էս պարագայում: Կարող ա լսած լինես...

- Իմ ցավի վրա փորձում ես աղ լցնել՝ անեկդոտ հիշելով:

- Չկա նման բան: Իմ կարծիքով հարաբերություններ պահպանելն էս կյանքում ամենաբարդ բանն ա, մանավանդ, երբ երկու հոգի միավորվում են ու դառնում մեկ մարդ: Հարցն էն ա, թե նրանցից ո՞վ ա դառնում էդ մեկ մարդը:

Եվան ժպտաց.

- Եթե սա էր անեկդոտը, ուրեմն լավն էր, բայց իմ հետ դա չի պատահել:

- Չէ, անեկդոտը հիմա կպատմեմ: Ուրեմն, ամերիկացին ունենում ա և՛ կին, և՛ սիրուհի, բայց ու՞մ ա ավելի շատ սիրում: Իհարկե սիրուհուն: Գերմանացին ունենում է և՛ կին, և՛ սիրուհի, բայց ու՞մ ա ավելի շատ սիրում: Իհարկե կնոջը: Իտալացին ունենում է, և՛ կին, և՛ սիրուհի, բայց ու՞մ ա ավելի շատ սիրում: Իհարկե իր մորը: Հայն ունենում ա և՛ կին, և՛ սիրուհի, բայց ու՞մ ա ավելի շատ սիրում... իհարկե նրան, ով անկողնում հաճելի ա:

Ծիծաղի պոռթկոց լսեցի ու հասկացա, որ նրա տրամադրությունը կտրուկ փոխվեց: Քիչ առաջ ընկճված էր, բայց հիմա ասես այլ մարդ լիներ:

- Էդքան էլ ակտուալ չէր բայց: Մեր խնդիրն ուրիշ էր: Իրականում նա ոչ մեկին էլ չէր սիրում:

- Հնարավոր ա կինը հարուստ ա, կնոջ հետ ապահովված ա զգում: Էսպիսի մի բան ասեմ, մենք՝ սիրում ենք փչացնել ներկա հարաբերությունները, սիրում ենք կառուցել նոր հարաբերություններ, հետագայում փչացնելու նպատակով, բայց հավատացած ենք, որ դրանում մեղավոր չենք: Ու գիտե՞ս ինչի: Որովհետև մեզ դուր է գալիս նոր բաներ փորձել, ազատություն ունենալ, մարդու էությունն ա էդպիսին:

- Հիմա ում մասին ա՞ խոսքը:

- Ձեր դեպքում չգիտեմ, բայց իմ ասածին գլոբալ պետք ա նայես, քիչ առաջ ասեցի, որ հարաբերությունները բարդ են: Մարդիկ չեն ուզում մենակ մնալ, հատկապես, երբ մեծանում են: Երբ ծերանում ենք, ավելի շատ ենք վախենում մենակությունից, քան մանուկ ժամանակ: Նույնիսկ շոկոլադ նվեր ստանալուց ծեր տարիքում ավելի շատ ենք ուրախանում, քան փոքր ժամանակ:

- Բայց դա ի՞նչ կապ ունի նրա հետ, որ իմ հարաբերությունները ձախողվել են:

- Մի պարզ պատճառով, մինչև հարաբերություններ սկսելը, ժամանակ չես հատկացրել վերլուծելուն՝ ինչքանով ա դա քեզ պետք: Ավելի շատ մտածում էիր ներկայի մասին, ներկա պահին քո հաճույքը ստանալու մասին: Դա մի կողմից հասկանալի ա, բոլորս էլ ուզում ենք ապրել ներկայով՝ առանց ապագայի մասին մտահոգվելու: Բայց հետո գալիս ա պահը, երբ ամեն ինչ վերջանում ա, ու հայտնվում ես անելանելի վիճակում: Էդ ժամանակ սկսում ես մտածել՝ ինչի՞ էսպես ստացվեց: Ու միակ պատասխանն էն ա, որ պետք չի ամուսնացածի հետ հարաբերություններ սկսել, որովհետև էդպիսի հարաբերությունները, որպես կանոն, ձախողման են դատապարտված: Մի լավ խոսք կա. «Քո երջանկությունը պիտի կառուցես քարի վրա, ոչ թե ավազի»: Ու խոսքը ոչ միայն ամուսնացած տղամարդկանց մասին ա: Ամուսնացած կանանց էլ ա առնչվում:

- Իսկ ես արդեն վախենում եմ նոր հարաբերություններ կառուցել, վախենում եմ, որ չեն հաջողվի ու մենակ անհաջող փորձերի քանակը կավելանա: Իմ մտադրությունների մեջ երբեք չի եղել շատ հարաբերություններ ունենալը: Հնարավոր ա, ինչ որ տարիքում ցանկացել եմ որոշ տղաների հետ հանդիպել, որպեսզի փորձ ձեռք բերեմ, բայց հիմա չեմ կարծում, որ դրա կարիքը դեռ ունեմ:

Եվայի հայացքում թախիծ նկատեցի: Վերցրեց բաժակն ու խմեց սառած կոֆեի մնացորդը: Ես էլ, նրան նայելով, մտածում էի՝ արժի մխիթարել, թե սառը ցնցուղ լցնել գլխին, բայց հասկացա, որ նրան պետք ա մի քիչ մոտիվացնել ու օգնել հաղթահարել նեգատիվ մտքերը:

- Եվա, - մի քիչ առաջ թեքվելով ասեցի, - երբ մարդ վախենում ա նոր բաներ փորձելուց, միշտ վատ տրամադրվածությամբ ա մոտենում: Պետք ա հասկանալ, որ կյանքում ամեն ինչ բալանսավորված ա: Էն հարաբերությունները, որ դու ունենում ես, քեզ ավելի փորձառու ու գիտակից են դարձնում, եթե իհարկե ժամանակ ես տրամադրում դրանք վերլուծելու:

- Իսկ եթե չեն դարձնում...

- Իսկ դու ինչ ե՞ս կարծում, ինչի ա՞ էդպես:

- Չվերլուծելու՞, դասեր չքաղելու՞ պատճառով:

- Այո, որովհետև իրավիճակը վերլուծելու, դրանից դասեր քաղելու փոխարեն մենք սովորություն ունենք մեղադրելու դիմացինին: Մարդու էությունն էնպիսին ա, որ նրան միշտ թվում ա՝ ինքը տարբերվող ա, անսխալական ու չի հասկանում, որ հենց իրանից ա սկսվում էն, ինչ կատարվում ա արտաքին աշխարհում, ու խոսքը միայն հարաբերություններին մասին չի: Մեր որոշումները ունենում են իրենց հետևանքները, ու առհասարակ մեր ռեակցիայից շատ բան ա գալիս:

Եվան խորը հոգոց հանեց, ասես հոգնել էր, որ գլխին քարոզ եմ կարդում, հետո նայելով հեռախոսին ասեց.

- Կներես, որ ընդհատում եմ: Մամաս ա զանգում, պատասխանեմ ու հետ գամ:

- Խնդիր չկա:

Վեր կենալով տեղից՝ արագ դուրս եկավ, իսկ ես միայնակ կողքերս էի նայում ու մի պահ աչքս ընգավ մի գեր մարդու վրա, ով երկար զննում էր մենյուն: Նկատելով իմ հայացքը՝ նա թեթև ժպտաց ու ասեց.

- Եթե ես դիետայի վրա եմ, դա դեռ չի նշանակում, որ չեմ կարող նայել մենյուն:

Ես էլ ժպտացի ի պատասխան: Գեր մարդը շարունակեց մենյուի ուսումնասիրությունը: Եվան վերադարձավ ու նստեց իր տեղը:

- Ամեն ինչ նորմալ ա՞,- հարցրեցի:

- Հա, իհարկե: Ես լիովին տրամադրված եմ քեզ լսելու:

Ես մի պահ լուռ մտածում էի՝ ինչ ասեմ: Չէի ուզում Եվային թվա, թե գլխին քարոզ եմ կարդում, բայց ուզում էի մի բանով օգնած լինել: Բոլորս էլ, լույս աշխարհ գալով, բախվում ենք մի շարք խնդիրների հետ, ու էդ խնդիրները հաղթահարելու համար մեզ պետք ա շրջապատի աջակցությունը, գոնե միայն հուսադրող բառերով:

- Շատ լավ: Հիմա փորձի պատկերացնել, որ էստեղ ոչ ոք չկա, բացի մեզնից: Պատկերացրու, որ ես հայելի եմ, ու դու, ինձ նայելով, տեսնում ես քեզ հայելու մեջ: Դու կարող ես խոսել առանց վախենալու, որ քեզ չեն հասկանա կամ կքննադատեն: Դա նույն բանն ա ինչ գնաս հոգեբանի մոտ, ով քո պատմածին ուրիշ տեսանկյունից ա նայում, ըմբռնումով ա մոտենում, ու նաև որոշ դեպքերում լուծում առաջարկում:

Եվան, մի փոքր առաջ խոնարհված, ուշադիր լսում էր:

- Բոլորս էլ անցյալ ունեցել ենք, իսկ ով չի ունեցել, նրան քիչ ժամանակ ա մնացել ունենալու համար: Մարդու հոգեբանության մեջ արմատացած ա փորձի ցանկությունը: Ցանկանում ենք ամեն ինչ փորձել, նույնիսկ արգելված պտուղը, հասկանալու համար, թե ինչ ա իրենից ներկայացնում:

- Իսկ ճիշտ ա՞ էն կարծիքը, որ տղամարդիկ իմանալով, որ աղջիկը հարաբերություններ ա ունեցել ամուսնացածի հետ, հետ են քաշվում նրա հետ լուրջ հարաբերություններ ստեղծելու մտադրությունից:

- Անկեղծ ասած՝ 50-50 ա: Գիտականորեն ապացուցված ոչինչ չկա, էնպես որ, էդ հարցում կարծիքները տարբերվում են: Առհասարակ անհատների կարծիքը պետք չի ընդհանրացնել հասարակության դիրքորոշման հետ: Չգիտես ինչի, մարդիկ հակված են մի հոգու կարծիքը վերագրել մեծամասնությանը, - պատասխանեցի ես, ապա լռեցի՝ փորձելով հասկանալ Եվայի ռեակցիան:

Նրա հայացքից գուշակում էի, որ ինչ-որ բան է ուզում ասել, բայց վարանում է, արդյոք ճիշտ պահն է անկեղծանալու համար, թե արժի մի քիչ էլ ժամանակ շահել ու շեղվել այլ թեմաներով:

- Կարո՞ղ եմ քեզ հարցնել, թե ինչ տեսակի աղջիկների ես հանդիպել, ու ինչ պատմություններ ես լսել, որոնք քեզ համար անսպասելի էին:

Այդ հարցը լսելով՝ ժպտացի ու մի քիչ մտածելուց հետո պատասխանեցի.

- Շատ են եղել, բայց կարծում եմ բոլորին էլ մի բան էր միավորում, ու իմ պատմելուց հետո, դու էլ կհասկանաս՝ ինչը: Էս պահին մտքիս եկան չորս դեպքեր, ու դրանք միանգամայն բավարար են ընդհանուր պատկերացում կազմելու համար: Բոլոր չորս դեպքերում էլ կանայք ինքնուրույն որոշումներ էին կայացրել, - մի փոքր առաջ եկա, որպեսզի լույսն իմ վրա ընկնի, քանի որ փաբում կիսախավար էր տիրում:

- Առաջինը, ում մասին կուզեմ պատմել, ուսանողուհի էր: 20 տարեկան էր, բավականին գրավիչ, մազերը բնականից շիկահեր էին: Առաջին հանդիպման ժամանակ տարբեր թեմաներ էինք քննարկում, բայց նրա պատմածներից ամենաշատը տպավորել էր էն, որ ցուցակ էր վարում, որում նշում էր բոլոր նրանց անունները, ում հետ որոշակի ինտիմ հարաբերություններ էր ունեցել: Նա հավասարապես հավանում էր և՛ տղաներին, և՛ աղջիկներին, բայց ինձ ամենից շատ զարմացրել էր, որ մարդը ցուցակ ա վարում: Հետաքրքիր ա, գոնե ցուցակի մեջ մի սյունակ թողել է՞ր՝ նշելու համար, թե ով էր հաճելի, ով չէ, - վերջին նախադասությունը ասելուց ակամայից սկսեցի ծիծաղել՝ վարակելով նաև Եվային, ով ինձ մեծ հետաքրքրությամբ էր լսում:

- Մյուսը, ում մասին կարող եմ պատմել, դրսում ծնված հայ էր, ով կարոտից տանջված եկել էր Հայաստան՝ փնտրելու մի թեկնածուի, ում հետ կկարողանար իր կյանքը կապել: Իրա ասելով շատ անհաջող հարաբերություններ էր ունեցել, ցավոք: Պատմելու ընթացքում շատ էր հուզվում, հետո չդիմացավ ու անկեղծացավ, որ թողել էր մի մարդու, ում հետ պիտի էին ամուսնանալուն,- ստեղ կանգ առա ու հարցրեցի Եվային,- Գուշակի, ինչն է՞ր պատճառը... Չէէ, ի՞նչ ուրիշ կին... Մի կուբացու էր հանդիպել ու ցանկություն ուներ նոր բան փորձելու, դրա համար զոհաբերեց իր լուրջ հարաբերությունները: Հետո շատ էր զղջում, երբ նոր թեկնածուի փնտրտուքների մեջ էր:

- Իսկ ինքը հետո քայլ չարե՞ց հետ գնալու էդ տղայի մոտ, - հարցրեց Եվան:

- Դու կարծու՞մ ես, որ տղամարդը կընդունի նրան, ով իրեն թողել-գնացել ա ուրիշի մոտ, ու գրկաբաց սպասելու ա, որ դավաճանելուց հետո հետ գա:

- Եթե տղամարդիկ չեն ընդունում, ապա կանայք ինչո՞ւ դա անում:

- Կանանց ու տղամարդկանց հոգեբանությունը տարբերվում ա, էդ պետք ա վերջապես ընդունել: Բացի էդ էլ կանայք ավելի էմոցիոնալ են, իրենց սիրո կրակը հավերժ կարող ա

վառվի մեկի հանդեպ, ու ցանկացած դեպքում հետ ընդունի՝ նույնիսկ եթե դավաճանել ա, ուրիշի մոտ ա գնացել ու վերադարձել:

- Ոնց ասում են՝ «Men would never»...[1]

- It's different[2], - անգլերեն պատասխանեցի, - երբեք պետք չի համեմատել տղամարդկանց ու կանանց զգացմունքները՝ չնայած, որ երկու կողմն էլ դրամատիկ են իրենց էությամբ, էդպես չի՞:

Եվան իր ձեռքը մեկնեց սեղմելու համար՝ ի նշան համաձայնության, որ անկախ սեռից բոլորը դրամատիկ են:

- Երրորդ դեպքը, որ հիշեցի, - շարունակեցի ես, - մի աղջկա էի հանդիպել, ով, չգիտես ինչու, որոշում էր կայացրել, որ երբեք չի ամուսնանալու, փոխարենը անթիվ քանակությամբ հարաբերություններ էր ունենում: Հետագայում իմացա, որ ցավոտ բաժանության միջով ա անցել, էն էլ 5 տարի երջանկությունից հետո ու չի պատկերացնում, որ իր կյանքը կկապի ուրիշի հետ: Իսկ ազատ հարաբերությունների մեջ լինելը բացատրում էր նրանով, որ անկախ կին ա, ոչ մեկի առջև պատասխանատու չի՝ բացառությամբ ինքն իր: Եթե մարդը չի սովորում ինքն իրեն կառավարել, դա անում են ուրիշները:

- Կոնկրետ վերջին աղջկա մասին, որ պատմեցիր, ես գտնում եմ, որ հիմար ու վտանգավոր քայլերի ա դիմել, բայց նորմալ ա: Ի վերջո խելացի մտքերը գալիս են միայն այն ժամանակ, երբ հիմար քայլերը արդեն կատարված են, - Եվան ժպտալով երկու ձեռքերի ափերը վերև բարձրացրեց՝ ակնարկելով, որ մեր զրույցի ընթացքում ամենալավ մեջբերումն է արել:

- Այս արտահայտությունը մեկընդմիշտ հիշելու եմ, երբ հիմար քայլեր անեմ, - ասացի ես՝ ցուցամատով ճակատիս թեթևակի հարվածելով:

- Շատ բովանդակալից զրույց ենք ունենում, էսպիսի երկխոսությունը համարժեք ա ստեղծագործելուն, - ասաց Եվան, ապա թեքվեց դեպի մատուցողը ու ձեռքով նշան արեց, որ մոտենա մեզ:

- Առաջարկում եմ խմիչք վերցնել, բայց էս անգամ իմ հաշվին: Ի՞նչ կուզես խմել,- հարցրեց ինձ:

- Իսկ ես առաջարկում եմ էլի իմ հաշվին լինի, ի վերջո ես եմ քեզ հրավիրել:

- Առաջարկը մերժված ա, ես էկվալիզմի[3] կողմնակից եմ, - Եվան լայն ժպտաց՝ ցույց տալով ատամնաշարը:

- Դե եթե օրիորդը պնդում է, ուրեմն իմ պայքարը ոչինչ չի փոխելու:

Որոշեցի «Բակարդի» ռոմ վերցնել, իսկ Եվան պատվիրեց «French 95»՝ խնդրելով, որ ալկոհոլի չափաքանակը սովորականից ավել պատրաստեն:

- Դու չպատմեցիր չորրորդ դեպքը,- նկատեց Եվան:

- Հա ճիշտ ես, ուրեմն, մի կնոջ էի ճանաչում, ով բիզնես ուներ: Զրույից բացել, զարգացրել ու հասցրել էր նրան, որ տարածաշրջանում հայտնի բրենդ էր դառել: Ինքն էլ դառել էր հսկայական գումարների տիրուհի...

Եվան ծիծաղից պոռթկաց, իսկ ես զարմացած նայում էի նրան՝ փորձելով հասկանալ, թե ինչ ասեցի, որ ծիծաղելու էր:

- Հսկայական գումարների տիրուհի, - կրկնեց նա իմ վերջին խոսքը՝ ծիծաղելով:

Նա դեռ ծիծաղում էր, երբ խմիչքը բերեցին: Եվան սրբեց աչքերը, խփեց իր բաժակը իմին ու ասաց.

- Էսօրվա կենացը:

Ռոմից օրգանիզմս սկսեց տաքանալ, հաճելի թուլություն զգացի, իսկ Եվան հակառակը՝ էլ ավելի աշխուժացավ: Էստեղ մտովի նշեցի ինքս իմ համար, որ, փաստորեն, ալկոհոլը տարբեր մարդկանց վրա տարբեր ազդեցություն է ունենում:

- Մի խոսքով,- վերադարձա իմ պատմությանը,- հսկայական գումարների տիրուհին մի օր զգաց, որ ամուսնու կարիքն էլ չունի, այլ ունի ադրենալինի պակաս ու կցանկանար այն լրացնել, ուստի նախընտրեց ամուսնալուծվել, քան թե դավաճանել ամուսնուն: Այդ քայլին գնալը պատճառաբանում էր նրանով, որ, հարգանքից ելնելով, չէր կարող իր երեխաների հորը վիրավորեր: Իսկ կարգավիճակի փոփոխությունից հետո խիղճը հանգիստ կլիներ ու կաներ էն, ինչ կուզեր:

Եվան լուռ լսում էր: Որոշեցի ամփոփել իմ պատմածները ու վերջապես լսել նրան:

- Իմ պատմած բոլոր դրվագները ցույց են տալիս, որ ամեն ոք ընտրության ազատություն ունի, ի վերջո, դու ես պատասխանատու քո որոշումների համար, միայն դու իրավունք ունես որոշելու, արդյոք ճիշտ ես արել, թե չէ: Երբ խորանում ես, հասկանում ես, որ հարաբերություններում ամենակարևորը չմտածելն ա, թե ինչն ա՞ հարաբերություններում ամենակարևորը: Պարզապես պետք ա վայելել ներկան, ի վերջո ապագան անհայտ ա: Եթե դու մի բան չես կարող փոխել, ապա պիտի փոխես քո ռեակցիան դրա հանդեպ: Հիմա քո հերթն ա, ու, կարծում եմ, էս օրինակները քեզ կօգնեն հասկանալ, որ դու ոչ մեկին բացատրելու ոչինչ չունես, բայց, եթե չես ուզում նույն իրավիճակում երկրորդ անգամ հայտնվել, ապա պիտի եզրակացություններ անես քո փորձից, - եզրափակեցի ես ու մի կում արեցի իմ ռոմից՝ նկատելով, որ Եվայի բաժակը գրեթե դատարկ էր:

Եվան լուռ էր ու մտազբաղ:

- Մենք կարող ենք ժամերով անալիզ անել, հոգեբանության տեսանկյունից փորձել հասկանալ մարդկանց դրդապատճառները, բայց արդյունքում կունենանք ծավալուն

գիտական թեմա, էնպես, որ ավելի լավ ա չխորանանք: Դու կարող ես փորձել խոսել «հայելու մեջ», եթե ցանկանում ես, - ասացի ես՝ սպասելով, որ Եվան սկսի:

Փաբում մթնոլորտը դեռ հանգիստ էր: Վախենում էի, որ մարդաշատ կլինի ու ստիպված կլինենք գոռալով խոսել, որ լսենք իրար, բայց մեր բախտը բերեց. երաժշտությունը ցածր էր, քիչ մարդ կար, ու ինձ դուր էր գալիս, թե ինչպես էին միմյանց հետ խոսում, առանց ամեն վայրկյան ստուգելու իրենց հեռախոսները, նույնիսկ սեղանների մեծ մասի վրա հեռախոս չնկատեցի: Մի այսպիսի չգրված կանոն կա. եթե որևէ մեկի հետ հանդիպելուց (էական չէ՝ լինի դա ընկեր, պոտենցյալ կողակից, թե պարզապես թեթև ծանոթություն) հեռախոսը երեսնիվայր ես դնում կամ առհասարակ սեղանին չես դնում, ապա դրանով դիմացինի ժամանակն ես գնահատում ու ձեր շփման կենտրոնը նա է լինում: Կան նրբերանգներ, որոնք պետք է զգալ, դիսցիպլինան պետք է զարգացնել, իսկ երբ մարդը յուրացնում է դիսցիպլինայի արվեստը, նրա դեմ խաղ չի լինում: Բացի այդ էլ, բազմիցս ապացուցվել է, որ սոցիարթակները մարդկանց չեն միավորում, այլ հակառակը՝ բաժանում են: Հինգից չորս դեպքում, սոցիարթակների վատ ազդեցության պատճառով, կորցնում են այն մարդուն, ում համարում են մտերիմ, հարազատ կամ հետաքրքիր:

- Ես կարող եմ սկսել նրանից, թե ինչո՞ւ գնացի էդ քայլին, - լռությունը վերջապես խախտեց Եվան, - ու նաև ընթացքում կարող եմ վերլուծել որոշ բաներ, որոնք ժամանակի ընթացքում ինձ դրդել են էդ քայլին:

Եվային քաջալերելու համար գլխով արեցի ու դիրիժորի պես ձեռքերս շարժեցի, հասկացնելով որ կարող է սկսել:

- Հարաբերությունների ընթացքում հասկացա, որ ես էն կանանցից եմ, որ նախընտրում են քնել էն տղամարդկանց հետ, ովքեր կնոջ հետ են ապրում, բայց ոչ նրանց հետ ովքեր մոր հետ են ապրում:

Նման անկեղծ խոստովանությունից հոնքերս վեր թռան, բայց որոշեցի չընդհատել նրան:

- Ճիշտ հարաբերությունները նման են արվեստի, բայց մեր ժամանակներում գերակշռող մասը չի կարողանում արվեստ ստեղծել, ի վերջո այն քչերին է հասու: Ինձ թվում էր, ես էլ էի էդ քչերից, բայց պարզվեց՝ ոչ:

- Շատերիս ա թվում, որ ունիկալ ենք ինչ-որ տեղ, այնինչ բոլորս էլ նույն բանն ենք անում:

- Իրականում, մեր դարում ոչինչ չի փոխվել, ուղղակի ավելացել են նոր ոճի հագուստն ու զարգացել են տեխնոլոգիաները: Սոցիարթակում հետևորդների բանակ ունենալուց մեզ թվում ա, որ մենք տարբերվում ենք, բայց երբ բախվում ենք իրական կյանքի հետ, հասկանում ենք, որ ամբոխից չենք տարբերվում: Ինձ նման շատ այլ աղջիկների էլ են գրավում ամուսնացածները կամ էլ «կոտրված» տղաները: Ամուսնացածի դեպքում մեզ թվում ա, որ նա դժբախտ ա կնոջ հետ ու մենք կարող ենք նրան փրկել, իսկական սեր տալ, «կոտրված» տղաներին էլ կարող ենք փոխել, ավելի լավը դարձնել, բայց ինչ որ

պահի հասկանում ենք, որ մեզ չեն գնահատում ու դառնում ենք չհասկացված: Ես հարաբերությունների ընթացքում ապրում էի ներկայով, ու հիմա ինքս ինձ հարց եմ տալիս՝ արդյոք նրա համար զուտ քմահաճույք էի, ում հետ ժամանակ էր անցկացնում, թե ինչ որ պահ կար, որ իրոք սիրում էր, կամ որտե՞ղ եմ սխալ եմ թույլ տվել, որ ամեն ինչ էսպես ավարտվեց: Նմանատիպ հարցերը տանում են փակուղի, բայց երբ սպառիչ ու անկեղծ պատասխաններ եմ տալիս, ինձ փակուղուց դուրս եմ հանում:

Եվային լսելուց մտքումս անդադար վերլուծություն էի անում, բայց զգում էի, որ իմ բացատրություններից ոչ մեկն էլ միանշանակ ճշմարիտ չի: Այսպիսի հարցերը կարող են ունենալ մեկից ավելի պատասխաններ ու դրանցից որևէ մեկը միակ ճշմարիտ համարելն առնվազն սուբյեկտիվություն է:

- Մենք որպես կանոն վերլուծում ենք այն, թե ինչ ա տեղի ունեցել, բայց հետևություններ չենք անում, բայց էս անգամ ինձ մոտ էնպիսի զգացողություն ա, որ ես նույն սխալը էլ երբեք չեմ կրկնի, նման իրավիճակի մեջ հայտնվելուց հետագայում հաստատ կխուսափեմ:

- Ամեն ինչից հնարավոր ա խուսափել, բացի մահից ու հարկեր մուծելուց – հարմար պահը գտնելով՝ մեջբերեցի ես, ապա մեղավոր ժպտալով ասացի, - ես էլ չեմ ընդհատի քեզ, խնդրեմ շարունակի:

- Խնդիր չկա, - ժպտաց Եվան, - ես կարող եմ հիմնավորել թե ինչի այլևս չեմ գնա ամուսնացածի հետ հարաբերությունների: Նախ՝ էլ երբեք չեմ ուզի երկրորդական դերում լինել, և երկրորդ՝ *թռչունը շատ թանկ ա հատուցում, երբ թափանցում ա ձկան համար նախատեսված թագավորություն*: Ցանկացած մարդ իր զարգացման վերջնակետին կհասնի էն ժամանակ, երբ գիտակցի, որ անհատականություն լինելը ամենակարևոր նախապայմանն ա բոլոր ասպարեզներում: Երբ վերլուծում եմ, հասկանում եմ, որ եղել եմ սիրուհու դերում, բայց հարաբերությունների ընթացքում ոչ մի սխալ չեմ արել, չի եղել իրավիճակ, որտեղ ինձ սխալ պահած լինեմ: Բայց դա կարևոր էլ չի, երբ ամեն ինչ վերջացած ա, էլ պետք չի նայել հետ ու փորձել հասկանալ քեզ սիրում էին, թե չէ, ի վերջո, ինչ եղել ա, արդեն ավարտվել ու էլ նշանակություն չունի: Կարևոր չեն սկզբնական մտադրությունները, բայց կարևոր ա վերջնական արդյունքը: Ու պետք չի հավատալ խոսքերին, փոխարենը պետք ա ուշադրություն դարձնել գործողություններին:

- Սովորաբար մենք մեր հարցերի պատասխաններն ունենք, ուղղակի վախենում ենք ինքներս մեզ հետ անկեղծ լինել, - ասացի ես:

- Համաձայն եմ, բայց երբ վերլուծության արդյունքում գտնում ես պատասխանները, նոր հարցեր են ծագում՝ արդյո՞ք էդ պատասխանները սպառիչ են: Մյուս կողմից էլ դու չես կարող կիսվել մարդկանց հետ, որովհետև ամեն մեկն ունի իր ճշմարտությունը:

Գլխով համաձայնվում էի նրա ասածների հետ, երբ վերջացրեց, հարցրեցի.

- Կուզեի՞ր նորից լինեիր հարաբերությունների մեջ:

- Կարծում եմ, վաղ թե ուշ նորից հարաբերությունների մեջ եմ հայտնվելու, բայց դեռ չեմ պատկերացնում ինչպես կստացվի:

- Գիտես, ինձ թվումա դու լավ տղայի հետ չես ուզի հարաբերություններ ունենալ, կձանձրանաս:

Եվան ձեռքով փակեց աչքերը, ու ես նկատեցի որ քմծիծաղ է տալիս:

- Էդ հարցում ճիշտ ես, պատասխանեց նա,- Չեմ սիրում լավ տղաներին: Նրանք ռոմանտիկ են, իսկ ռոմանտիկները նրանք են, ում կյանքում սերն ավելի հաճախ ա պատահում, քան ինտիմը,- ապա շարունակեց, - Տեսնես կկարողանամ իմ փորձն ի շահ երկարատև հարաբերությունների կառուցման օգտագործել: Ինչքան էլ ցանկանաս, միևնույն ա, չես կարող թաքցնել քո ապագա կողակցից, ի վերջո, եթե քեզ ընդունում են, ուրեմն քեզ ամբողջությամբ պիտի ընդունեն՝ քո բոլոր թերություններով ու առավելություններով: Լինում են դեպքեր, երբ մինչև լիովին չճանաչեն քեզ, վստահություն չես ներշնչի, էդ դեպքում ավելի լավ ա լրիվ անկեղծ լինել, ու համոզված եմ, կլինեն մարդիկ, ովքեր ըմբռնումով կմոտենան:

- Հավանականությունը մեծ ա, որ կհանդիպես նման մարդկանց, բայց նաև կհանդիպես մարդկանց, ովքեր քեզ լիովին ճանաչելուց հետո կթողնեն, նոր ադրենալին փնտրելու նպատակով, բայց նախօրոք դժվար ա իմանալ: Պետք ա փորձել, մինչև գտնես:

Ժամը 11-ն էր մոտենում, Եվան հեռախոսին նայեց, ու ես հասկացա, որ մեր հանդիպումը մոտենում է իր ավարտին:

- Կյանքը հիասքանչ ա, եթե ճիշտ ընտրես անտիդեպրեսանտները, -ասեց նա հեռախոսը մի կողմ դնելով:

Էդ արտահայտությունը լսելով՝ ժպտացի, բայց միաժամանակ անհասկանալի տխրություն զգացի: Միայն զգացեք, թե ինչ դեպրեսիվ է: Ապա որոշեցի դրական նոտայով ավարտել մեր հանդիպումը.

- Առողջ մարդ չի լինում, կամ լինում են հոգեպես «հիվանդ» մարդիկ, կամ էլ ֆիզիկապես «հիվանդ» մարդիկ, բայց վերջը լավ ա լինելու:

- Մխիթարող էր, տեսնենք ոնց կլինի, - Եվան նորից ստուգեց հեռախոսը ու ներողություն հայցող տոնով ասաց, - ի դեպ, տանն ինձ սպասում են, վեր կենա՞նք:

Գլխով համաձայնվեցի: Հաշիվը փակեցինք, ես պայուսակիս մեջ տեղավորեցի թղթերը, որոնց վրա գրում էի պատմվածքս, ու դուրս եկանք:

Փաբի ծխած օդից հետո դրսի մաքուր օդը ինձ թարմություն պարգևեց: Ա՛խ, էդ սառն օդը ոնց ազդեց ուղեղիս վրա: Մի այլ հանգստություն պարգևեց, ու չնկատեցի, որ Եվան արդեն տաքսի էր կանչել:

Գնալուց առաջ պինդ գրկեց ինձ ու ականջիս ասաց.

- Ծնորհակալ եմ էսօրվա համար: Քո պատմածները, մեր քննարկում-վերլուծությունը ահագին թեթևացրեցին ինձ ու հուսով եմ, սա մեր վերջին հանդիպումը չի, - հետո համբուրեց այտս ու նստեց մեքենան:

Տաքսին շարժվեց: Ես քայլեցի իմ ճանապարհով՝ գրպանիցս հանելով ականջակալները ու միացնելով Դեյվիդ Լինչի միքսը Լայք Լիի հետ, որը լսել էի փաբում:

***

Եվայի հետ հանդիպումից անցավ երկու օր: Առավոտյան, համաձայն սովորության, նախքան անկողնուց վեր կենալը, ստուգեցի հեռախոսս ու տեսա, որ նոր հանդիպման առաջարկ եմ ստացել, բայց ոչ թե Եվայից, այլ Յանայից: Յանայի հետ ծանոթացել էի ծանոթությունների հավելվածի միջոցով, բայց մեր շփումը շարունակվել էր սոցիալական ցանցերում: Նա Ռուսաստանում ծնված հայ էր, Ուկրաինայի հետ պատերազմի սկսվելուց հետո վերադարձել էր հայրենիք ու մեկ տարուց ավել ապրում էր մայրաքաղաքում և աշխատում որպես պրոյեկտ մենեջեր հայտնի ՏՏ ընկերություններից մեկում: Յանան ինձ հրավիրում էր հանդիպման իրենց օֆիսի կտուրում աշխատանքային օրվա ավարտից հետո: Առաջարկը ինձ հետաքրքիր թվաց ու, քանի որ այդ օրը ուրիշ պլաններ չունեի, որոշեցի ընդունել:

Մոտենում էր հանդիպման ժամը, չէի ուզում դատարկաձեռն գնալ, հիշեցի, որ ճանապարհին փոքր կաֆե կա, որտեղ բավականին լավ կոֆե են տալիս, ու որոշեցի երկու բաժակ վերցնել այնտեղից: Այսպես, քայլելով ու երգ լսելով, հասա ու ներս մտա: Հաճելի ինտերիերով ու աշխատակիցներով միջավայր էր, որտեղ, ցանկության դեպքում, նույնիսկ անվճար էլ կաշխատեիր: Ականջակալներս հանեցի ու խնդրեցի ամերիկանո և կապուչինո, որովետև վստահ չէի՝ Յանան որը կնախընտրի: Մինչ սպասում էի, որ իմ պատվերը պատրաստ լինի, ուշադրությունս գրավեցին կողքի սեղանին նստած տղամարդիկ:

Նրանցից մեկը մտազբաղ տեսքով ասաց ընկերոջը.

- Է՛հ, բարեկամս, կյանքը նման է սուրճի գավաթի:

Ընկերը մի պահ մտածեց, նայեց իր գավաթին, հետո հարցրեց.

- Ինչի է՞ կյանքը նման սուրճի գավաթի:

- Ես որտեղի՞ց իմանամ, - պատասխանեց առաջին տղամարդը, - Մի՞թե ես փիլիսոփա եմ:

Հազիվ զսպեցի ժպիտս: Փիլիսոփայական տեսանկյունից իրոք բարդ էր հասկանալը, բայց հետաքրքիր էր: Առհասարակ հետաքրքիր է ստացվում, երբ զրուցում են այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսին են գաղափարները, կյանքը: Իզուր չէր Էլեանոր Ռուզվելտն ասում.

«*Մեծ ուղեղները քննարկում են գաղափարներ,*

Միջին ուղեղները քննարկում են իրադարձություններ,

Փոքր ուղեղները քննարկում են մարդկանց»:

Կոֆեն պատրաստ էր, վճարեցի ու դուրս եկա: Նորից դրեցի ականջակալներս ու միացրեցի Մաքս Քուփերի "Parting Ways"-ը, որը պարզապես երաժշտություն չի: Եզակի երաժիշտ Մաքս Կուպերի մասին ասում են.

«*Մաքս Կուպերը կամուրջ է գցում գիտության ու արվեստի միջև, միավորելով դարավոր անդունդը, գլիչ-էլեկտրոնիկայի, դասական երաժշտության ու պարուրող վոկալի համադրության շնորհիվ*»:

Այսպես, երգ լսելով, հասա Յանայի նշած տեղը: Բարձր ու ժամանակակից շինություն էր, սպիտակ քարերով շարված, անվտանգության աշխատակիցներից մեկը մոտեցավ ինձ ու խիստ տոնով հարցրեց.

- Ու՞ր եք գնում:

- Ձեզ մոտ Յանա անունով պրոյեկտ մենեջեր կա, ինքն ա ինձ հրավիրել, - նույնպիսի տոնով պատասխանեցի ես:

- Հա՛, իմացա, Ձեր անունն Արեն ա՞ ,- հայացքը մեղմացնելով՝ հարցրեց:

- Այո, ամենավերջին հարկ պիտի բարձրանամ, չէ՞:

- Վերելակով բարձրացեք վերջին հարկ, աջի վրա աստիճաններ կտեսնեք՝ կտուր տանող:

Գլխով շնորհակալություն հայտնեցի ու նստեցի վերելակ:

Վերելակից դուրս գալուն պես նկատեցի աստիճանները, բարձրանալով ու բացելով ապակյա դուռը, հայտնվեցի կտուրում: Ի զարմանս ինձ՝ այն ավելի շատ բացօթյա կաֆե էր հիշեցնում, հարմարավետ նստարանները զբաղեցված էին օֆիսի աշխատողների կողմից, որոնց մեծ մասը, ինչպես նկատեցի, ռուսներ էին: Շուրջ բոլորս նայելով՝ ձախ անկյունում նկատեցի Յանային, ով անհամբեր ձեռքով էր անում: Քայլեցի դեպի նրան ու ողջունեցի: Առաջին հայացքից Յանայի արտաքինը ինձ տպավորեց: Մազերը կապույտ էին, գեղեցիկ ատամներ ուներ: Ասում են. *«Եթե գեղեցիկ ատամներ ունեք, պետք է հաճախ*

ժպտալ, դա ենթագիտակցորեն ինքնավստահություն է առաջացնում, ու հոգեբանական պատնեշ կառուցելու լավագույն միջոցներից է»: Միգուցե Յանան տեղյակ էր դրա մասին: Կապուչինոն, որը երկար ժամանակ մնացել էր ձեռքումս, հանձնեցի նրան: Յանան շնորհակալություն հայտնեց ու առաջարկեց նստել:

- Ասում են՝ ցանկացած հանդիպումից առաջ խոսեք ձեր հոգեբանի հետ, իսկ դու գնացել ե՞ս էդ քայլին, - հարցրեց Յանան՝ հիշեցնելով մեր օնլայն խոսակցություններից մեկը, որի ժամանակ ես կատակով ասել էի, որ ամեն մի հանդիպում չի, որ հաճելի է անցնում, դրա համար արժի բոլոր հանդիպումներից առաջ հոգեբանի հետ խորհրդակցել:

- Հա իհարկե, քննարկեցի իմ հոգեբանի հետ, ու ինքը կանաչ լույս տվեց՝ ասելով, որ ի վերջո միշտ էլ արժի նոր մարդու հետ ծանոթանալ, որովհետև նոր մարդու հետ ծանոթությունը հնարավորություն ա տալիս ընդլայնել մտահորիզոնը: Առհասարակ, ես սիրում եմ նոր մարդկանց հանդիպել, նոր պատմություններ լսել նրանցից:

- Իսկ ո՞վ ա քո հոգեբանը, - հետաքրքրվեց Յանան:

- Իմ ալտեր էգոն, - ժպտալով պատասխանեցի, - ու կարծում եմ՝ ամեն մեկիս հոգեբանը ինքն ա: Ինչքան էլ դիմենք մասնագետների օգնությանը, կիսվենք, խորհրդակցենք, բայց ի վերջո անելու ենք էն ինչ մենք ենք ուզում, - պատասխանեցի ես, ապա հարցրեցի, - իսկ դու ունե՞ս հոգեբան:

- Իրականում հա, երկու տարուց ավել կլինի, ինչ հաճախում եմ նրա մոտ: Էս վերջերս էլ նորից գնացի, լուծումներ եմ փորձում գտնել, ու ոնց որ թե հասնում ենք վերջնակետին:

- Անձնական խնդիրներ ե՞ն, - զգացի, որ մեր խոսակցությունը հարցաքնության է վերածվում, բայց ունակ չէի զսպելու հետաքրքրությունս:

- Ընդհանուր, ներառյալ անձնականը, բայց վերջերս ավելի շատ մտածում եմ օֆիսից դուրս գալու մասին: Գնալով հասկանում եմ, որ պետք չի կյանքը զոհել 9-ից 6 սիստեմին, ու առհասարակ, կյանքը եռում ա, երբ օֆիսում չես լինում: Էս օֆիսում աշխատում եմ կես տարի, մինչև ստեղ գալը հաճախ էի օֆիսներ փոխում: Առհասարակ օֆիսները նման են զուգակցի, եթե գտնում ես ճիշտ մեկին, կառուցում ես երկարատև հարաբերություններ, եթե գտնում ես սխալին՝ կեսից թողնում ես, անվանում նախկին ու վատով հիշում: Մյուս կողմից ես չեմ հավատում, որ լարված աշխատելով կհասնեմ իմ ուզածին կամ ամենաքիչը կհարստանամ, եթե էդպես լիներ, ապա, ըստ լոգիկայի, շինարարները աշխարհի ամենահարուստ մարդիկ կլինեին:

Միանգամայն համաձայն էի նրա հետ, որովհետև ես էլ էի այդպես կարծում:

- Անկեղծ ասած, ես քեզ լրիվ հասկանում եմ, որովհետև նույն խնդրին էլ ես եմ հաճախ բախվել: Տանել չեմ կարողանում օֆիսային կյանքը: Նախ անիմաստ ժամանակ ա ծախսվում օֆիս հասնելու վրա, հետո, երբ նույնիսկ գործդ արել-վերջացրել ես, ստիպված ես սպասել մինչև ժամը գա, նոր կարողանաս դուրս գալ, դուրս գալուց հետո

էլ էներգիա ու ցանկություն չի մնում ինչ-որ բանով զբաղվելու: Ու էսպես օրեցօր ու տարեցտարի, մինչև կյանքը կողքովդ չի անցնում: Այնինչ պետք ա էնպիսի կայուն ճանապարհ բռնել, որը թույլ կտա օգտվելու կյանքի հաճույքներից, զարգացնելու քո հետաքրքրությունները ու իրագործելու քո երազանքները: Միայն էդ դեպքում կզգաս, որ չես գոյատևում, այլ ապրում ես: Գիտե՞ս՝ ինչ ա պետք դրա համար:

- Ի՞նչ, - խորաթափանց հայացքով հարցրեց Յանան:

- Ու՛ժ, - բռունցքներս վերև տանելով՝ ասեցի ես,- ամեն ինչի հիմքը ուժն ա: Առանց ուժ ոչինչ հնարավոր չի: Կան ինքնակրթող գրքեր, որ լիքն են մոտիվացնող ցիտատներով, ու կարդալուց քեզ թվում ա, որ դու ուժ ես ձեռք բերում, բայց գիրքը փակելուց հետո մոռանում ես, ինչն էր քեզ էդպես մոտիվացրել: Պատճա՞ռը: Նպատակ չունես: Դոֆամինի պակասը լրացնում ես՝ քեզ ներշնչելով, որ առանց ջանք գործադրելու կստացվի օֆիսից դուրս գալ, ձեռք բերել էն բալանսը, որին ձգտում ես: Բայց նման բան չկա, քանի որ առաջին քայլն անելը ամենադժվարն ա: Մեզ միշտ թվում ա, թե նստած տեղից վեր կենալը հեշտ ա: Էդ էլ ա սխալ: Քա՛նի-քա՛նի անգամ ա եղել, որ փորձել ես վեր կենալ, բայց ալարել ես: Ուժը գալիս ա տրամադրվելուց, կայունություն ստեղծելուց: Էդքանը գիտակցելուց հետո հասկանում ես, որ առջևում շատ աշխատանք կա անելու:

Երկուսով խորը շունչ քաշեցինք, մի քանի րոպե լռությունից հետո Յանան խոսեց.

- Գիտեմ դժվար ա, բայց քեզ պիտի ստիպես տրամադրվել: Հետագայում լավ կլինի, թե վատ՝ արդեն էական չի, որովհետև գործել ա պետք, թե չէ հետո զղջալու ես, որ ոչինչ չես արել: Իհարկե ընթացքում տրամադրությունդ անընդհատ փոփոխվելու ա, բայց քանի նպատակը կա, պետք ա առաջ շարժվել:

- Ի դեպ ասեմ՝ ինչի եմ ատում մեր գործատուների աշխատելաոճը, - մի փոքր շեղվեցի թեմայից ես, - գործատուների մեծ մասը երբեք չի հասկանալու, որ համակարգչի դիմաց գործ անելու համար պարտադիր չի օֆիս գնալ, կամ 9-6-ը փտել: Մյուս կողմից, չգիտես ինչի, օգտագործում են «*մենք մի ընտանիք ենք*» արտահայտությունը, որը իրականում թունավոր միջավայրի ազդանշան ա: Եթե գնում ես աշխատանքի ընդունվելու, ու քեզ հարցազրույցի ժամանակ ասում են, որ իրենք մի ընտանիք են, էլ մի մտածի, միանգամից փախի:

Յանան մի կուշտ ծիծաղեց, վերջին նախադասությունը լսելով, հետո ասաց.

- Էդ «ընտանիքում» շահագործող գործելաոճը անխուսափելի ա:

Զրույցի ընթացքում Յանան գրպանից հանեց սիգարետ ու ինձ էլ առաջարկեց, ես էլ վերցրեցի, թեև չեմ ծխում: Նիկոտինը արագ ազդեց ինձ վրա, նյարդերս ամբողջությամբ թուլացան ու կատարյալ հանգստություն զգացի:

- Ռուսական սիգարետ ա, էստեղի խանութներում չես հանդիպի, - ասաց Յանան՝ նկատելով, որ ծխելուց հաճույք եմ ստանում, - ծխելն առհասարակ սպանում ա, բայց

մեկ ու մեջ հարցնում ես ինքդ քեզ, թե ինչը չի սպանում էս կյանքում: Ի դեպ, արի վերևից նայենք քաղաքի կենտրոնին: Ասում են, որ կյանքը Երևանում եռում ա ժամը 7-ից հետո:

- Բացի էդ էլ Երևանի կենտրոնում տիրում ա ծախսատար կյանք, մարդիկ, իրենց քմահաճույքները կատարելու համար, կաֆեներում զբաղվում են ցուցամոլությամբ: Ոչ ոք չի փորձում իրեն բնական պահել, այլ փորձում են տպավորել էն մարդկանց, ում դուրը չեն գալիս, աշխատում են շատ գումար, որպեսզի ծախսեն աննպատակ բաների վրա, ու ամենակարևորը՝ չեն լինում էնպիսին, ինչպիսին կան, որովհետև գիտեն, որ դա ամենաբարդ դերն ա կյանքում, - նկատեցի, որ սիգարետից բան չմնաց, հանգցրեցի, նետեցի մոտակա աղբամանն ու շարունակեցի, - ի դեպ, չկա ավելի վտանգավոր բան, քան կորցնել անհատականությունը՝ սխալ միջավայր ընկնելու պատճառով: Երբ կորցնում ես անհատականությունդ, դառնում ես ամբոխի զանգված:

Յանան լսում էր, թեթև ժպտալով, հետո ասաց.

- Ինքնահաստատման ժամկետն էլ ա սպառվում: Ես էլ եմ նման բանի միջով անցել, երբ որոշ մարդկանց պահելու համար, ձևանում էի, որ իրենցից մեկն եմ, բայց իրականում հաճույք չէի ստանում անընդհատ դերի մեջ լինելով: Հետո ինչ-որ պահի հասկացա, որ հասարակությունը առողջ չի լինում, երբ ընդունում են միայն իրենց նմաններին, այնինչ բնությունը մարդկանց տարբեր ա ստեղծել:

- Ու ի՞նչ զգացողություններ ունես:

- Երկար ժամանակ ա, ինչ էդ մարդկանց չեմ ասել. «Գնացեք գրողի ծոցը»: Նրանք արդեն տեղ են հասել:

Երկուսով ծիծաղեցինք: Ես էլ մտածեցի՝ ինչ լավա, որ Յանան ի վերջո գիտակցել ա անհատականություն լինելու կարևորությունը:

- Ինչ հաճելի ա, չէ՞, խոսքով սպանել մարդուն:

- Նման զգացողություն երբեք չեմ ունեցել, բայց պատկերացնում եմ, ի վերջո հոգեբանական ցավն ավելի երկար ա տևում, քան ֆիզիկականը: Ասում են, որ հոգեբանական ցավը ենթագիտակցաբար ազդում ա ֆիզիկական ինքնազգացողության վրա: Էնպես որ, եթե դիմացինն արժանի ա ցավի, ուրեմն պետք ա ցավեցնես հոգեպես, ու, ես չեմ հավատում էն թունավոր դրական արտահայտությանը, որ մարդկանց հանդեպ պետք ա լինել բարի, հոգատար, գթասեր, նույնիսկ երբ դրան արժանի չեն: Մարդկանց հանդեպ պետք ա լինել էնպես, ինչպես իրենք են քեզ վերաբերվում:

- Նույնն աշխատանքի վայրում ա, - ասաց Յանան, - ներանձնային կոնֆլիկտների ժամանակ հասկանում ես, եթե ընկել ես տհաճ իրավիճակի մեջ, պետք չի կուլ տալ վիրավորանքը ու պարզապես անցնել դրա միջով: Դու էդպես ցույց ես տալիս, որ քո լավ վերաբերմունքը օդից չի գալիս, այլ դրան պետք ա արժանանալ, բայց...

- Ի՞նչ բայց...

- Էստեղի արժեհամակարգին ու մտածելակերպին էդպես էլ չեմ հարմարվել, ոչ էլ աշխատանքի վայրում եմ կարողանում հարմարվել:

- Եթե աշխատանքի վայրում չսովորես կառավարել ինքդ քեզ, դա կսովորեն անել ուրիշները: Իսկ արժեհամակարգի հետ կապված ասեմ, որ մակերեսային արժեհամակարգը համահունչ ա հասարակության մտածելակերպին: Մարդիկ կիսատ-պռատ տեսակետներ են ինտեգրում իրենց ուղեղների մեջ, անընդհատ իրենք իրենց հակասում են ու վերջում էլ բողոքում, թե չհասկացված են...

- Էլ չեմ ասում, որ համատարած էժանագիները փառաբանվում են, իսկ գիտունները ճնշվում: Ու իշխանության են գալիս էն մտածելակերպի մարդիկ, ովքեր փողոցային լեզվամտածողության տակ են մեծացել, - Յանան միտքս իդեալական եզրափակեց, ապա ասաց, - ի դեպ քեզ հետ շփվելուց մոտս թիթեռնիկներ են արթնանում, տագնապային զգացողություններ չեն լինում:

- Ի՞նչ նկատի ունես , - հարցրեցի ես:

- Դե քեզ հետ հանգիստ եմ զգում, կոմֆորտ, - քողարկված ժպիտով ասաց Յանան,- մեր ժամանակներում շատ քիչ մարդկանց կհանդիպես, ում հետ քեզ կզգաս անկաշկանդ:

- Դե մարդիկ պարզ ու անկեղծ լինելուց վախենում են, դրա համար իրենց հետ չի ստացվում լիովին ազատ զգալ: Բացի այդ, մեր ժամանակներում մարդիկ ավելի շատ նյութապաշտ են դարձել, էլ չեն հետաքրքրվում մարդկանցով: Ամեն երկրորդին ասես մի բան պատմի, կպատմի իր կյանքից, թե ինչ ունի կամ չունի, բայց չի հետաքրքրվի քեզնով, հենց էդտեղից էլ հեռվանում են, էդտեղ էլ թուլանում են կապերը: Իզուր չի էն ասացվածքը, որ *«երկարատև հարաբերությունների իմաստը տալն է, ոչ թե պահանջելը»*: Մարդուն իր էգոցենտրիկ բնավորությունը սպանում ա:

- Դրա համար միայնակությունը մարդուն չի լքում:

- Միայն թե դու չասես, որ դու էլ ես միայնակ, - ժպտալով հարցական նայեցի Յանային:

- Միայնակ եմ, ու միայնակ էլ ապրում եմ: Իսկ գիտե՞ս, որն ա՞ միայնակությունը:

- Ո՞րը:

- Միայնակությունն էն ա, երբ հաստատ գիտես թե ով ա կեղտոտել խոհանոցը:

- Կամ էլ, միայնակությունն էն է, երբ ամբողջ գիշեր խոսում ես ինքդ քեզ հետ ու մնում ես չհասկացված:

- Բայց ավելի լավ է մնալ միայնակ, քան սխալ մարդու հետ,- ասաց Յանան,- Սխալ մարդու հետ ավելի շատ միայնակ կզգաս, քան երբ հենց ֆիզիկապես միայնակ լինես:

- Միանշանակ, - համաձայնվեցի ու ավելացրեցի, - առյուծը երբեք խոտ չի ուտի, նույնիսկ սոված էլ լինի: Երբեք չմնաս էժանագին սուբյեկտների հետ, միայն որովհետև սեռաքաղց ես:

Յանան հասկացավ իմ արտահայտության իմաստն ու իր համաձայնությունը արտահայտեց ձեռքս սեղմելով:

Օրը մթնում էր, կտուրում մեզանից բացի ոչ ոք չէր մնացել, մեր խոսակցությունն այնքան էր կլանել երկուսիս, որ ժամանակի զգացողությունը կորցրել էինք: Յանան նոր սիգարետ վառեց ու ինձ էլ առաջարկեց, բայց այս անգամ չուզեցի.

- Իսկ կոֆե՞,- հարցրեց:

- Լավ տարբերակ ա, չեմ հրաժարվի:

- Ասեմ, որ ալկոհոլ էլ ունենք:

Զարմացած նայեցի իրեն: Ինչպե՞ս կարող էին օֆիսում ալկոհոլ պահել, եթե միայն ոչ ալկոհոլային խմիչքներն են թույլատրվում: Հետաքրքրությունից դրդված՝ էս հարցը տվեցի Յանային.

- Ես ճի՞շտ լսեցի: Ալկոհո՞լ: Ոնց ե՞ն թողնում պահեք: Իսկ ի՞նչ ալկոհոլ ունեք:

- Սպասի, սա արդեն հարցաքննություն դարձավ, - ծիծաղից պոռթկաց Յանան, - ոչ մի թույլտվություն էլ չի եղել, ուղղակի մեր գլխավոր դիզայների ծնունդն էր, նշեցինք, որոշ բաներ դեռ մնացել են: Էս պահին ունենք գինի, լիկյոր, վիսկի, ռոմ և տեկիլա: Ասա, ո՞րը կցանկանաս:

- Էս պահին ռոմ և տեկիլա, բայց ընթացքում վիսկի էլ կուզեմ փորձել:

Յանան աչքով արեց, ու, հանգիստ քայլելով, կտուրից դուրս եկավ: Մի քանի րոպեով ես մենակ մնացի: Չիմանալով ինչով զբաղեցնեմ ինձ՝ ստուգեցի հեռախոսս, սոցիալ հարթակներից մեկում մի մեջբերում գրավեց ուշադրությունս.

«*Անհրաժեշտ է բացառապես այնպիսի հիմարություններ անել, որոնք հաճույք են պատճառում, այլ ոչ թե քաղաքականությամբ զբաղվել: Բայց այնպես է ստացվում, որ կյանքը սիրում է խորամանկել: Երբ մեր ձեռքում են բոլոր խաղաքարտերը, նա պարզապես որոշում է շախմատ խաղալ: Գալիս է մի ստադիա, որ զգում ենք, որ հետաքրքրությունները շատ են, բայց ֆինանսական վիճակը՝ նեղ, ու ստիպված խաղում ենք կյանքի կանոններով՝ ընտրելով այն ուղղությունը, որն ավելի փողաբեր է*»:

Էս ցիտատով կիսվեցի սթորիներում, նույնիսկ պահեցի նոթերի մեջ, որպեսզի հետագայում ներառեմ պատմվածքիս մեջ: Որոշ ժամանակ անց լսեցի քայլեր: Յանան վերադառնում էր, խմիչքները մեծ ամանի մեջ էր տեղավորել, որը դրեց սեղանին: Յանան դեռ կանգնած էր իմ դիմաց, սիրուն կազմված ուներ, նրան նայելով՝ հասկացա,

որ կնոջ ամենասուր զենքերը իր կլորություններն են: Հետո մտքերս հավաքեցի ու շարունակեցի մեր դիալոգը:

- Յանա, հիշեցի, որ մենք ծանոթացել էինք ծանոթությունների հավելվածով, բայց մինչև հիմա հարմար առիթ չեմ գտել քեզ հարցնելու, թե ինչ նպատակով էիր գրանցվել:

- Պրովոկացիոն հարցեր տալու ժամանակը եկա՞վ, - ժպտալով հարցրեց Յանան:

- Չէ, զուտ հետաքրքիր ա: Իմ դեպքում էնպես էր ստացվել, որ պարապությունից էի գրանցվել, բայց հետո հասկացա, որ արժի ուսումնասիրել էնտեղ կատարվող դեպքերը: Հասցրել եմ լիքը պատմություններ լսել, նույնիսկ էնպիսի պատմություններ, որոնք լսելուց սառնության ու սարսափի պաղ ալիք կզգայիր մաշկիդ վրա, - ասացի ես:

Յանան մի բաժակ տեկիլան միանգամից դատարկեց ու նոր սիգարետ վառեց, ապա ասաց.

- Ծանոթության կայքերից օգտվելը, շատ դեպքերում, բերում ա թունավոր իրավիճակների: Չգիտեմ որտեղից սկսեմ, բացի սեփական փորձից, որոշ պատմություններ էլ եմ լսել մտերիմ մարդկանցից, որոնք ինչքան էլ փորձում ես հասկանալ, չի ստացվում: Անձամբ ես գրանցվել էի հարաբերություններ սկսելու նպատակով, որովհետև միշտ մտածել եմ, որ եթե չկա էն մարդը, ում հետ կուզեի լինել, ուրեմն թող լինի ինչ-որ մեկը...կարևոր չի, կարևորը մենակ չմնալն ա մինչև էն պահը, երբ առյուծի մեջբերումն արտահայտեցիր: Ի դեպ, ասեմ, որ ձախողված հարաբերությունները չպետք ա քո վրա «խազ թողնեն», չպետք ա սահմանափակեն էն մտքով, որ դու դատապարտված ես միայնակության: Ես հանդիպել եմ մեկին, ում հետ երկու տարուց ավել հարաբերությունների մեջ էի, բայց...ինքը ինձ թողեց մի հրեա կնոջ համար: Ու ամենահետաքրքիրն էն ա, որ այդ կինը 70-անց էր ու շատ հարուստ, դե հիմա պատկերացրու, - սիգարետը հանգցնելով՝ ասաց Յանան:

Ես չկարողացա թաքցնել ժպիտս:

- Damn[4], - բացականչեցի, իսկ Յանան շարունակեց,

- Չես հավատա, թե ոնց էր հանդիպել էդ կնոջը...նույն ծանոթությունների հավելվածի միջոցով, ինչ իմ հետ էր ծանոթացել: Հետո ասում են, որ կանայք են փողի հետևից ընկած, բա՞ տղաները:

- Երկակի ստանդարտների դարում ենք ապրում, ես չեմ կարծում մի սեռը մյուսից լավն ա: Էսպես ասեմ՝ փող ունենալը լավ բան ա, մանավանդ, երբ հաշվեհամարիդ գումարը ծնողներդ տարիներով ավելացնում են, եթե նրանք չեն կարողանում գոնե սիրածները անեն:

Երկուսով ծիծաղեցինք, ապա Յանան ասաց.

- Մեր բախտը չի բերել, որ նման ծնողներ չունենք:

- Կամ սիրածներ: Չնայած գիտե՞ս ինչ: Մի օր էլ մեր բախտը կարող ա բերի, sugar մեկին կհանդիպենք: Sugar mommy, I need money[5]. Իսկ դրա համար, որ ասի ինձ համար հաչա, կհաչաս, չէ՞:

Լիաթոք ծիծաղեցինք: Քիչ հանդարտվելուց հետո Յանան շարունակեց.

- Իմ պատմությունը մի կողմ դնենք, քեզ պատմեմ, որոշ պատմություններ, որոնք լսել եմ մոտիկ մարդկանցից, ովքեր նույնպես ծանոթությունների կայքերում են գրանցված եղել: Էսպես, կուրսեցիս ուշադրության պակասի հետևանքով, հանդիպում ա ամեն մի պատահած տղայի հետ, ով իրեն «հավանել» ա, մեկ այլ կուրսեցի էլ ունեմ, որ սիրունիկ ա, բայց գեր ա, չնայած, ի տարբերություն առաջին կուրսեցուս, ունենում ա մեկանգամյա գիշերներ: Ու էդ երկուսից ավելի շատ ամուսնության առաջարկներ ստանում ա հենց մեկանգամյա գիշերներ ունեցողը: Մեր օֆիսից ճանաչում եմ մի կնոջ, ով ամուսնացել էր, երեխա էր ունեցել, բայց վերջում պարզել էր, որ ամուսինը գեյ էր ու իրա հետ ամուսնացել էր դա ծնողներից թաքցնելու համար: Չնայած, էդ ամենը իմանալուց հետո, կինը աջակցեց ամուսնուն, ընդունեց նրան էնպիսին, ինչպիսին կա, ու ամուսնալուծությունից հետո մտերիմ ընկերներ մնացին:

- Վստահ եմ, հանդիպած կլինես մարդկանց, ովքեր ծանոթությունների կայքերում ամուսնանալու նպատակով են գրանցվում, կան նաև էնպիսիններ, որ ադրենալին, ինչի չէ նաև դավաճանություններ են փնտրում: Ժամանակին ճանաչում էի մի կնոջ, ով ամուսնացած էր, ուներ երեխա, բայց իր պատմելով, միանգամից երկու սիրեկան ուներ, ամուսինն էլ անտեղյակ էր: Ինքը դրանից լավ էր զգում մինչև էն պահը, երբ իրեն հարցրեցի. «Չե՞ս մտածել էն ուղղությամբ, որ ամուսինդ էլ սիրուհիներ ունի, ու տեղյակ ա, որ դու իրեն դավաճանում ես, ուղղակի իրեն հետաքրքիր չի», - այդ ասելուց, մի փոքր պաուզա տվեցի, որ ինտրիգան երկար պահեմ, իսկ Յանան հետաքրքրված սպասում էր՝ ինչ էի ասելու, - Իմ հարցի շուրջ մտածելուց նա արտասվեց, էն էլ ժամերով: «Ամուսինս ինձ հաստատ դավաճանում ա» լոզունգն էր ճակատին կպցրել ու արտասվում էր: Էստեղ հանդիպեցի երկակի ստանդարտների վառ օրինակի: Ամեն մեկն իր խելքից ա տուժվում, ինչպես ասում են:

- Մարդիկ հետաքրքիր են, չէ՞,- հարցրեց Յանան:

- Ինձ ավելի շատ հետաքրքրում են մարդկանց պատմությունները, քան հենց մարդիկ, - հետևեց իմ պատասխանը:

- Հոգեբանությունը, նեյրոլոգիան, մարդկանց վարքագծի վերլուծությունները, - ավելացրեց Յանան:

- Ճիշտ էդպես: Ի դեպ, մարդկանց ուսումնասիրելուց հասկացել եմ, որ, նրանց հաճախ նորություն ա պետք: Մենք տեսնում ենք, թե ինչպես են «լոքշ» զույգերը բաժանվում, որովհետև իրենց կյանքում դրամա չկա, իսկ անառողջ հարաբերություններում գտնվող մարդիկ տարիներով միասին են մնում, քանի որ ֆիլմ չեն դիտում, այլ ֆիլմ են ստեղծում:

Ռեժիսորը հնարավոր ա փոխվի, բայց դերասանները միշտ մնում են նույն դերում: Հիմա մենք ապրում ենք մի դարում, որտեղ ոչ մի դոգմա չկա: Չկա կարծիք, թե ուշ ա քեզ համար մի բան ստեղծել, նոր հարաբերություններ սկսել, առավել ևս ուշ ա քեզ համար նոր բան փորձել: Չկա էդպիսի բան, քանի որ հնարավորությունները ամենուրեք բաց են յուրաքանչյուրի համար:

- Բայց, երբ էդ հնարավորությունները ստեղծում ենք ու հասնում կարևոր կետին՝ պահել ու զարգացնել, գնալով դժվար ա դառնում, - ասաց Յանան, ես էլ գլխով հաստատեցի:

Մութն ընկել է, բայց կտուրը լուսավորված էր, մի պահ նկատեցի էն անվտանգության աշխատակցին, ում տեսել էի մինչև բարձրանալը: Վիսկիից հետո մտածում էի, ռոմ ու տեկիլա փորձել, բայց հետո հասկացա, որ պետք չի խառնել ու փոխարենը բաժակիս մեջ նորից լցրեցի վիսկի: Ինձ դուր էր գալիս անջատվելու պահը, Յանան էլ էր իմ օրին, մենք իրար երկար նայում էինք ու քմծիծաղ տալիս՝ հասկանալով, որ իրոք «մեռած» վիճակում ենք:

- Յանա, - մի կերպ ինձ հավաքելով՝ հարցրեցի, - իսկ ծանոթությունների կայքում գրանցվելը քեզ ինչ-որ օգուտ տվե՞ց:

- Էսպես ասեմ, մնացածը դու կարող ես գուշակել: Դու էլ գիտես, որ մենք, որպես սոցիումի մասնիկներ, միայնակ չենք կարող լինել: Ես ունեմ կարիերա, ունեմ անկախություն, բայց բավականաչափ լիարժեք չեմ զգում: Որոշում եմ հարաբերությունների մեջ լինել, բայց միանգամից գալիս են դժվարությունները, մյուս կողմից պատասխանատվությունը:

- Կյանքը տեղով դժվարություններ է առաջացնում, որոնք շատ դեպքերում չես կարողանում հաղթահարել, անընդհատ պայքարի մեջ ես լինում: Պատկերացրու, երբ մեր ձեռքում են բոլոր խաղաքարտերը, կյանքը որոշում ա շախմատ խաղալ, - հարբած փիլիսոփայեցի ես:

Յանան ժպիտով նայեց ինձ ու շարունակեց.

- Կա նման բան: Կառուցողական հարաբերություններ հաստատելու համար, ես հասկացել եմ, պետք չի լինել պահանջատեր: Չնայած, ժամանակի ընթացքում հասկանում ես, որ ծանոթության կայքերը պարզապես իլուզիա են: Թվում ա, որ արագ կստանաս էն, ինչ ուզում ես, բայց ունենում ես տարբեր փորձեր ու հասկանում, որ ոչինչ արագ չի լինում, ոչինչ միանգամից չի տրվում: Իմ փորձառությունն ինձ օգնում ա հասկանալ, որ ամեն ինչ հնարավոր ա, եթե ճիշտ օգտագործեմ իմ ձեռքի տակ եղած գործիքները, բայց մյուս կողմից հարաբերությունները նենց բան են, որ միակողմանի ոչինչ չես կարող անել, այնինչ ծանոթության կայքերը փորձում են հակառակը համոզել:

- Հավելվածներ ստեղծելու վրա բազմաթիվ մարդիկ են աշխատում, որոնց միակ նպատակը շահույթ ստանալն ա: Շատ վերլուծություններ կան, գրված հոգեբանների կողմից, որ զգուշացնում են նման հավելվածների վատ կողմերի մասին:

- Կարդացել եմ, ու ճիշտ են ասում: Իրականում, դժվար ա հասկանալ որևէ բան, մինչև դրա միջով չանցնես: Անկեղծ ասած, ես հիմա էլ եմ հարաբերություններ փնտրում, բայց արդեն ոչ ծանոթությունների կայքերի միջոցով: Ի դեպ, դու վերջին մարդն ես, ում հետ ծանոթացա էդ հավելվածով:

- Հաճելի ա լսել, - ժպտացի ես, - իսկ ես, դե գիտես, դեռ օգտվում եմ էդ հավելվածից, նոր պատմություններ լսելու նպատակով:

- Միայն պատմություններ լսելու՞, - քողարկված ժպիտով հարցրեց Յանան:

- Դե ոչ միայն, բացառություններ լինում են, - անկեղծացա ես, - բայց նախընտրում եմ չխոսել դրա մասին:

- Ոնց կամենաս, բայց էդքանը ինձ բավարար էր քեզ ճանաչելու ու հասկանալու համար, թե ինչ նպատակ ես հետապնդում:

- Մի հարմար օր կգտնենք դրա համար, ես լիովին բաց կլինեմ քո առջև, կպատասխանեմ ցանկացած հարցի:

- Հանձնվեցի՞ր:

- Ոչ, իհարկե, պարզապես հարբած եմ, ու ուղեղս մթագնած ա:

Ես չէի չափազանցնում, իրոք հարբած էի, աչքերս փակվում էին...

....

Չգիտեմ ինչքան ժամանակ անցավ, արթնացա զգալով, որ ուսս թափահարում են, դժվարությամբ բացեցի աչքերս ու տեսա անվտանգության աշխատակցին: Օրը բացվել էր, նայեցի ձեռքիս ժամացույցին՝ ժամը 9:27 էր: Յանան կողքիս չէր, որոշեցի հաղորդագրություն ուղարկել նրան, բայց անվտանգության աշխատակիցը ընդհատեց.

- Գիշերը մտածում էի Ձեզ քնից հանել, բայց հետո հասկացա, որ հարբած վիճակում դժվար թե կարողանայիք նորմալ տուն հասնել:

- Ճիշտ եք հասկացել, ես երևի թե դուրսը կքնեի - մի կերպ չորացած բերանով ասացի ես, - շնորհակալ եմ Ձեզ, որ էստեղ մնալուս մեջ խնդիր չտեսաք:

- Հիմա արդեն խնդիր ա, ժամը 10-ից աշխատանքային օրը սկսվում ա, ու կտուրը պիտի ազատվի:

- Իհարկե, հիմա դուրս կգամ:

Մինչև դուրս գալս, ստուգեցի արդյոք որևէ բան չեմ մոռացել: Սեղանը, որի շուրջ նստած էինք գիշերը, մաքուր էր, շշերն ու բաժակները հավաքել էին: Ստացվում է, որ ես ավելի շատ էի հարբել, քան Յանան, որը դեռ ֆիզիկապես ի վիճակի էր եղել հավաքելու այդ ամենը: Հիշեցի, որ պիտի գրեի նրան: Սպասելով վերելակին՝ ստուգեցի հեռախոսս ու

տեսա, որ Յանայից նամակ եմ ստացել գիշերվա 2-ին: Ես չէի հիշում, ինչպես եմ քնել ու երբ է Յանան գնացել տուն: Նամակում առաջարկում էր մյուս հանդիպումն էնպես կազմակերպել, որ նման իրավիճակում չհայտնվեմ: Ծիծաղի էմոձիներ ուղարկեցի ու գրեցի, որ ների ինձ: Պայմանավորվեցինք մոտակա ժամանակներս նորից հանդիպել:

Նստեցի վերելակն ու դուրս եկա տարածքից:

Ականջակալներս դնելով՝ միացրեցի իմ սիրած գործերից մեկը ու քայլերս ուղղեցի դեպի մոտակա կաֆեն, որտեղ մի բաժակ կոֆեյի շուրջ կշարունակեի գրել պատմվածքս:

Վերամիավորում լճի ափին

Միքայելը, ով փիլիսոփայության դասախոս էր, վերջերս էր տեղափոխվել Բերգամոյից Կոմո: Նա միշտ երազել էր ապրել լճի ափին, և հիմա, շնորհիվ իր կնոջ կողմից ստացված ժառանգության, այդ երազանքը իրականություն էր դարձել հնադարյան մի վիլլայի տեսքով: Տան մեջ զգացվում էր քարի, փայտի և ժամանակի հոտը:

Նա որոշեց հրավիրել իր հին ընկերներին, որոնց ավելի քան հինգ տարի չէր տեսել: Սկզբում զանգահարեց Ռենեին: Հետո՝ Իդային: Վերջում էլ՝ Էնցոյին: Առաջարկեց հանդիպել, ընթրել, զրուցել, հիշել հին օրերը:

Հանդիպման օրն եկավ:

Աղախինն առաջինը դուռը բացեց Ռենեի առջև:

- Ինչպե՞ս ես, իմ բարեկամ, - հարցրեց Միքայելը՝ գրկելով նրան:

- Քաղաքականությունն ասում է՝ լավ եմ: Կյանքը՝ որ դեռ ժամանակ ունեմ լավ լինելու, - պատասխանեց Ռենեն ժպտալով:

Նա դասական կոստյում էր հագել: Կապուտաչյա, սևահեր, կտրուկ, ինչպես միշտ: Փաստաբան և քաղաքական գործիչ: Միքայելը նրան ներս հրավիրեց:

- Ներս արի: Իդան ու Էնցոն դեռ ճանապարհին են:

Որոշ ժամանակ անց բիզնես դասի տաքսի կանգնեց դարպասների մոտ: Էնցոն ու Իդան դուրս եկան:

- Ինչպես միշտ՝ Ռենեն շուտ է եկել, - ասաց Էնցոն՝ ուղղելով իր վզկապը:

- Կամ էլ՝ Միքայելին կաշառել է, որ առաջինը գա, - ժպտաց Իդան:

Միքայելը մոտեցավ նրանց: Գրկախառնվեցին: Սպասվածից մի փոքր ավելի պինդ և երկար:

Իդան ավստրիացի վիրաբույժ էր, աշխատում էր Մյունխենում: Էնցոն շվեյցարացի էր, ով ուներ իր շոկոլադի բիզնեսը Լյուցեռնում: Տարբեր կյանքեր: Ընդհանուր հիշողություններ: Ժամանակին՝ ուսանողներ Վիեննայում: Ժամանակին՝ անբաժան:

Տան ներսում Միքայելը նրանց համար կարճ շրջայց կազմակերպեց: Լիճը շողշողում էր բարձր պատուհանների հետևում:

Շրջայցի ավարտից հետո նստեցին սեղանի շուրջ:

- Դե պատմի, - սկսեց Ռենեն, - ինչպե՞ս մտածեցիր այս հավաքույթի մասին, Միքայել:

- Հետաքրքիր էր, թե ինչպես են ձեր կարիերաները զարգացել: Բոլորդ ինչ-որ բանի հասել եք:

Ընթրիքը մատուցեցին: Արծաթե կափարիչները հանեցին: Գոլորշին օդ բարձրացավ:

- Հետաքրքիր է՝ ինչքա՞ն ես վճարում այս ամենի համար, - հարցրեց Իդան:

- Կինս է վճարում: Նա է հարուստը, - պատասխանեց Միքայելը:

- Կյանքն արժե ապրել այնպես, ինչպես Միքայելն է ապրում, - կենաց բարձրացրեց Ռենեն: Գավաթները զրնգացին:

Սկսեցին ուտել:

- Ռենե, - հարցրեց Միքայելը, - քաղաքական կարիերադ ինչպե՞ս է ընթանում:

- Դու մեծ դեր ունեցար դրա մեկնարկի գործում, - ասաց Ռենեն, - Մեր կուսակցությունը չորս տարի առաջ ոչինչ էր: Հիմա մենք երկիր ենք ղեկավարում:

Միքայելը հանկարծակի վեր կացավ ու պահարանի դարակից հանեց թերթերի մի կապոց:

- Կարելի է և այդպես ասել, - ասաց նա, - Բայց խոսենք փաստերով:

Ու թերթերը գցեց սեղանին:

- Ընտրական հանձնաժողովը գրանցել է քվեների կեղծում: Նախկին մի պաշտոնյա խոստովանել է, որ գումար է ստացել՝ քվեների քանակը մեծացնելու համար: Թերթերը դա անվանում են՝ «Ուոթերգեյթ՝ բյուջետային տարբերակ»: Ծանո՞թ է հնչում:

Լռություն: Այնպիսի լռություն, որ փոխում է սենյակի մթնոլորտը:

Վերջապես Ռենեն խոսեց.

- Ոչ մի քաղաքական գործիչ արդար հաղթանակ չի ունենում: Մենք մեր սեփական թշնամիներն ենք: Եթե չափազանց շատ խնդիրներ լուծես՝ ոչ ոք քո կարիքը չի զգա: Խաղն է այդպիսին:

- Եթե դեղագործական ընկերությունները քո հիվանդությունը բուժեին, կսնանկանային, - ավելացրեց Միքայելը, - Եթե բանկերը քեզ պարտքերից դուրս բերեին, հաճախորդ կկորցնեին:

- Միանշանակ: Կյանքում այնքան բան կեղծ է, - ասաց Ռենեն:

Իդան միացավ զրույցին.

- Ռենե, քաղաքականությունը թողնում է հետքեր: Դու մարդկանց կյանքեր ես քանդում ստերով ու խոստումներով: Գիտես, որ պարտքը միշտ վերադառնում է՝ տոկոսներով, - ասաց նա:

- Ես կեղծ խոստումներ չեմ տվել, - պաշտպանվեց Ռենեն:

- Բայց դու դրանցից օգուտ ես քաղել, չէ՞ - ավելացրեց Էնցոն իր կողմից:

- Իսկ դո՞ւ, Էնցո, - շրջվեց դեպի նրան Ռենեն, - Խոստովանելու բան չունե՞ս:

- Ի՞նչ ես ակնարկում, - խոժոռվեց Էնցոն:

Միքայելը ընդհատեց:

- Բոլորս էլ պետք է կիսվենք: Ռենեն միակը չէ, ով անցյալ ունի:

Աղախինները եկան սեղանը հավաքելու: Ուտելիքին գրեթե չէին դիպչել:

Միքայելը կարգադրեց.

- Կարող եք մատուցել աղանդերը, մենք կսպասենք:

Ռենեն, դեռ նայելով Էնցոյին, խախտեց լռությունը.

- Դու գիտես, թե ինչի մասին եմ խոսում:

Իդան ու Միքայելը առաջ թեքվեցին:

Էնցոն խորը շունչ քաշեց.

- Որտեղի՞ց քեզ այդ տեղեկատվությունը:

- Պաշտոնական տվյալների բազաներին հասանելիություն ունեմ: Ցուցակում քո անունը գտա:

- Ի՞նչ ցուցակի մասին ես խոսում, - հարցրեց Իդան:

Միքայելը նայեց ուղիղ Իդայի աչքերի մեջ:

- Իդա, գուցե դու լավ վիրաբույժ ես: Բայց բացառված չէ, որ ժամանակին կյանք ես խլել ու պատասխանատվությունից խուսափել:

Նորից լռություն տիրեց: Այս անգամ ավելի ծանր:

Աղանդերը բերեցին: Դանդաղ, մեծ հանդիսավորությամբ մատուցեցին հյուրերին, բայց ոչ ոք ուշադրություն չդարձրեց ախորժաբեր խմորեղենին:

Ռենեն առաջ թեքվեց.

- Միքայել, ի վերջո, այս հավաքն ինչի՞ մասին է:

Միքայելը պատասխանեց առանց տատանվելու.

- Ճշմարտության: Ահա թե ինչի մասին է:

Էնցոն քմծիծաղ տվեց.

- Դու նկատի ունես սկանդալի՞: Մի ձևացրու, Սոկրատես: Դու պարզապես դրամա էիր ուզում սարքել:

Միքայելը նույնիսկ աչքը չթարթեց.

- Ես թափանցիկություն էի ուզում: Մտածում էի, արդեն բավականին մեծացել ենք՝ դրա համար: Ռենե, քո կուսակցությունը մաքուր չի հաղթել:

Ռենեն բարձրացրեց իր գավաթը, բայց չխմեց.

- Եվ դու կարծում ես՝ ես հպարտանու՞մ եմ դրանով: Քաղաքականությունը հպարտության մասին չէ: Այն գոյատևման համար պայքար է:

- Միևնույն է, դա ճիշտ չէ, - սառնորեն ասաց Իդան:

Միքայելը նայեց Էնցոյին.

- Էնցո, քո ընկերության անունը հայտնվել է մի քանի կասկածելի գործարքների մեջ: Պատահական չէ, որ քո շոկոլադի ինքնարժեքն այդքան ցածր է:

Էնցոյի դեմքը ձգվեց.

- Հեշտ է մեղադրել, դժվար է ապացուցել:

- Ես փաստաթղթեր ունեմ, - հանգիստ պատասխանեց Միքայելը:

- Այդ դեպքում վառի՛ր դրանք: Ընկերությունը դատարան չէ:

Իդան խոսեց՝ լարված բարձր ձայնով:

- Ու հենց այդ պատճառով, Էնցո, եթե սա դատավարություն լիներ, դու շատ լավ փաստաբանի կարիք կունենայիր:

Ռենեն թեթև ժպտաց.

- Կարող եմ լինել քո փաստաբանը, Էնցո: Բայց նույնիսկ ես չեմ հավատում քո անմեղությանը:

Նորից լռություն: Այնպիսի լռություն, որից սիրտդ սեղմվում է կրծքիդ մեջ:

Էնցոն շրջվեց դեպի Իդան.

- Իսկ դո՞ւ: Հիվանդանոցի սկանդալը... Դու դեռ ձևացնում ես, թե ձեռքերդ մաքո՞ւր են:

- Ես հարյուրավոր կյանքեր եմ փրկել, - շշնջաց նա՝ ցասումով:

- Բայց մեկը՝ չէ:

Միքայելը մեղմորեն միջամտեց.

- Ընտանիքին գումար է վճարվել: Առանց ավելորդ աղմուկի, բայց ոչ այնքան անաղմուկ, որքան պետք էր:

Իդան վեր կացավ՝ զայրույթից դողալով.

- Դու պլանավորել էիր այս ամենը: Դու ուզում էիր բոլորիս մերկացնել:

Միքայելը նստած մնաց.

- Ես ուզում էի հիշենք՝ ովքեր ենք իրականում:

Իդան թեքվեց դեպի նրան՝ նայելով կկոցած աչքերով:

- Այս ամրոցը քեզ չի փոխել, Միքայել: Այն պարզապես քեզ առիթ է տվել՝ մեզ վերևից ներքև նայելու համար:

Վերջապես Ռենեն խոսեց.

- Ուրեմն եկեք ընդունենք: Ոչ մեկս էլ անմեղ չենք: Միգուցե հենց դա է մեր խումբը իրական դարձնում:

Աղանդերը դեռ մնում էր սեղանին՝ ձեռք չտրված:

Միքայելը ետ թեքվեց, ձեռքերը խաչած, հայացքը՝ սեղանի կենտրոնում դրված մոմի թրթռացող կրակին.

- Եկեք շարունակենք: Եթե սկսել ենք՝ կես ճանապարհին կանգ չառնենք:

Իդան նորից նստեց՝ չնայելով ոչ մեկին:

- Ես նրան չեմ սպանել: Դա սխալ ախտորոշում էր: Ու ոչ իմ կողմից: Բայց ես էի ստորագրել:

Էնցոն գլուխը տարուբեցրեց:

- Դա նույնն է, ինչ մեկ ուրիշը հրացանը բռնի, իսկ դու ինքնաձիգը քաշես:

- Գլխիս քարոզ մի կարդա, - կտրուկ պատասխանեց նա,- Գանայում աշխատողներդ հիմա անվտանգության սարքավորումներ ունե՞ն, թե դեռ միայն ձեռնոցներ ու մի շիշ ջուր:

Էնցոյի ծնոտը երկարեց.

- Դու կարծում ես՝ բիզնեսն ինքը իրե՞ն է աշխատում: Պետք է ընտրություն կատարես՝ շահույթի և կատարելության միջև: Եվ երբեմն ընտրում ես շահույթը:

Ռենեն բարձրացրեց իր բաժակը, բայց չխմեց.

- Ուրեմն բոլորս ինչ-որ բան ենք փոխանակել: Անկեղծությունը փառասիրության դիմաց: Բարոյականությունը՝ արդյունքի: Ընկերներին՝ լռության:

Միքայելը նայեց նրան.

- Իսկ դու ի՞նչ ես փոխանակել, Ռենե:

- Հավատարմությունը, - պատասխանեց Ռենեն՝ գրեթե շշնջալով:

- Ու՞մ հանդեպ:

- Ինքս իմ, - պատասխանեց նա:

Մի պահ բոլորը լռեցին: Միակ ձայնը լճից փչող քամու մեղմ թակոցն էր պատուհաններին:

Վերջապես Միքայելը խախտեց լռությունը:

- Դուք բոլորդ ինձ դատեցիք, երբ այս տունը գնեցի: Երբ թողեցի գիտական կարիերան: Բայց ես չեմ փախել: Ես պարզապես ուզում էի աշխարհին նայել մի տեղից, որը չի հոտել կեղծավորությամբ:

Իդան դառնորեն ծիծաղեց.

- Դու կարծում ես՝ այս վայրը մաքո՞ւր է: Սա պալատ է՝ կառուցված կնոջդ փողերի վրա: Եվ նրա լռության:

- Նա ամեն ինչ գիտի, - ասաց Միքայելը:

- Ուրեմն Միքայելն էլ մեր պես մեղավոր է, - պատասխանեց Իդան:

Էնցոն թեքվեց առաջ.

- Իսկ հիմա՞ ինչ: Պիտի խոստովանե՞նք: Ապաշխարե՞նք: Թե՞ գրկախառնվենք ու ավարտենք:

- Ոչ, - ասաց Միքայելը,- Պետք է միայն լսեք ինքներդ ձեզ:

Ռենեն գլխով արեց:

- Նա ճիշտ է: Մենք կառուցել ենք կյանքեր, որ դրսից լավ են երևում: Բայց ներսի՞ց: Դրանք փտում են:

Միքայելը մի կողմ հրեց իր ափսեն:

- Ոմանք ավելի լուռ են փտում, քան մյուսները:

Աղախինը մի պահ ներս մտավ՝ դատարկ ափսեները հավաքելու, բայց բոլորը դեռ լիքն էին: Նա լուռ հեռացավ:

Միքայելը կանգնեց:

- Երեկոն ավարտված է: Կարող եք մնալ կամ գնալ: Բայց լավ իմացեք. մենք այլևս այն մարդիկ չենք, ինչ Վիեննայում եղած ժամանակ:

Իդան էլ վեր կացավ.

- Եվ այլևս երբեք չենք լինի:

Լռությունը կախվել էր նրանց միջև՝ ինչպես խիտ ծուխը: Բոլորը վեր կացան՝ շարժումները ավելի դանդաղ, քան սովորաբար, կարծես խոսակցության ծանրությունը դեռ ազդում էր մարմինների վրա:

- Ես կքայլեմ մի քիչ, - ասաց Միքայելը՝ ավելի մեղմ ձայնով: Սովորական էներգիան խոսքից անհետացել էր, փոխարինվելով ինչ-որ ավելի ծանր բանով: Նա շրջվեց դեպի պատշգամբ տանող դուռը:

Ռենեն նայեց նրան, ապա մյուսներին, խոր շունչ քաշեց.

- Գիտե՞ք, մտածում էի՝ այս հավաքը այլ կլինի: Բայց հիմա հասկանում եմ՝ մենք այստեղ եկել ենք ոչ թե վերամիավորվելու, այլ թաղելու այն ամենը, ինչ վաղուց թաքցրել ենք:

Էնցոն աթոռը ետ հրեց՝ բարձր ճռռոցով:

- Ես՝ ոչ: Ես ոչինչ չեմ թաքցրել: Ես ամաչելու բան չունեմ: Ես ինչ-որ բան եմ ստեղծել: Դա ինձանից չես խլի:

Իդան, մեջքով կանգնած, խոսեց՝ առանց նրան նայելու.

- Խոսքն ամոթի մասին չէ: Դա այն գնի մասին է, որը պատրաստ ես վճարել հաջողության համար:

Էնցոն չպատասխանեց: Նա պարզապես թողեց, որ Իդայի խոսքերը կախված մնան օդում: Նա չգիտեր՝ ինչպես արձագանքել մի բանին, որն ինքն էլ չէր հասկանում: Նա չափից դուրս սովոր էր արդարացնել իր գործողություններն ինքն իր առջև:

Ռենեն մի քանի քայլ առաջ արեց դեպի Միքայելի աթոռը՝ զննելով սենյակը, կարծես փորձում էր հասկանալ մի բան, որը մինչ այժմ չէր կարողացել ընկալել:

- Կարծում եմ՝ մենք բոլորս մեկ ընդհանրություն ունենք, - ասաց նա, - Մենք չենք ուզում ընդունել այն փաստը, որ ամեն ինչ, ինչ որ կառուցել ենք, կառուցված է ստի վրա:

Միքայելը դուրս եկավ պատշգամբ՝ մտազբաղ շնչելով սառը գիշերային օդը: Կոմոյի երկնքում աստղերն այդ գիշեր ավելի սառն էին թվում, ավելի հեռու, ինչպես ամեն ինչը: Նա լսեց կամաց քայլեր իր հետևում, բայց ետ չնայեց:

- Ջգույշ ընտրիր խոսքերդ, - Ռենեի ձայնը լսվեց հետևից,- Դու չես ուզում տպավորություն թողնել, ասես հույսդ կորցրել ես:

Միքայելը դեռ չէր թեքվել:

- Հույսս չեմ կորցրել: Պարզապես, հիմա ամեն ինչ ավելի հստակ եմ տեսնում:

Երկար դադար տիրեց, ապա Ռենեն նորից խոսեց՝ այս անգամ ավելի մեղմ:

- Մտածում էի՝ դու վերջինը կլինես, ով նման բան կասեր: Ի՞նչ եղավ իդեալիստին:

- Իդեալիստը մահացավ քաղաքականության ու շահույթի արանքում, - մրմնջաց Միքայելը՝ աչքերը գամած լճի վրա փայլող լուսնի շողերին:

Ռենեն հենվեց դռան շրջանակին՝ հետևելով նրան:

- Այդ դեպքում ինչու՞ ես շարունակում: Եթե ամեն ինչ սուտ է, ապա ո՞րն է իմաստը:

Միքայելը չնայեց նրան, բայց ձայնը մեղմացավ:

- Քանի որ ես դեռ հավատում եմ փոփոխության հնարավորությանը: Գուցե ոչ իմ մեջ, բայց ուրիշների: Աշխարհի մեջ:

Ռենեն գլուխը տարուբերեց:

- Աշխարհը մեզ նման մարդկանց վրա է կառուցված: Դա փոխել հնարավոր չէ:

Միքայելը վերջապես շրջվեց դեպի նրան՝ տխուր ժպիտը շուրթերին:

- Կարծում եմ՝ դա ամենացինիկ բանն էր, որ երբևէ քեզնից լսել եմ:

Ռենեի հայացքը մի փոքր փափկեց, թեև կարծր եզրերը մնացին:

- Միգուցե: Բայց երբեմն՝ դա է ճշմարտությունը:

Միքայելը շունչ քաշեց, ապա ձեռքով ցույց տվեց դուռը:

- Դրսում ցուրտ է: Գնանք ներս:

Դեպի տան տաքությունը քայլելու ընթացքում, լարվածությունը դեռ զգացվում էր՝ շոշափելի էր, բայց գոնե նրանք քայլում էին նույն ուղղությամբ՝ այլևս խրված չլինելով հին վերքերի ճահճում:

Տան ներսում մթնոլորտը լարված էր, բայց կառավարելի: Վերևում կախված ճրագի տաք լույսը կարծես մեղմացնում էր օդում կուտակված լարվածությունը: Խումբը նորից հավաքվել էր սեղանի շուրջ, բայց նախկին հարմարավետությունը փոխարինվել էր ինչ-որ տարօրինակ, անարտահայտելի սառնությամբ: Ոչ ոք չէր իմանում՝ ինչից սկսել:

Միքայելը վերադարձավ իր տեղը՝ հայացքով արագ շրջանցելով խմբին: Նրա աչքերում մի պահ հապաղում զգացվեց, բայց շուտով անհետացավ:

- Ի՞նչ ենք անելու հիմա, - հարցրեց նա՝ հանդարտ, բայց մի փոքր հիասթափված երանգով:

Իդան՝ միշտ ուղիղ ու կտրուկ, առաջինը խոսեց:

- Ճշմարտությունն այն է, որ մեզանից ոչ ոք մաքուր չէ: Կարծում եմ՝ հիմա արդեն բոլորս դա գիտենք: Նա մի պահ կանգ առավ՝ թողնելով, որ իր խոսքերի ծանրությունը հասնի բոլորին, - Տարբերությունն այն է, որ ոմանք ավելի լավ են ձևացնում, քան մյուսները:

Էնցոյի դեմքին ծամածռված ժպիտ հայտնվեց՝ զվարճանքի ու դառնության խառնուրդ:

- Ձևացնե՞լ: Ոչ, ես չեմ ձևացնում: Ես անում եմ այն, ինչ անում եմ, որովհետև դա աշխատում է: Իսկ այն, որ դուք բոլորդ շարունակում եք ձևացնել, թե դա հանցանք է, միայն ապացուցում է՝ դուք չեք հասկանում՝ ինչ է նշանակում այս աշխարհում գոյատևել:

Իդան գլուխը տարուբերեց՝ հայացքը պողպատյա, անսասան:

- Գոյատևումը դավաճանության արդարացում չէ, Էնցո: Դու տարիներ ես անցկացրել՝ կայսրությունդ կառուցելով ուրիշների հաշվին: Մի ձևացրու, թե ինչ-որ հերոս ես:

Էնցոն թեքվեց առաջ՝ աչքերը նեղացնելով:

- Իսկ դու ի՞նչ կասես քո մասին, Իդա: Քանի՞ կյանքի հետ ես խաղացել՝ մտածելով, թե կարող ես ուղղել ամեն ինչ: Դու վիրաբույժ ես, ոչ՝ աստված:

Իդայի ծնոտը ձգվեց, բայց նա մնաց անսասան:

- Ես քիչ առաջ ասացի, ես կյանքեր եմ փրկում, Է՛նցո: Չեմ ոչնչացնում: Դա է տարբերությունը:

Միքայելը հետևում էր նրանց՝ առանց որևէ արտահայտության, բայց գլխում մտքերը պտտվում էին: Նրան թվում էր, թե մի ներկայացման է ականատես՝ որտեղ յուրաքանչյուր ընկերն իր դերակատարումն ունի, և բոլորը հերթով բացահայտում են իրենց կատարյալ դիմակների ճեղքերը:

Ռենեն, ով մինչ այդ լռում էր, վերջապես խախտեց լռությունը:

- Կարծո՞ւմ եք, որ մեզանից որևէ մեկը իսկապես ընտրել է այս կյանքը: Նա կարճ, դառը ծիծաղ արձակեց,- Ես չեմ ընտրել քաղաքականությամբ զբաղվել: Չեմ ընտրել խոստումներ տալ, որոնք չէի կարող պահել: Բայց բոլորս անում ենք այն, ինչ կարծում ենք՝ լավ է մեզ համար, նույնիսկ, երբ սխալ է:

Միքայելի հայացքը ուղղվեց դեպի Ռենեն, ապա՝ դեպի մյուսները:

- Մենք բոլորս ընտրություններ ենք արել: Բայց երբևէ իսկապես մտածե՞լ ենք այդ ընտրությունների հետևանքների մասին:

Հարցը կախվեց օդում՝ անպատասխան:

Պարզ էր՝ ոչ ոք չուներ պատասխանը: Կամ էլ, եթե ուներ, դեռ պատրաստ չէր խոստովանել: Ընթրիքը, որն սկսվել էր որպես տոն, վերածվել էր մարտադաշտի՝ լուռ, բայց կատաղի, որտեղ յուրաքանչյուրը պայքարում էր իրենց իսկ ճշմարտության տարբերակի համար:

Բայց նրանցից ոչ մեկը չէր կարող փախչել սեփական կեղծավորության ծանրությունից: Նրանք բոլորը կառուցել էին իրենց կյանքը զիջումների, փոքրիկ ստերի, կանոնները ճկելու վրա ՝ երբ դա իրենց ձեռնտու էր:

Եվ այժմ, կարծես թե, այդ զիջումները հասնում էին իրենց հետևից:

- Ռենե, դու ավելի վաղ ասեցիր, որ մենք բոլորս պարզապես անում ենք այն, ինչ կարծում ենք՝ լավագույնն է մեզ համար: Բայց ի՞նչ գնով,- Միքայելի ձայնը հանգիստ էր, բայց ներքուստ զգացվում էր մարտահրավեր,- Երբևէ, իսկապես, մտածե՞լ ենք այդ գնի մասին:

Ռենեն անհանգիստ շարժվեց աթոռի վրա:

- Ես մտածել եմ դրա մասին, - դանդաղ պատասխանեց նա, - Բայց խնդիրն այն է, որ այդ գինը միշտ այնտեղ է, անկախ նրանից՝ ընդունում ենք, թե ոչ: Մեր յուրաքանչյուր որոշումը ունի իր արժեքը: Ոմանք պարզապես ընտրում են անտեսել այն՝ շարունակելու համար:

Իդան քմծիծաղ տվեց.

- Շարունակել առաջ գնալ... Այդպե՞ս ես անվանում դա, Ռենե: Քանի որ ինձ դա ավելի շատ հիշեցնում է հետևանքներից փախչելը:

Էնցոն ձեռքերը խաչեց կրծքի վրա, շուրթերի անկյունում մի թեթև, զվարճացած ժպիտ էր խաղում:

- Նայած թե դա ինչ տեսանկյունից դիտարկել, Իդա: Իմ կարծիքով՝ դուք բոլորդ ուղղակի նախանձում եք: Նախանձում եք, որ ես գտել եմ հաջողության ճանապարհը, որ ինձ ինչ-որ բան է հաջողվել: Եվ դուք չեք կարող հանդուրժել, որ իմ համար դա ավելի հեշտ է եղել, քան ձեզնից որևէ մեկի:

Իդայի աչքերը բոցավառվեցին վրդովմունքով, բայց Միքայելը հնարավորություն չտվեց նրան խոսելու:

- Բավական է, Էնցո, - նրա տոնայնությունը հաստատուն էր, իսկ հայացքը՝ անդրդվելի, - Խոսքը այն մասին չէ, թե ով է ավելի հաջողակ: Այլ թե ինչ ստերի մեջ ենք ապրել: Ինչ դիմակներ ենք կրել, ինչ պատմություններ ենք ինքներս մեզ պատմել: Մեզանից յուրաքանչյուրի ձեռքերը կեղտոտ են՝ այս կամ այն կերպ:

Սեղանի շուրջ բոլորը կտրուկ շունչ քաշեցին, և մի պահ լռություն տիրեց: Միքայելի խոսքերը տեղ էին հասել, և բոլորը դա գիտակցում էին: Ճշմարտությունը հիմա արդեն անժխտելի էր:

Ռենեն, ով մի քանի րոպե լուռ էր, վերջապես բարձրացրեց հայացքը.

- Իսկ դո՞ւ, Միքայել: Ի՞նչ ես թաքցրել այս բոլոր տարիների ընթացքում:

Միքայելը առանց թարթելու նայեց Ռենեին՝ ուղիղ աչքերի մեջ:

- Ես էլ եմ սխալներ արել: Բայց ես փորձել եմ ազնիվ լինել այդ սխալների վերաբերյալ՝ առնվազն ինքս ինձ հետ: Ի տարբերություն ձեզ:

Էնցոն բարձրացրեց հոնքը՝ ակնհայտորեն զվարճացած:

- Ու դու կարծու՞մ ես՝ դա քեզ ավելի լավն է դարձնում: Թե՞ ինչ-որ կերպ մեզնից վեր ես, որովհետև կարող ես ընդունել քո սխալները: Բոլորս էլ գաղտնիքներ ունենք, Միքայել: Պարզապես տարբերությունն այն է, որ ոմանք ավելի լավ գիտեն՝ ինչպես պահել դրանք:

Միքայելը լարվեց.

- Գաղտնիքները չեն մնում հավերժ թաքուն, Էնցո: Վաղ թե ուշ՝ դրանք հասնում են քո հետևից:

Իդայի հայացքը թեքվեց դեպի Ռենեն ու Էնցոն.

- Սա է ամեն ինչի հիմքում: Գաղտնիքներ: Մենք բոլորս այստեղ ենք, ձևացնելով, թե իդեալական ու անբիծ կյանքեր ենք ապրում, բայց իրականում՝ բոլորս էլ մեղավոր ենք:

Միքայելը հանկարծակի կանգնեց՝ աթոռի ոտքերը սահեցին հատակին վրայով:

- Այս ամենը անիմաստ է, - մրթմրթաց նա՝ ավելի շատ դիմելով ինքն իրեն, քան մնացածին, - Մենք պարզապես պտտվում ենք նույն քննարկման շուրջ, նույն կեղծ պատրվակների: Ես նույնիսկ չգիտեմ՝ ինչու մտածեցի, թե սա կօգնի մեզ:

Մնացածը շարունակեցին նստած մնալ, հայացքներով հետևելով նրան, բայց ոչ ոք չփորձեց կանգնեցնել:

Միքայելի հիասթափությունը շոշափելի էր, երբ սկսեց անհանգիստ քայլել սենյակով մեկ:

- Մենք միշտ վերադառնում ենք նույն տեղը, չէ՞: Մտածում ենք, թե մյուսներից լավն ենք, որ մեր սխալներն ավելի աննշան են, քան ուրիշներինը: Բայց դրանք նույնն են: Մենք բոլորս մասնակցել ենք այս թատերախաղին և յուրաքանչյուրս մեր դերն ենք խաղացել:

Նա կանգ առավ պատուհանի մոտ՝ նայելով դեպի մութ լիճը.

- Մտածում էի՝ այս հավաքը կօգնի մեզ վերամիավորվել: Բայց փոխարենը, ինձ ցույց տվեց, թե որքան հեռու ենք իրարից: Մենք այլևս ընկերներ չենք: Մենք պարզապես մարդիկ ենք, ովքեր չափազանց երկար ժամանակ փորձել են թաքնվել ճշմարտությունից:

Սենյակի լարվածությունն այն աստիճանի էր հասել, որ նույնիսկ պատի ժամացույցի թակոցը բարձր էր թվում՝ իր կայուն ռիթմով, կարծես ծաղրում էր նրանց լռությունը:

Վերջապես լռությունը խախտեց Էնցոն՝ ցածր ձայնով, որի մեջ զայրույթ չէր, այլ ավելի շուտ համակերպում.

- Միքայելը ճիշտ է: Մենք ինքներս մեզ խաբել ենք: Բայց նաև՝ միմյանց: Այն բաները, որոնք թաքցրել ենք, պահել խավարում... փոխել են մեզ: Մեզ բոլորիս:

Իդան նայեց նրան.

- Ու հիմա ուզու՞մ ես, որ խոստովանենք, որ մեր բոլոր կեղտերը բացահայտե՞նք, ինչպես մի խումբ երեխաներ:

Նրա ձայնը կտրուկ էր, բայց մեջը կասկածի մի նոտա կար: Նա փորձում էր իրեն անտարբեր ցույց տալ, բայց հոգու խորքում գիտեր՝ Էնցոն ճիշտ էր:

Ռենեն, ով Միքայելի պոռթկումից հետո ահագին լուռ էր մնացել, վերջապես կանգնեց:

-Մեզ խոստովանություններ պետք չեն, - ասաց Ռենեն,- Մեզ պետք է պարզապես դադարել ձևացնել, թե ամեն ինչ լավ է: Թե կարող ենք շարունակել մեր կյանքերը, թե կարող ենք հավերժ խուսափել հետևանքներից:

Նրա խոսքերը կարծես արձագանք առաջացրին բոլորի ներսում: Սենյակում ինչ-որ նուրբ փոփոխություն տեղի ունեցավ. այն լարվածությունը, որ կուտակվել էր, սկսեց մեղմորեն ցրվել՝ փոխարինվելով շատ ավելի անհարմար զգացողությամբ՝ մեղքի զգացողությամբ:

Միքայելը շրջվեց դեպի իր ընկերները՝ կեցվածքը լարված, դեմքին սառը արտահայտություն:

- Ճիշտ այդպես, - ասաց նա , - Սա խոստովանությունների մասին չէ: Սա ճշմարտության առերեսման մասին է, այն ճշմարտության, որից տարիներ շարունակ փախել ենք:

Էնցոն խորը շունչ քաշեց ու ձեռքն անցկացրեց մազերի միջով՝ կարծես փորձելով մեղմել խոսակցության ծանրությունը:

- Իսկ հիմա՞: Պարզապես նստենք այստեղ ու իրար երեսով տա՞նք մեր մեղքերը: Դա իրո՞ք որևէ բան լուծելու է:

Իդան հանկարծակի կանգնեց.

- Միգուցե այդպես է պետք, - ասաց նա դողացող ձայնով՝ պայքարելով իր ներսում կուտակված զգացմունքների դեմ, - Միգուցե պետք է ամեն ինչ բացահայտենք, քանի դա մեզ ներսից չի ոչնչացրել: Տարիներ շարունակ այս ամենը ինձ ներսից կրծում է, և ես այլևս չեմ կարող ձևացնել:

Միքայելը նայեց նրան՝ հայացքը մի պահ փափկեց, կարծես նրա մեջ մի բան տեսավ՝ ավելին, քան պարզապես սառը, հաշվենկատ վիրաբույժ:

- Դա երբեք հեշտ չէ, - ասաց նա, - Բայց եթե հիմա չնայենք ճշմարտության աչքերի մեջ, նորից ու նորից կվերադառնանք այս անվերջանալի շրջանին՝ ձևացնելով, թե ամեն ինչ լավ է: Եվ ոչինչ չի փոխվի:

Տևեց երկար դադար, մինչ նրանք բոլորը կանգնած էին՝ հայացքները միմյանց հառած:

Վերջապես Ռենեն խոսեց՝ գրեթե շշուկով:

- Մենք բոլորս ընտրություններ ենք արել: Ընտրություններ, որոնք ձևավորել են՝ ովքեր ենք հիմա: Բայց միգուցե... միգուցե դեռ ուշ չէ փոխվելու համար:

Իդան կտրուկ արտաշնչեց.

- Դու մտածո՞ւմ ես, որ մենք կարող ենք փոխվել: Որ մի քանի բառով կարո՞ղ ենք ամեն ինչ շտկել:

Ռենեն հանդիպեց նրա հայացքին.

- Ոչ, չեմ կարծում, թե բառերը կարող են ինչ-որ բան շտկել: Բայց դրանք սկիզբ են: Սկիզբ՝ դեպի ըմբռնում, դեպի... գուցե նաև ներում:

Միքայելը, ով մինչ այդ լուռ էր ու մտովի մարսում էր ամեն ինչ, վերջապես գլխով արեց.

- Ես չեմ սպասում, որ այս գիշեր մեկս մյուսին կների: Կամ էլ երբևէ: Բայց եթե ինչ-որ տեղից չսկսենք, երբեք ոչ մի տեղ չենք հասնի:

Օդը նրանց միջև կարծես թանձրանում էր, բայց դա այլևս այն խեղդող լարվածությունը չէր, ինչ առաջ էր: Այժմ ինչ-որ այլ բան կար՝ անորոշ, բայց հույս ներշնչող:

Ռենեն հայացք գցեց դեպի մյուսները, ապա նայեց սեղանին՝ մատներով ռիթմիկ թակելով եզրին.

- Դժվար է, գիտե՞ք: Ընդունել, որ մենք այն մարդիկ չենք, ինչ կարծում էինք: Որ այս ամբողջ ժամանակ ինքներս մեզ ենք խաբել: Բայց միգուցե ճշմարտությունը միակ բանն է, որ կարող է ազատել մեզ:

Էնցոն, աթոռին հենված, դառը ծիծաղ արձակեց.

- Եվ միգուցե ճշմարտությունը գերագնահատված է: Միգուցե դա ընդամենը մի պատմություն է, որ ինքներս մեզ ենք պատմում՝ քաոսը հասկանալու համար:

Իդան կտրուկ շուռ եկավ դեպի նրան.

- Եթե դու նույնիսկ քո սեփական կյանքի ճշմարտությանն ի զորու չես նայել, Էնցո, ապա ի՞նչ ենք անում այստեղ ընդհանրապես:

Էնցոյի քմծիծաղը մարեց, և նա թեքեց հայացքը՝ առաջին անգամ ցույց տալով ինքնավերահսկողության մեջ ճեղքերը: Միքայելը մի փոքր թուլացավ: Զրույցը փոխել էր ուղղությունը: Այլևս մեղադրանքների կամ անցյալի մասին չէր: Այլ ուղղություն էր ստացել:

- Բոլորս փախել ենք, չէ՞,- Միքայելի ձայնը մեղմ էր, մտազբաղ,- Փախել ենք ճշմարտությունից, ինքներս մեզնից: Բայց ի՞նչ կլինի, եթե, թեկուզ մի պահ, պարզապես կանգ առնենք:

Ապա՝ առանց մի բառ ասելու, Միքայելը մոտեցավ պատուհանին: Լուսնի շողերը արտացոլվում էին լճի վրա՝ արծաթյա և խորհրդավոր: Մեկ առ մեկ, մյուսները միացան նրան՝ կանգնելով լուռ, կողք կողքի:

Առաջին անգամ, տարիների ընթացում, հին ընկերներն իսկապես տեսան միմյանց. տեսան բոլոր ճեղքերը, թերությունները, մարդկությունը, որ վաղուց թաղել էին հպարտության, փառասիրության և ափսոսանքի շերտերի տակ:

Եվ այդ լռության մեջ հնարավորության զգացում կար:

Թալեբի օրը

Փարիզ, 2000-ականներ:

Հինգ լեզուների տիրապետող դասախոս, վերլուծաբան, ազգությամբ պարսիկ աղա Թալեբը, ով ավելի քան 20 տարի հետաքրքրված էր կրոնի ու փիլիսոփայության ուսումնասիրությամբ և ներկայումս Ֆրանսիայի համալսարաններից մեկում վերլուծություններ էր անում ու դասախոսություններ կարդում կրոնի ու փիլիսոփայության թեմաներով, աշխատանքի ավարտից հետո դուրս եկավ համալսարանից ու որոշեց մի քիչ զբոսնել նախքան տուն գնալը:

Որոշ ժամանակ քայլում էր Փարիզի մարդաշատ փողոցներից մեկով՝ խորասուզված իր մտքերի մեջ, մեկ էլ ամբոխի մեջ նշմարեց ծանոթ դեմք. իր հին ուսանողներից մեկն էր՝ Աբդուլը: Ի զարմանս նրա՝ Աբդուլի մտերիմ ընկերը՝ Ահմեդը, Աբդուլի հետ չէր: Աղան զրույցը սկսեց այսպես.

- Աբդու՛լ, իսկ Ահմեդն ու՞ր է:

- Ահմեդը հրեաների հետ բիզնես է դրել, աղա Թալեբ, զենքի վաճառքի ասպարեզ է մտել:

- Ա՛խր, Ահմեդը չի հասկանում, որ հրեայի հետ գործ բռնելը լավ բանի չի բերելու: Ա՛խր, նրանք կոտորում են պաղեստինցիներին: Մեր դավանանքները տարբեր են, սուրբ Իսլամում ասվում է, որ նրանք ինֆիդելներ են,- բարկացավ աղա Թալեբը:

- Աղա՛ Թալեբ, ես Ձեզ չեմ հասկանում: Ես ինքս էլ մահմեդական եմ, բայց կողմ եմ խաղաղությանը և հավատում եմ, որ հրեայի ու մուսուլմանի միջև բարեկամությունը տարբեր ուղիներով կարող է հաստատվել: Ինչու՞ եք էսպես տրամադրված, մի՞թե մոռացել եք, որ Իսրայելի ու Եգիպտոսի միջև պակտ է կնքվել 1970-ականներին, 3-րդ հրեա-արաբական պատերազմի ավարտից հետո:

- Լսի՛ր, Աբդուլ, այն ինչ ասում ես, թերի է, ու որոշ հարցեր կախված են մնում օդում: Եթե այդքան շատ ես ուզում մոտ լինել տրամաբանությանը, ապա պիտի դրանց պատասխաններն էլ տաս: Ասա՛, խնդրեմ, հրեաներն ինչի՞ են զենք վաճառում, ու ինչի՞ է մեր հայրենակիցը զենք վաճառում, չէ՞ որ դա մեր կրոնին դեմ է:

- Աղա Թալեբ, շատ չեմ ուզում ընդարձակվել այս թեմայով, միայն մի բան ասեմ. մեր ժամանակներում կրոնը շատ ասպարեզներում էլ որոշիչ գործոն չի հանդիսանում: Եթե մենք մոլեռանդությամբ կառչենք դրանից, ապա երբեք չենք հասնի հրեաների մակարդակին, ովքեր ցրված են աշխարհով մեկ ու գործունեություն են ծավալում հանուն իրենց կրոնակիցների բարօրության: Նրանք նույնիսկ կարողացել են Հոլոքոսթը հօգուտ իրենց շահի օգտագործել, իսկ մենք ահաբեկչության հետ ենք ասոսացվում: Քրիստոնյաները մեզ վախով են նայում, իսկ հրեաներին՝ որպես զոհ, որովհետև հրեան

լավ գիտի՝ երբ, որտեղ և ինչպես գառի դիմակ կրել: Իսկ Դուք ինձ դասեր եք տալիս, աղա Թալեբ: Եկե՛ք նախ փորձենք հասնել նրանց մակարդակին, հետո այս թեմայի շուրջ ահագին քննարկումներ կունենանք: Ի՞նչ կասեք:

- Կասեմ, որ լավ միտք է, բայց կուզենայի վերջին հարցս տալ: Հրեայի հետ այդ զենքի գործն ինչի՞ համար է անում Ահմեդը:

- Որպեսզի Պաղեստինը փրկի: Անզեն հող պաշտպանել չես կարող:

- Հրեան մի՞թե դա չի հասկանում:

- Հրեան բիզնես անել գիտի: Ցանկացած պատերազմում երկու կողմին էլ զենք է վաճառում: Նրանց համար մարդիկ ընդամենը ապրանք են:

- Ա՛, պարզ է: Լավ էր ասված: Բայց, ընդհանուր առմամբ, ապրի Ահմեդը, եթե Պաղեստինի համար է մտահոգվում:

- Ձեր թույլտվությամբ, աղա Թալեբ, նամազի ժամը եկել է, եկեք փոենք մեր գորգերը, դեմքներս դեպի Մեդինա թեքենք ու միասին աղոթենք Ալլահին:

Եվ այսպես, անցորդներին ուշադրություն չդարձնելով, Աբդուլն ու Թալեբը ծնկի եկան ու սկսեցին նամազը: Աշխարհի մյուս ծայրում էլ Ահմեդը մի կողմ դրեց զենքի վաճառքի պայմանագրերը ու ծնկի եկավ, որպեսզի իր աղոթքն ասի Ալլահին:

Աղոթքն ավարտեցին: Աղա Թալեբը Աբդուլից բաժանվելուց հետո երկար քայլեց, մինչև հանդիպեց արաբական թերակղզում հարգված քրիստոնյա եկեղեցական Ջոնաթանին, ու ողջունեց նրան իր ավանդական ձևով: Եկեղեցականը, ուրախությունը չթաքցնելով, ասաց.

-Մեր աստվածները մեզ ուղղորդեցին այստեղ, որ հանդիպեինք իրար, աղա Թալեբ:

Աղա Թալեբը գլխի շարժումով հաստատեց.

- Այն ամենն, ինչ տեղի է ունենում այս կյանքում, կատարվում է Ալլահի կամքով, իսկ Ալլահն անսխալական է:

- Այո՛, այո՛, իմ ընկեր, աստվածներն անսխալական են, իսկ մենք՝ մահկանացուներս, արարածներից ամենամեղսունակը: Բայց արի այս ամենը մի կողմ թողնենք, դու ինձ ասա ինչպե՞ս ես, - հարցրեց Ջոնաթանը:

- Ես լավ եմ, բայց քիչ առաջ իմ ուսանողներից մեկին՝ Ահմեդին հանդիպեցի, ու նա ասաց, որ իր ընկերը, որին նույնպես դաս եմ տվել, սկսել է զբաղվել զենքի բիզնեսով:

- Մի՞թե չես կարծում, որ մուսուլմաններն այս արագ զարգացող դարում ի վերջո պետք է զբաղվեն լուրջ առևտրով: Մարդ չի կարող ապրել միայն կրոնով ու տառապել այնքան, ինչքան ապրում է,- կիսալուրջ, կիսակատակ ասաց Ջոնաթանը:

- Ռեվերե՛նդ Ջոնաթան, - ասաց աղան սառը տոնով, - ինչպե՞ս է կարող մուսուլմանը զբաղվել զենքի վաճառքով, այն էլ հրեայի հետ, ով իր ամբողջ ուժերով ամեն ինչ անում է, որ գեթ մեկ պաղեստինցի էլ չմնա, ինչպե՞ս է կարող մուսուլմանն իր կրոնից շեղվել ու նախապատվությունը տալ գումար աշխատելուն՝ առանց հաշվի առնելու դրա մահաբեր վնասի անխուսափելիությունը:

- Աղա՛, թույլ տուր ինձ մի բան ասել՝ որպես քրիստոնյա, - Ջոնաթանը լրջացավ՝ հասկանալով աղայի մտահոգությունը, - զենքի վաճառքը բոլոր դարերում էլ եղել է: Մեր դարում էլ մարդիկ այլևս չեն ցանկանում քչով բավարարվել: Մեծ գումարները մեծ իշխանություն են տալիս, ու այդ միտքը գայթակղում է մարդկանց: Մեր մոլորակի վրա ամենաշատը զենքի արտադրությամբ զբաղվում են քրիստոնյաները: Ու հեգնալի է, երբ զենք արտադրելուց, վաճառելուց, նույնիսկ այդ զենքով սպանելուց, անընդհատ Աստծո անունն են շեշտում: Չնայած, որ Աստծո 10 պատվիրաններից է՝ «Մի սպանիր»: Մարդու կյանքը չի կարելի խլել, առավել ևս մեծ մեղք է ստեղծել մի բան, որ հարյուրավոր, հազարավոր մարդկանց կյանք է խլելու: Բայց, իմ ընկեր, կրոնը գնալով թուլացնում է իր դիրքերը, քրիստոնյաներն այլևս չեն հետևում կրոնական ծիսակատարություններին, ու համոզված եմ՝ ո՛չ հրեա ռաբբիները, ո՛չ էլ մուսուլման իմամներն են առաջվա խստությամբ հետևում իրենց ծիսակատարություններին: Կյանքի օրենքն այնպիսին է, որ ծայրահեղ վատ ապրողները, հույսները դնում են Աստծո վրա, իսկ այն երջանիկները, ովքեր կարողանում են դուրս գալ աղքատությունից, մոռանում են, որ վերևում կա Աստված: Իսկ Աստվածը մեծ է, դա քչերն են հասկանում:

- Ընկե՛րս, միանգամայն ընդունում եմ քո ասածները: Ճիշտ է, իսլամն աշխարհում ամենից շատ հետևորդներն ունի, բայց ոչ բոլորն են խստորեն հետևում մեր ավանդույթներին:

- Բացի այդ էլ, աղա՛, մի բան էլ ավելացնեմ: Եթե մի պահ շեղվենք կրոնից, կհասկանանք, որ աշխարհում տեղի է ունենում մասսայական գլոբալիզացիա, թե՛ քաղաքականության և թե՛ կրոնի տեսանկյունից: Արդյունքում մարդիկ հեռվանում են կրոնից: Գրեթե համոզված եմ, որ կրոնը բոլորովին կվերանա, երբ մարդկանց ուղեղներում վերջնականապես սերմանեն այն գաղափարը, որ Աստված չկա, կամ Աստվածը մեռել է, ու մարդիկ կարող են անել, ինչ ուզենան, առանց վախենալու, որ իրենց արարքների համար պատասխան են տալու մահից հետո:

- Ջոնաթան, ի՞նչ ես կարծում, հրեան ի՞նչ մոտեցում ունի առ Աստված:

- Հրեաներն իրենց համարում են Աստծո ընտրյալ ազգ ու իրենց հանդեպ թշնամության դրսևորումները կապում են հենց դրա հետ: Բայց մի՞թե դա այդպես է:

- Ես կարծում եմ, որ ամեն մի թշնամություն սերմանած արմատներ ունի, որ հարկ է պարզել՝ որտեղից են գալիս:

Թալեբի ու Ջոնաթանի զրույցի ընթացքում, մի ռաբբի մոտեցավ նրանց:

- Իցհա՛կ, - ուրախությունից բացականչեց Ջոնաթանը, - վերջապես քեզ էլ տեսա ու կարող եմ ասել, որ այսօր հետաքրքիր ու բովանդակալից օր եմ ապրում: Ծանոթացի՛ր իմ ընկերոջ հետ, աղա Թալեբը դասախոսություններ է կարդում համալսարանում փիլիսոփայության ու կրոնի թեմաներով:

- Շալո՛մ: Հույս ունեմ քաղաքականությունից չէիք խոսում, բարեկամներ, - թեթև ժպտաց Իցհակը, սեղմելով Թալեբի ձեռքը, ու ավելացրեց, - ռավվինի լինելու տարիների ընթացքում շատ մուսուլմանների եմ հանդիպել, ովքեր, բարեգութ լինելով, մեր հանդեպ շատ լավ վերաբերմունք են ցույց տվել: Ես էլ ի սրտե խաղաղություն եմ մաղթում Ձեզ:

- Ծնորհակալ եմ, ռավվինի, - գլուխը խոնարհելով՝ ասաց աղա Թալեբը, - թույլ տվեք կիսվել, թե ինչի մասին էինք խոսում ես ու Ջոնաթանը մինչև Ձեր գալը: Ես նրան պատմում էի, որ մուսուլմանների ու հրեաների միջև արդեն բարեկամական հարաբերություններ են ձևավորվում, հրեաների օգնությամբ մուսուլմանները սովորում են ինտեգրվել առևտրի մեջ ու բիզնես մտածելակերպ ձևավորել, բայց, ցավոք, զենքի վաճառքի ասպարեզում:

- Իմ բարեկամ, - ասաց Իցհակը՝ ձեռքը դնելով Թալեբի ուսին, - մարդկությունը մի դաս պիտի քաղի պատմությունից. կրոնով տարվելը չի նպաստում կյանքի բարելավմանը: Հրեական սիոնիզմն ու հուդայականությունը մեր կարևոր գաղափարներն են, թեև ունեն մեծ տարբերություններ: Սիոնիզմը սփռված է աշխարհով մեկ, իսկ հուդայականությունն էլ առանձին աշխարհայացք է, որին Իսրայելում քիչ են տիրապետում: Ինչ վերաբերվում է հրեայի հետ բիզնես անելուն, պետք է ընդունել այն փաստը, որ հրեան բիզնես աշխարհում չունի մրցակիցներ, ի վերջո դա Աստծո կողմից շնորհված պարգև է: Եթե Աստված այդպես է կամեցել, ուրեմն պետք չի փնտրել մշուշոտ գաղտնիքներ կամ հարցաքննել Աստծուն:

- Ի դեպ, դուք ունեք «սուրբ ջիհադ» հասկացությունը, աղա Թալեբ, - միջամտեց Ջոնաթանը, - որը թեև լայն հասկացություն է ու նշանակում է ջանասիրություն Ալլահի ճանապարհին, բայց ավելի շատ ասոցացվում է իսլամի թշնամիների դեմ պատերազմի հետ:

- Եկեք չմոռանանք, որ մուսուլմանները դարեր առաջ գիտության ասպարեզում առաջինն էին, բայց ինչ որ պահի շեղվեցին ստեղծագործելու ու հայտնագործություններ անելու ուղուց և տարվեցին կրոնով: Բայց երբ դուրս են գալիս այդ միջավայրից, հասկանում են, որ այս կյանքում կարևորը ստեղծել-ստեղծագործելն է,- ավարտեց խոսքը Իցհակը:

Թալեբը ուշադիր լսում էր նրանց ու մտքում պտտվում էր մի հարց, թե ինչպես է, որ հրեան, քրիստոնյան ու մուսուլմանը խաղաղ քննարկում են ունենում: Որոշեց այդ հարցն ուղղել նրանց.

- Բարեկամներ, մտքումս մի հարց ծագեց: Ինչպե՞ս է, որ հրեան, քրիստոնյան և մուսուլմանը կարողանում են իրար հետ լեզու գտնել:

- Պատկերացրեք՝ հրեան, քրիստոնյան ու մուսուլմանը գնում են բար, - Թալեբի հարցի պատասխանը տվեց Իցիակը, - ամեն մեկը պատվիրում է իր նախընտրելի խմիչքը, հրեան՝ գինի, մուսուլմանը՝ ջալլաբ, քրիստոնյան՝ գարեջուր, զրուցում են տարբեր թեմաներով, վերջում էլ ամեն մեկը գնում է իր ճանապարհով: Ամեն ինչ լավ է վերջանում, երբ նրանցից ոչ մեկը մյուսների հանդեպ անհարգալից վերաբերմունք չի դրսևորում: Մարդ պետք է գիտակցի մի բան, անկախ դավանանքից կամ հայացքներից, դիմացինի հանդեպ բացասական վերաբերմունքը նույնպիսի պատասխան վերաբերմունք է առաջացնում: Բազում պատմություններ կան այն մասին, թե ինչպես է քրիստոնյան փրկել մուսուլմանին գետում խեղդվելուց, մուսուլմանն էլ՝ հրեային, երբ հրեան, առանց իմանալու, խախտում էր արաբական երկրի կանոնները, հրեան էլ՝ քրիստոնյային, երբ ֆինանսական միջոցներ էին անհրաժեշտ վիրահատվելու համար: Մարդկային վերաբերմունքը անկախ է կրոնից ու ազգությունից: Ըստ կրոնի կամ ազգային պատկանելիության խտրականություն դնելը փոքրոգի ու նեղ մտածելակերպ ունեցող մարդկանց է բնորոշ, որոնք չեն տիրապետում տարրական էթիկայի կանոններին: Կրոնը մարդկանց բաժանելու ու թշնամացնելու համար չէ, այլ կյանքի ճիշտ ուղին մատնանշելու ու բարոյականությունը պահպանելու համար:

Այս խոսքերը լսելով՝ քրիստոնյան արձագանքեց.

- Բարեկա՛մս, դու լավ գինու պես, ինչքան մեծանում, այնքան իմաստուն ես դառնում: Ի՞նչ կասեք, եթե բոլորով գնանք մի բաժակ գինի խմելու:

- Գնա՛նք, Ջոնաթան, քեզ ահագին բան ունեմ պատմելու: Աղա Թալեբ, կկամենա՞ք մեզ միանալ:

- Ալլահը վկա, կցանկանայի միանալ ձեզ, բայց միայն ոչ գինի խմելու,- ժպտաց Թալեբը, - իրականում ժամանակի սղության պատճառով պետք է նորից ճանապարհ ընկնեմ: Հաճելի էր ձեզ հանդիպել, բարեկամներ, թող խաղաղությունն անբաժան լինի ձեզնից:

Այդ ասելով, Թալեբը թեթև խոնարհեց գլուխն ու շարունակեց իր ճամփան:

Երկար չէր անցել, երբ տեսավ մի մարդու, ով գորգը գետնին փռած նամազ էր անում, բայց ոչ Մեդինայի ուղղությամբ: Թալեբը մի պահ տատանվում էր, արդյոք արժի զգուշացնել նրան, որ սխալ կողմն է աղոթում: Իսլամում, սակայն, ընդունված չէ խանգարել մարդուն աղոթելու ընթացքում: Աղոթողն էլ, չի շեղվի նամազ անելուց, նույնիսկ եթե դրամապանակը փորձեն գողանալ: Այդ իսկ պատճառով աղա Թալեբը սպասեց մինչև անծանոթը վերջացնի իր աղոթքը, ապա նոր մոտեցավ նրան:

- Սալամ ալեյկում, եղբա՛յր, - ողջունեց անծանոթին Թալեբը, - նկատեցի, որ աղոթում էիր, ու ուրախ եմ, որ կապն առ Ալլահ քեզ հնարավորություն է տալիս ճանաչելու ու գնահատելու այն կյանքը, որ նա է շնորհել քեզ:

- Ծնորհակալ եմ, եղբայր, - գլուխը աղայի առջև խոնարհեց անծանոթը՝ զգալով, որ դիմացինը խելացի ու շրջապատում հարգանք վայելող անձնավորություն է, - ես նոր եմ կրոնափոխ եղել, այսօր առաջին անգամ նամազ արեցի ու կարող եմ ասել, որ վերջապես ներքին ներդաշնակություն ձեռք բերեցի:

- Փաստորեն ճիշտ զգացի, որ մի բան այն չէ, երբ տեսա, որ դեպի Մեդինա չես աղոթում, բայց ոչինչ, կսովորես, - ժպտալով ասաց Թալեբը, - այստեղից դեպի Մեդինա ուղղությունը արևմտյան մասում է, - ու ցույց տվեց, թե որ ուղղությամբ աղոթի:

- Թույլ տուր հարցնել, թե ի՞նչը քեզ դրդեց կրոնափոխ լինել,- հարցրեց Թալեբը:

- Ես երկար ժամանակ չէի հետևում ոչ մի կրոնի, թեև ծնվել եմ քրիստոնյաների ընտանիքում: Ծնողներիս կորցնելուց հետո ոչ մի կերպ չէի կարողանում ազատվել մենակության զգացողությունից, մինչև այն օրը, երբ հանդիպեցի իմ ներկայիս կնոջը: Նա բարեպաշտ մուսուլմանների ընտանիքից է, ես էլ սիրահարվեցի այն աստիճան, որ պատրաստ էի ամեն գնով ամուսնանալ նրա հետ: Այսպես ընդունեցի իսլամը, ձեռք բերեցի անձնական երջանկություն ու ներդաշնակություն հոգուս խորքում:

- Ուրախ եմ, որ ծնողներին կորցնելուց հետո քո մեջ ուժ գտար վերափոխելու քո կյանքը, պայքարեցիր հանուն սիրո ու արդյունքում ձեռք բերեցիր նաև հոգեկան հանգստություն:

- Ես հասկացա, որ սերը փրկում է աշխարհը ու ծածկում այն ողջ նեգատիվը, որ շրջապատում է մեզ: Կինս բոսնիացի է, նրա հարազատներից ոմանք Սրեբրենիցայի ցեղասպանության զոհեր են: Նրան հանդիպել եմ մի միջոցառման ժամանակ, այնպիսի ուժեղ տպավորություն թողեց իմ վրա, որ չդիմացա և նրա հետ ծանոթանալու համար արեցի հնարավոր ու անհնարին ամեն ինչ: Պիտի խոստովանեմ, որ նրա մուսուլման լինելը չէր խանգարում ինձ մնալ անկրոն, բայց որպեսզի ավելի մոտ լինեի նրա արժեքներին, կրոնափոխ եղա ու դա լավագույն որոշումն էր, որ ընդունեցի իմ կյանքում:

Այդ բոլորը լսելով՝ աղա Թալեբը իր եղբայրական մաղթանքը հայտնեց՝ ասելով.

- Եղբայր, այս կյանքում մի կարևոր բան կա, որ շատերը չեն գիտակցում, դա ադեկվատությունն է: Կրոնը կարևոր դեր ունի յուրաքանչյուրիս կյանքում, ի վերջո բոլորս էլ մահկանացու ենք: Մեր հոգին անբիծ պահելով՝ մենք գնահատում ենք Աստծո տված կյանքը: Հոգեկան ներդաշնակություն ձեռք բերելու առաջին քայլը սիրելն է՝ սիրել քո մերձավորներին ու նաև ինքդ քեզ: Ուրախ եմ, որ քո ընտրած ուղին քեզ բերեց այնտեղ, որտեղ դու վերջապես լրացրեցիր դատարկությունը սիրով: Մաղթում եմ, որ այն քեզ ուղեկցի քո ողջ կյանքում:

Երկու տղամարդիկ, գլուխները խոնարհելով, միաժամանակ արտաբերեցին՝ «Ալլահը մեծություն է» ու հրաժեշտ տվեցին միմյանց:

Աղա Թալեբը նորից ճամփա ընկավ՝ մտովի վերադառնալով այդ օրվա իր զրույցներին: Անսպասելի հետաքրքիր օր էր ապրում՝ հանդիպելով տարբեր մարդկանց ու նրանց հետ բովանդակալից զրույցներ վարելով: Այդժամ նա զգաց, որ մարդկության սերը կյանքի հանդեպ դեռ մեռած չէ:

Տուն հասնելուն մնացել էր ոչ ավելի, քան 2 կիլոմետր, աղա Թալեբն արդեն կանխավայելում էր, թե ինչպես է հագեցած օրը ավարտելու իր սիրած գիրքը՝ «Հազար ու մի գիշերը», կարդալով: Նա չէր հոգնում այդ գիրքը պարբերաբար վերընթերցելուց ու գտնում էր, որ արաբական պատմվածքների լավագույն ժողովածուն է:

Սակայն ճակատագիրն այլ բան որոշեց:

Ճանապարհին մի անծանոթ մոտեցավ Թալեբին՝ ակնհայտ ցանկանալով զրուցել նրա հետ:

- Պարո՞ն, ներեցեք անհամեստության համար, բայց եթե չեմ սխալվում, Դուք մուսուլման ե՞ք:

Անծանոթի տեսքից դատելով՝ հրեա էր. գլխին կիպպա էր, ձեռքին էլ՝ «Թալմուդը»:

- Այո', եղբայր, մուսուլման եմ: Անունս Թալեբ է, իսկ Ձեր անունն ի՞նչ է:

- Նոամ, - ձեռք մեկնեց անծանոթը,- Ես էլ հրեա եմ, հավանաբար դժվար չէր գուշակել:

- Այո՛, Ձեր ձեռքին նկատեցի «Թալմուդը»՝ հրեական աշխարհի կարևորագույն գրքերից մեկը, եթե ոչ ամենակարևորը:

- Երևում է, լավ տեղյակ եք, որ այս գիրքը մեր կյանքի կարևոր բաղադրիչն է:

- Ես ուսումնասիրել եմ բոլոր հայտնի կրոնները՝ իսլամը, հուդաիզմը, քրիստոնեությունը իր տարբեր ճյուղերով, բացի այդ էլ արևելյան տարբեր գաղափարախոսություններ, որոնք կրոնական նկրտումներ չունեն:

- Այդ ասիացիները, ինչքան էլ կրոնից հեռու են, բայց բարոյականության սահմանները գիտեն: Նշանակում է, որ կրոնը բարոյականության սահմանները պահպանելու միակ միջոցը չէ:

- Համոզված եմ, որ մեր զրույցը երկար կտևի, եղբա՛յր,- ասաց Թալեբը,- Մտադրություն ունեի տուն գնալու, բայց քանի որ ճակատագիրն այլ բան որոշեց, եկեք երկար ոտքի վրա չզրուցենք, փոխարենը նստենք մի տեղ:

Որոշեցին գնալ մոտակայքում գտնվող արաբական ռեստորանը: Մինչ սպասում էին, որ ուտելիքը պատրաստ լինի, երկու տղամարդիկ պատվիրեցին ոչ ալկոհոլային խմիչքներ: Արաբական ռեստորանում թշնամանքով էին նայում հրեային ու մուսուլմանին, Թալեբը զգուշացրեց Նոամին, որ ուշադրություն չդարձնի: Ինչին Նոամը պատասխանեց, որ

ինքը սովոր է ու երբեք որոշ զանգվածի վերաբերմունքով չի դատում ամբողջ ազգի կամ կրոնի մասին:

Երբ վերջապես բերեցին ուտեստը, Թալեբը Նոամին հարցրեց.

- Շատ համով է, չէ՞, եղբա՛յր:

- Ամենահամեղ ուտելիքներից է, որ փորձել եմ:

- Արաբական խոհանոցն ուրիշ է: Անկախ մարդու ազգությունից ու կրոնական պատկանելությունից՝ բոլորը միևնույն բանն են ասում: Մեր ուտեստները փորձելուց հետո, ոմանք իրենց հայրենիքում արաբական խոհանոց են բացում՝ ոչ արաբներով:

- Գիտեմ, մենք՝ հրեաներս էլ ունենք արաբական խոհանոցներ, բայց մենք հասկանում ենք, որ արաբական ուտեստները ավելի համեղ են, երբ արաբի ձեռքով են պատրաստված, իսկ սպագետին կամ պիցցան՝ իտալացու: Այսպես ազգային ուտելիքը պահպանում է իր իրական համը:

- Շատ հետաքրքիր մոտեցում է...

- Այո՛, իհարկե լինում են բացառություններ, բայց, միևնույնն է, ամեն մեկի ձեռագիրն առանձնահատուկ է, ու ցանկացած բիզնես ծաղկում է, երբ դրանով զբաղվում է իր գործի փորձառու գիտակը:

- Եղբայր, ինձ միշտ զարմացրել է, որ դուք՝ հրեաներդ, բիզնեսի վերաբերյալ ահագին մեծ պատկերացումներ ունեք, բայց մենք՝ արաբներս, ձեր մակարդակին դեռ չենք հասել:

- Մենք առևտրի ջատագովներ ենք: Ֆինանսական հաստատությունների մեծ մասը չի կարող երկար գոյատևել, եթե չունենա գեթ մի հրեա հաշվապահ, այնպես չէ՞: Հրեան հաշվելու ու գումարների հանդեպ շատ ուշադիր է, մեր այդ տաղանդը Աստծո կողմից տրված պարգև է:

- Իսկապես, մանավանդ, որ փոքրամասնություն կազմելով, որոշում եք մեր մոլորակի բնակչության ճակատագիրը: Ինչո՞վ է դա պայմանավորված: Ես, անկեղծ ասած, ունեմ այդ հարցի պատասխանը, բայց Ձեր տեսակետը ևս հետաքրքիր է, հատկապես որ զգում եմ՝ անկեղծ եք խոսում իմ պես անծանոթի հետ:

Նոամը անձեռոցիկով սրբեց բերանն ու ձեռքերը, ապա մի կում խմեց իր ոչ ալկոհոլային գարեջրից ու պատասխանեց.

- Ինչպես գիտեք, Իսրայելի պետությունը կազմավորվել է սիոնիստների ջանքերով: Սիոնիզմը մեր համար կարևոր գաղափարախոսություն է, որը դասավանդվում է դպրոցներում: Իսրայելի պետությունը պահպանելուց բացի մեր կենսական խնդիրներից է աշխարհի մնացած հատվածներում ապրող հրեաների համախմբումը: Ավելի քան 70 տարի առաջ ստեղծված մեր պետությունը Հոլոսքոսթից հետո դարձավ այն ապաստարանը, որի համար պայքարում էինք դարեր շարունակ: Համաշխարհային

սիոնական կազմակերպության հիմնադիր Թեոդոր Հերցլը օսմանների համաձայնությունն էր փորձում ստանալ հրեական պետության հաստատման հարցում, բայց չստացվեց: Եղել են նաև այլ ծրագրեր, օրինակ՝ ԱՄՆ-ում «Արարատ» փախստականների քաղաք ստեղծելու ծրագիրը, «Մադագասկարի պլանը», «Ֆուգույի պլանը», բայց մեր նպատակին վերջնականապես հասանք առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ շնորհիվ Ռոդշիլդների կարողացանք համոզել Անգլիայի կառավարությանը, ի դեմս՝ Արթուր Ջեյմս Բալֆուրի, որպեսզի Պաղեստինյան մանդատում ստեղծվի մի փոքր համայնք պետություն չունեցող հրեաների համար: Ի վերջո հակասեմականության պատճառով շատ ենք տուժել պատմության ընթացքում: Խորհրդային Ռուսաստանում մեզ հետապնդումների էին ենթարկում, իհարկե չեմ հերքում, որ այլ ազգի մարդիկ էլ են, այդ թվում նաև ռուսներ, զոհ գնացել ստալինյան ռեժիմին: Եվրոպայում մեր հանդեպ ատելությունն ու թշնամանքը նույնպես վառ էր արտահայտված: Նացիստական Գերմանիայում մեզ ճնշում էին, միլիոնավոր հրեաներ են կոտորվել միայն մի պատճառով՝ հրեա լինելու: Իսրայելը պահելու համար պատերազմներ ունեցանք արաբական թերակղզու հետ, ու հաղթեցինք շնորհիվ ԱՄՆ-ում մեր հայրենակից լոբբիստների, ովքեր մինչ այժմ էլ մեր միակ դաշնակիցներն են: Իսկ թե ինչու ենք ամբողջ աշխարհով մեկ ղեկավարելու հնարավորություն ձեռք բերում, շատ պարզ է. մեզ դարեր շարունակ փորձել են կոտորել, իսկ մեր հիմնական զենքը եղել է գիտությունը, մեր գիտելիքներն օգտագործել ենք հօգուտ մեր շահերի, մեր երեխաներին կրթել ենք այդ գաղափարի կարևորության գիտակցությամբ, որպեսզի պաշտպանվելու տարբեր շերտեր ունենանք:

Մեզ ատում են աշխարհի տարբեր ծայրամասերում, մուսուլմաններն ատում են, որովհետև իրենց եղբայր Պաղեստինին են սատարում, քրիստոնյաները մեզ ատում են Հիսուսին դավաճանելու պատճառով, իսկ ասիացիներն էլ `առևտրական լինելու համար:

- Բայց մի՞թե այն ասացվածքը, թե «*Հրեան միշտ կասի, որ իրեն ճնշել են, բայց չի ասի, թե ինչի համար*», ճիշտ չէ: Ամեն մի խնդիր ունի իր խոր արմատները, այդ թվում հակասեմականությունը, բայց հրեաները դա չեն ընդունում, - ասաց Թալեբը՝ մի շարք փաստեր մտաբերելով, - Մեր օրերում էլ հրեաներին վերագրում են քայքայիչ գործունեություն աշխարհի մակարդակով: ԱՄՆ-ում հրեաների կողմից հովհանավորվող կազմակերպությունները վնաս են հասցնում հասարակությանը, հրեաներն են որոշում, թե ինչպես պետք է աշխատի ֆինանսական համակարգը: Եվրոպայում ներգաղթի ծրագրի ջատագովները հրեաներն են, որ այդ ճանապարհով փորձում են վերացնել սպիտակներին՝ խթանելով նոր ռասայի ձևավորումը: Հրեաները ԱՄՆ-ի հետ միասին մուսուլմանական պետություններում պատերազմներ են հրահրում, ինչը բերում է այդ երկրներում հումանիտար աղետի: Ես չեմ ասում, որ ամբողջ աշխարհի խնդիրները հենց միայն հրեաների ձեռքով են ստեղծվում, բայց դարերով եկող ատելությունը իր պատճառներն ունի ու դրանք այդքան պարզունակ չեն, ինչքան Դուք եք փորձում ներկայացնել: Մյուս կողմից էլ հակասեմականությունը

կնվազի այն ժամանակ, երբ մարդիկ գիտակցեն, որ հրեաների բարձր խավն է «խառնում աշխարհը», այլ ոչ թե հասարակ հրեաները:

- Թալե՛ք, Ձեզ այսպիսի մի բան ասեմ: Այն, ինչ տեղի է ունենում աշխարհում, երբեք անպատճառ չի, ոչ էլ քաղաքականության մեջ է որևէ իրադարձություն պատահական ձևով տեղի ունենում, ի վերջո եկե՛ք հիշենք Ֆրենկլին Ռուզվելտի հայտնի խոսքը. «*Քաղաքականության մեջ ոչինչ պատահական չի լինում*»: Ամբողջը ծրագրված է, ու մի կարծեք, որ դրանցից մենք էլ չենք տուժում: Էլիտայի ծրագրերից տուժում են առանց բացառության բոլորը, բացի նրա ներկայացուցիչներից:

- Ընդունում եմ, նույնը մուսուլմանների հետ է կատարվում՝ ներսում սուննիներն ու շիաներն են իրար կրծում, աֆրիկացի մուսուլմաններն էլ կոտորում են մյուս մուսուլմաններին ոչ կրոնական պատճառներով, տերորի են ենթարկում եվրոպացի հասարակ քաղաքացիներին:

- Իսկ դրա հիմնական պատճառը ո՞րն է, Թալեբ:

- Ատելությունը:

- Ճիշտ այդպես: Կրոնը ատելություն չի սերմանում, հրեան ատելություն չի սերմանում, ո'չ էլ մուսուլմանը, ո'չ էլ քրիստոնյան: Ատելություն են սերմանում կառավարությունները, որոնք զանգվածներին կառավարելու գործիքներ ունեն ու մարդկանց հեռվացնում են Աստծուց, պատճառաբանելով, որ կրոնի հողի վրա պատերազմներ են սկսվում, այն անհամերաշխություն է սերմանում, բայց ադեկվատ, կրթված մարդն այդպես չի կարծում, ի վերջո ամեն ոք կարող է ատելություն սերմանել՝ նույնիսկ աթեիստ լինելով:

- Եղբայր Նոամ, Ձեզ հետ բովանդակալից զրույցը նոր մտահորիզոններ է բացում: Երանի այս աշխարհում լինեն շատ մարդիկ, ովքեր Ձեզ նման կմտածեն:

- Շնորհակալ եմ, եղբայր Թալեբ, Ձեր կենացը:

Կենացը խմելուց Թալեբը մի բան էլ մտաբերեց.

- Մի բան էլ հիշեցի, Նոամ: Պատմությունը ցույց է տալիս, որ դարերի ընթացքում ինչքան էլ տարբեր կրոններ դավանող մարդիկ փորձել են խաղաղություն ձեռք բերել, չի ստացվել որոշ խանգարողների՝ դավաճանների, պատճառով:

- Դրա համար այս պահին ունենք այն, ինչ ունենք: Մեզ դեռ տարիներով կատեն, մենք էլի զոհ կգնանք այդ ատելությանը, բայց, միևնույնն է, պետք է շարունակել պայքարել, դա է կյանքի չգրված կանոնը: Չեմ կարծում, որ այս աշխարհում երբևէ սեր ու խաղաղություն կհաստատվի, քանի դեռ մարդը *ԱՊՐԱՆՔ* է, գումար աշխատելու միջոց:

- Այո...ոմանք, գիտակցելով այդ ամենը, մի կողմ են քաշվում, որովհետև հասկանում են, որ ոչինչ չեն կարող փոխել: Փոխարենն իրենց կյանքն են բարելավում՝ առանց դիմացինի

նկատմամբ ատելություն դրսևորելու, ու իրենց տանիքն են շենացնում՝ առանց հետաքրքրվելու, թե ինչ է կատարվում այս անհասկանալի աշխարհում:

- Բայց ես կարծում եմ, որ դա ճիշտ է, - ասաց Նոամը, - եթե շատերն այդպես անեն, ապա նրանց մեկ տոկոսը մեծ իշխանություն կունենա մնացածի վրա, ինչպես ներկայումս ունի մեկ տոկոս կազմող էլիտան:

- Ի՞նչ կարծիքի եք, Նոամ, - հարցրեց Թալեբը, - այն մասին, որ աշխարհում կրոնի դերը թուլանում է:

- Հնարավոր է, որ կրոնը ընդհանրապես վերանա մարդկանց կյանքից, հարգելի Թալեբ: Սակայն կարծում եմ՝ կարևոր է պահպանել բարոյականության կանոնները: Մարդիկ, ճիշտ է, բնազդաբար կարողանում են տարբերել բարոյականությունը անբարոյականությունից, բայց եթե շարունակ գովազդեն ու տարածեն անբարոյականությունը, միգուցե այդ բնազդն էլ կորի: Իսկ անբարոյականության դեմ պայքարելու միակ միջոցը կրթվելն է:

- Կրթվելը: Այո՛, ես կարծում եմ, որ կրթվելը մարդու արժանապատվությունը պահպանելու միակ ճանապարհն է ու բազմաթիվ խնդիրների լուծումը:

- Այո՛, ընկերս:

Ապա Նոամը ձեռքը պարզեց, Թալեբն էլ պինդ սեղմեց այն ու ասաց.

- Հաճելի զրույց ունեցա Ձեզ հետ, ընկեր: Թող հաջողությունը միշտ ուղեկցի Ձեզ կյանքում: Հուսով եմ՝ մի օր հրեան ու մուսուլմանը կընկերանան, ու ոչ մի քաղաքական ուժ չի կարողանա խախտել նրանց ընկերությունը:

- Դրա ժամանակն էլ կգա, ընկե՛րս: Բարին ընդ Ձեզ:

Երկուսով դուրս եկան ռեստորանից ու բաժանվեցին՝ ամեն մեկը բռնելով իր ճանապարհը:

Թալեբն ընկավ մտքերի մեջ, ապա համոզվելով, որ իր զրույցը Նոամի հետ գրեթե ճշմարտություն էր, ժպտաց ու շարունակեց քայլել:

Գաղտնի տրիբունալը

Նիդեռլանդների Օստերբեկ քաղաքի կենտրոնում արտաքինից ոչ գրավիչ մի շենք է գտնվում: Ներսում կա մի մեծ սենյակ, որը համեստորեն կահավորված է շրջանաձև սեղանով ու դրա շուրջը դասավորված սովորական փայտե աթոռներով: Այստեղ միշտ տիրում է կիսախավար, որպեսզի մթության մեջ հավաքվածների դեմքերն ու դրանց արտահայտությունները աղոտ երևան: Սենյակի մթնոլորտը դավադրության տեսության երկրպագուներին կհիշեցներ նեո-նուար թրիլերները, որոնցում իրադարձությունները տեղի են ունենում կիսախավարի մեջ:

Այս սենյակում գաղտնի հանդիպումներ են կազմակերպում աշխարհի ամենազդեցիկ մարդիկ, ովքեր իրենց երկրների նախագահների վրա ավելի մեծ ներգործություն ունեն, քան վերջիններս իրենց ժողովուրդների:

Կարճն ասած, այս սենյակում որոշվում է երկրագնդի ճակատագիրը: Իսկ որոշողների անունները երբեք չեն հիշատակվում միջազգային լրատվականներում, քաղաքականության ասպարեզ նոր ոտք դրած քաղաքական գործիչները նույնիսկ չեն էլ լսել նրանց մասին, քանի որ այդ անունները հայտնի են միայն հիերարխիայի ամենաբարձր դիրքը զբաղեցնող մարդկանց:

Այս պատմվածքում էլ նրանց իրական անունները չեն շոշափվի՝ անվտանգության նկատառումներից ելնելով, փոխարենը կներկայացվեն կեղծանուններով:

***

Շրջանաձև սեղանի շուրջ կողք կողքի նստած էին երկու ազդեցիկ մարդիկ, ովքեր, շնորհիվ իրենց զբաղեցրած դիրքի, երբեք պատասխանատվության չէին ենթարկվում իրենց գործողությունների համար, նրանց ձեռքերում էին Երկիր մոլորակի բոլոր պետությունների ճակատագրերը:

Հստակ հայտնի չէր այդ երկուսի ազգային պատկանելիությունը, ենթադրաբար՝ Դեյվիդ Բերենշտայնը ԱՄՆ-ում ծնված հրեա էր, իսկ Նելսոն Ուոլդենը սերմանում էր գերմանացի բողոքական ընտանիքից: Այլ մանրամասներ հայտնի չէին:

Սենյակում, որտեղ նստած էին Բերենշտայնն ու Ուոլդենը, տարին մեկ անգամ կազմակերպվում էին գաղտնի ժողովներ, որոնց մասնակիցների թիվը հասնում էր 30-ի, սակայն քննարկումներին, որպես կանոն, ակտիվորեն մասնակցում էր նրանցից 9-ը, իսկ մնացածներն ունկնդրում էին ու գրառումներ անում: Սեղանի շուրջ, Բերենշտայնից ու Ուոլդենից ձախ, նստած էին Եվրամիության ներկայացուցիչ՝ Իդա Սորենսենը, Ֆրանսիայի և ֆրանկոֆոնյան երկրների ներկայացուցիչ Մանուել Մորոն, ԱՄՆ-ից

Ջերմեյն Սմիթը, Ազգերի համագործակցության ներկայացուցիչ, ազգությամբ բրիտանացի Հյու Մաքլարենը, Իսրայելից՝ Ավրամ Լեորը, Ռուսաստանից՝ Օլեգ Իվանովը և Հարավային Ամերիկայի ամենաազդեցիկ մարդը՝ Ավգուստո Սանչեսը:

Հենց նրանք էին կառավարում երկրագնդի 8 միլիարդ բնակչության զգալի մասին: Դավադրության տեսությունների սիրահարները պնդում էին, որ ազդեցիկ ինչյակի միակ շարժառիթը փողն ու իշխանությունն են, բայց ոչ ոք չէր համարձակվում պնդել, թե նրանց տեղում այլ կերպ կվարվեր:

Քննարկումը տեղի էր ունենում անգլերենով:

Նելսոն Ուոլդենը սկսեց ողջույնի խոսքով.

- Հարգելի տիկնայք և պարոնայք, շնորհակալ եմ այսօր մեր ժողովին մասնակցելու համար: Չեմ չարաշահի ձեր արժեքավոր ժամանակը և միանգամից կանցնեմ մեր բուն հարցին. այն է մինչև 2030թ. համաշխարհային նոր աշխարհակարգ ստեղծելու ծրագրին: Ընթացքում կարող եք բարձրաձայնել ձեր առարկություններն ու առաջարկությունները, եթե այդպիսիք լինեն, բայց խնդրում եմ չմոռանալ, որ ձեր գաղափարները պետք է աշխատեն հոգուտ համընդհանուր շահի:

Նստած ղեկավարները ուշադիր լսում էին, շատերը ձեռքում պատրաստի պահած գրիչներ ու մատիտներ ունեին՝ նշումներ կատարելու համար:

- Պարոն Բերենշտայնը կներկայացնի, թե մեր ծրագրի շրջանակներում հատկապես ո՞ր ոլորտներն են ենթակա լինելու փոփոխությունների, - շարունակեց Նելսոնը, - ապա նրա զեկույցից հետո, կխնդրեմ յուրաքանչյուրիդ կիսվել, թե ինչ աշխատանքներ եք կատարել վերջին ժամանակաշրջանում: Պարոն Բերենշտայն, խնդրեմ, խոսքը փոխանցում եմ Ձեզ:

- Շնորհակալ եմ, Պարոն Ուոլդեն, - գլուխը թեթևակի խոնարհեց Բերենշտայնը,- հարգելի գործընկերներ, մեր ծրագրով նախատեսվում է համաշխարհային էկոնոմիկայի զարգացման նոր ուղի բռնել, ու դրա շրջանակներում իրականացվելու են մի շարք պլաններ՝ բժշկության, իմիգրացիոն ծրագրերի, գաղափարախոսությունների, զենքի վաճառքի, փոքրամասնությունների իրավունքների, իրավադատական համակարգի, սպորտի ու մշակույթի, լրատվամիջոցների ու ամենավերջում բնակչության նվազեցման հետ կապված: Մինչև դրանց ավելի մանրամասն անդրադառնալը առաջարկում եմ ներկաներին զեկուցել, թե ինչ զարգացումների են իրագործել իրենց պատասխանատվության ներքո գտնվող երկրներում: Պարոն Ուոլդեն, դեռ այսքանը:

Ուոլդենը վերցրեց իր առջև դրված թղթերն ու կարդաց.

- Սկսենք Եվրամիության կառավարման հարցերով պատասխանատու տիկին Սորենսենից, խոսքը փոխանցում ենք Ձեզ:

- Շնորհակալ եմ: Նախ կցանկանայի ասել, որ Եվրամիության մի շարք երկրներում գրանցվել է տնտեսական աճ՝ պայմանավորված հասարակության որոշումների վրա արդյունավետ ազդեցությամբ, որում մեծ ներդրում ունեն մեր կողմից հովանավորվող լրատվամիջոցները: Լրատվամիջոցներն իրենց գործը լավ են կատարել՝ բարձրաձայնելով այնպիսի թեմաներ, որոնք դեռևս 10 տարի առաջ տաբու էին համարվում, իսկ ներկայումս սոցիալ հարթակներում ու իրավունքների պաշտպանության ակցիաների ընթացքում նոր սերնդի հազարավոր ներկայացուցիչներ պաշտպանում ու խրախուսում են այն ծրագրերը, որոնք մենք պլանավորել ենք տարիների ընթացքում: Այսպես օրինակ՝ լրատվամիջոցների ու սոցիալ հարթակների միջոցով կարողացել ենք բժշկության ոլորտում եկամտի աճ արձանագրել Գերմանիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Չեխիայում, Շվեդիայում և Նորվեգիայում՝ մոտ 40%-ի չափով:

- Խոսքը սեռափոխության վիրահատությունների մասի՞ն է, - հարցրեց Բերենշտայնը:

- Այո, - պատասխանեց Սորենսենը, - նույնիսկ որոշ պետություններ առաջին քայլերն են կատարել տրանսգենդերների իրավունքները պաշտպանելու հարցում՝ նրանց արտոնություններ տալով աշխատանքի տեղավորման և հասարակության մեջ ինտեգրման հարցերում:

- Տիկին Սորենսեն, ասացեք խնդրեմ, ինչ արժե այդիպիսի մեկ վիրահատությանը, - հարցրեց Բերենշտայնը:

- Կախված է երկրից, օրինակ՝ Ֆրանսիայում ու Գերմանիայում՝ 5-ից միչև 10 հազար եվրո, Իսպանիայում՝ 18-ից մինչև 21 հազար եվրո:

- Թույլ տվեք ընդհատել և մի բան ավելացնել,- միջամտեց Ազգերի համագործակցության ներկայացուցիչ Հյու Մաքլարենը,- Կանադան վերջերս օրենք ընդունեց այն մասին, որ սկսած 13 տարեկանից երեխաները, առանց ծնողների թույլտվության, կարող են ենթարկվել սեռափոխության վիրահատության: Ընդ որում վիրահատության համար նախատեսված գումարը գանձվելու է ծնողների ապահովագրական հաշվից, ինչը անհնարին կդարձնի նրանց համար որևէ կերպ խոչընդոտելու վիրահատությանը:

ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ջերմեյն Սմիթը բարձրացրեց ձեռքը և, Ուոլդենից խոսելու թույլտվություն ստանալով, ասաց.

- Մենք Կանադայի մակարդակին դեռ չենք հասել օրենքի տեսանկյունից, բայց կարծում եմ, որ հետագայում նույնպես կգնանք այդ քայլին, պարզապես մեզ ժամանակ է պետք, որպեսզի հասարակության մեջ ավելի խորը սերմանենք այն գաղափարը, որ այդ ամենն արվում է հանուն դեմոկրատիայի, իսկ դեմոկրատիային դեմ գնացողները մեր հասարակությունում տեղ չունեն: Մեզ մոտ ՁԼՄ-ների մեծ մասը ինտեգրել է «ձախ ազատական» գաղափարախոսությունը, ու հեշտությամբ արմատախիլ ենք անում այն ամենը, ինչ փորձում են փրկել կոնսերվատիվները կամ նեո-կոնները: Ավելացնեմ նաև,

որ, ի շնորհիվ սոցիալական հարթակների ու լրատվամիջոցների, խոսքի սահմանափակում ենք իրականացնում՝ մեզ ոչ ցանկալի կարծիքները «ատելության խոսք» որակավորելով: Վերադառնալով բժշկության ոլորտին՝ նշեմ, որ ոչ միայն սեռական վիրահատություններն են եկամտբեր, այլ նաև պատվաստանյութերի մշակումը, իսկ դրա համար կարծում եմ պետք է շարունակենք ստեղծել նոր վիրուսներ:

Ուոլդենը, որ ուշադիր լսում էր այդ ողջ ընթացքում, հարցրեց.

- Ասացեք խնդրեմ, պարոն Սմիթ, ինչպես եք դուք համագործակցում Չինաստանի հետ, որը, ինչպես բոլորիս հայտնի է, մեր գաղտնի կազմակերպությունամ անդամ չէ: Ճիշտ է՞, որ տանուլ եք տալիս գերիշխանության հարցում:

- Ոչ, պարոն Ուոլդեն, - գլուխը բացասական շարժեց Սմիթը, - մենք Չինաստանի հետ փորձում ենք ունենալ բարիդրացիական հարաբերություններ, որպեսզի նրանք չփորձեն կառավարել մեզ: Խնդիրը կայանում է նրանում, որ չինացիները տարիներ շարունակ զբաղվել են ամերիկացի ու եվրոպացի օգտատերերի անձնական տվյալների առքով, և հիմա, երբ ստեղծել են իրենց սոցիալական ցանցերը, կարողանում են ազդել մեր բնակչության վարքագծի վրա՝ դեգրադացնելով նրանց, որպեսզի հեշտությամբ հաղթեն տեղեկատվական պատերազմում: Դրա ամենավառ օրինակը ամբողջ աշխարհում հայտնի չինական սոցիալական ցանցն է, որտեղ խիստ տարբերակված բովանդակությամբ կարճ հոլովակներ են ցույց տալիս, դեգրադացնող՝ ամերիկացի օգտատերերի համար ու կրթող՝ չինացիների համար: Իսկ մենք դրա դեմ ոչինչ չենք կարողանում անել: Մենք չենք կարող արգելել այդ սոցիալական ցանցերից օգտվելը, մարդկանց այդպես բացահայտորեն ազատությունից զրկելը կբերի քաոսի, ու մեր հետագա ծրագրերի իրագործումը հարցականի տակ կդնի: Հարկավոր է ժողովրդավարության քողի տակ անել այն, ինչ չինացիներն են անում: Ու ամենակարևորը՝ մեզ պետք է, որ տվյալների հոսքը միայն մեր ձեռքերում լինի: Ի վերջո Չինաստանում արգելված են մեր գիգանտ տեխնոկրատիվ կազմակերպությունները:

- Պարզ է, պարոն Սմիթ: Ինչևիցե, սեռական հեղափոխության առումով դուք Եվրոպայի համար մեծ օրինակ եք, խնդրեմ ներկայացրեք, ինչ եք ձեռնարկել այդ ուղղությամբ վերջին ժամանակահատվածում:

Սմիթն իր առջև դրված թղթերի մեջ գտավ անհրաժեշտն ու սկսեց կարդալ.

- ԱՄՆ-ում վերջին ժամանահատվածում մենք հաջողություններ ենք գրանցել հետևյալ ոլորտներում.

Վերջին 7 տարվա ընթացքում ավելի քան 1 միլիոն սեռափոխության վիրահատություններ են իրականացվել, հետագա դեղորայքային բուժմամբ, ինչին հաջորդել է երկրորդ վիրահատությունը:

Շոու բիզնեսի ու ֆիլմերի միջոցով պրոպագանդել ենք գեյերի իրավունքները, խրախուսել սեռափոխության գաղափարը: Լրատվամիջոցներն իրենց գործը

կատարում են անքակտելիորեն, մեր գաղափարների հակառակորդներին թույլ չենք տալիս տեղ ունենալ այն պլատֆորմաներում, որտեղ աուդիտորիան գերազանցում է կես միլիոնը: Մեր գործընկերների՝ դոնորների ու լոբբիստների միջոցով հովանավորում ենք ֆեմինիզմի ակցիաները: Ֆեմինիզմի ուժեղացման հետևանքով տղամարդկանց առնականությունը թուլացնելու բազում ծրագրեր են մշակվել, ստեղծվում են կանանց պաշտպանության հիմնադրամներ: Դատական համակարգում մեր ազդեցության շնորհիվ ներկայումս միջինում 10 ամուսնալուծվողներից 8-ի դեպքում դատը շահում են կանայք, դրանով տղամարդկանց դարձնում ենք խոցելի ու ավելի հեշտ կառավարվող:

Տեխնոկորպորացիաներից գնված օգտատերերի անձնական տվյալները օգտագործում ենք, որպեսզի ազդենք նրանց ընտրությունների ու որոշումներ վրա՝ սկսած քաղաքական ընտրություններից մինչև անպիտան ապրանքներ գնելը:

Մեր էկոնոմիկան աճել է 47%-ով ի շնորհիվ այն ծրագրերի, որոնք իրագործվել են վերջին 7 տարում: Առայժմ այսքանը:

Ջերմեյն Սմիթը թղթերը մի կողմ դրեց, իսկ Բերենշտայնը շարունակեց.

- Շնորհակալ եմ, պարոն Սմիթ: Մինչև 2030թ. ԱՄՆ-ում մեր գործընկերների համար կարևոր կլինեն հետևյալ ծրագրերի իրագործումը.

- պատվաստանյութերի նոր նմուշներ արտադրելը,
- լրատվամիջոցների օգնությամբ մարդկանց վստահությունը շահել և ձախակողմյան գաղափարախոսությունով մարքսիզմի գաղափարին մոտենալը,
- նոր ռասա ձևավորելու համար իմիգրացիոն ծրագրեր մշակելը,
- փոքրամասնությունների իրավունքները մեծամասնության իրավունքներից վեր դասելը,
- սպորտում, մշակույթում ու զվարճեցնող միջոցառումներում պրոպագանդելն այն, ինչը ընդունված չէ:

Բերենշտայնը այս ամենն ասաց մի շնչով, ապա իր առջև դրված ջրով լի բաժակից մի կում արեց ու շարունակեց.

- Մինչև անցնելը հաջորդ թեմային, կցանկանայի ատենախոսություն կարդալ:

Մենք այս աշխարհի տիրակալներն ենք: Մենք հավատարիմ ենք մեր ծրագրերին, իսկ մեր ծրագրերի հիմնական նպատակը աշխարհում քաոս ստեղծելն է՝ այն կառավարելի դարձնելու համար: Մեր կազմակերպությունը հիմնադրվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ու դարձավ ամենաազդեցիկը աշխարհում: Ինչու ե՞նք իրագործում այս ծրագրերն ու ի՞նչ նպատակներ ենք հետապնդում: Հանուն փողի ու իշխանության, որ յուրաքանչյուրս ունի: Մենք չենք հավատում գերբնական ուժերին, բայց մարդկանց մոլորության մեջ ենք քցում գերբնական ուժերի մասին միֆերով, մենք

չենք հավատում պատերազմների պատահականությանը, բայց մարդկանց մոլորեցնում ենք, որ պատերազմը փրկության միակ միջոցն է, մենք չենք հավատում ընդհանրապես պատահականություններին, մենք դրանք ստեղծում ենք կանխամտածված ու մարդկանց համոզում, թե կյանքն է այսպիսին: Այս ամենը մեզ դարձնում է ուժեղ ու անձեռնմխելի: Մեր կազմակերպությունը գոյատևելու է դեռ շատ երկար, իսկ նրանք, ովքեր կփորձեն բացահայտել մեր ծրագրերը, կվերացվեն: Պետություններում, որոնք մեզ չեն ենթարկվում, կներդնենք ագենտներ, կհովանավորենք նրանց, արևմտյան պետությունների լրատվամիջոցները նրանց մասին դրական կարտահայտվեն, որպեսզի ժողովուրդը հաջորդ ընտրություններում իր ձայնը տա մեր դրածոյին: Եթե մեր դրածո մարդը տանուլ տա ընտրություններում կամ հալածանքների ենթարկվի, լրատվամիջոցների օգնությամբ կտարածենք, որ այդ պետությունում ժողովրդավարություն չկա ու նրանց կհրահրենք պատերազմի՝ սերմանելով այն գաղափարը, որ երկիրը արժանի է նոր ղեկավարի: Մենք կօգտագործենք մեր բոլոր գործիքները՝ հանուն փողի ու իշխանության:

Ծափահարեցին բոլորը, բացի իննյակից:

Բերենշտայնը, ժամանակ չկորցնելով, հաջորդ հարցն ուղղեց Իսրայելի ներկայացուցիչ Ավրաամ Լեորին.

- Պարոն Լեոր, շնորհակալ եմ Ձեր արժեքավոր ժամանակը տրամադրելու համար: Ինչպես գիտեք, մեր ծրագրերում մենք մեծ կարևորություն ենք տալիս Իսրայելի բարգավաճմանը, և բոլորիս շահերը համընկնում են մեկ համընդհանուր գաղափարի շուրջ, այն է՝ Իսրայելը Մերձավոր Արևելքում պետք է լինի գլխավոր դերակատար: Մեր ծրագրերում է արաբ-իսրայելական հակամարտությունը հօգուտ Իսրայելի հանգուցալուծելը, ինչպես և նախկինում է եղել: Բացի այդ մենք շարունակելու ենք անհրաժեշտ քայլեր ձեռնարկել հակասեմականությունը վերջնականապես արմատախիլ անելու ու սիոնիզմի գաղափարախոսությունը իսրայելցի երիտասարդության շրջանում տարածելու ուղղությամբ: Իսկ այժմ կխնդրեմ Ձեզ ներկայացնել, ինչ ծրագրեր եք իրագործել վերջին ժամանակաշրջանում:

Ավրաամ Լեորը, որը մասնակիցներից ամենատարիքովն էր, սկսեց իր զեկույցը, նրա ձայնի մեջ զգացվում էին մետաղական ելևեջներ և նա իր ամբողջ կեցվածքով ասես ֆիլմի անտագոնիստը[1] լիներ:

- Շնորհակալ եմ, տիկնայք և պարոնայք: Շնորհակալ եմ, որ հավատարիմ եք մնում Իսրայելի պետությանը և ձեր գիտակցության մեջ սերմացած է այն փաստը, որ Իսրայելը երկրի երեսից երբեք չի ջնջվելու, ինչը փորձում են անել այն 30 պետությունները, որոնք Իսրայելին չեն ճանաչում որպես պետություն: Մեզ համար նրանք, սակայն, խնդիր չեն հանդիսանում, ձեր օգնությամբ մենք կհասնենք դիվանագիտական հաջողությունների ու կստիպենք նրանց ճանաչել Իսրայել պետությունը՝ վերջապես մոռանալով Պաղեստինի մասին: Վերջին տարիների ընթացքում, շնորհիվ ԱՄՆ-ի հրեա

լոբբիստների, մենք գրանցեցինք բազմաթիվ հաջողություններ, որոնց թվում են տնտեսական աճն ու մարդկանց ավելի կառավարելի դարձնելը, Եվրոպայում հասանք նրան, որ հակասեմականության ու Հոլոքոսթի ժխտման դեմ օրենքներ են սահմանվել: Այդ օրենքներով նախատեսված են տուգանքներ և նույնիսկ ազատազրկություն: Մենք այնպես կանենք, որ մյուս ցեղասպանությունները շատ չհիշատակվեն: Հոլոքոսթի հանդեպ պետք է շարունակ յուրահատուկ վերաբերմունք ցույց տալ, դրա մասին ավելի շատ խոսել, քան 19-րդ դարի առաջին Հայոց ցեղասպանության, Ռուանդայի ցեղասպանության կամ էլ ներկայումս Չինաստանում «ուգյուրների» հանդեպ տեղի ունեցող ցեղասպանության մասին: Վերջին տարիներին էքսպանսիոնիստական քաղաքականություն ենք վարում, բայց փորձում ենք այնպես անել, որպեսզի զուգահեռներ չանցկացվեն Գերմանիայի նացիստական քաղաքականության հետ: Երբ մեզ մեղադրում են Պաղեստինի հանդեպ անօրինական քայլեր ձեռնարկելու, հաշտության պայմանագրերը խախտելու մեջ, մենք, ի պատասխան, նրանց հակասեմականության մեջ ենք մեղադրում, ինչը մեր հաղթաթուղթն է: Դրա համար ուզում եմ շնորհակալություն հայտնել լոբբիստներին ու այստեղ ներկա գտնվող իմ գործընկերներին: Համոզված եմ, որ այսպես էլ կշարունակվի:

Ապա կատակով ավելացրեց.

- Այլ տարբերակ չունեք: Ստիպված եք լինելու շարունակել՝ հաշվի առնելով աշխարհով մեկ սփռված մեր հրեական իշխանությունը:

Բերենշտայնը, որ ուշադիր լսում էր նրան, միջամտեց.

- Պարոն Լեոր, ես էլ եմ հրեա, բայց հրեականության գաղափարին այդքան մեծ կարևորություն չեմ տալիս, ու չեմ կարծում, որ այստեղ մեր նպատակը մի երկրի շահերի պաշտպանելն է՝ ի վնաս մյուսների: Իսրայել պետությունը գոյություն ունի այն պատճառով, որ ցեղասպանություն է տեղի ունեցել: Ձեր դիվանագիտության բարձր մակարդակը պահելով՝ կարող եք պաշտպանել Իսրայելը դարեր շարունակ, ինչը խրախուսելի է, ի վերջո մենք հրեաներս պետք է ունենանք մեր հողը:

- Պարոն Բերենշտայն, մի մոռացեք, որ առանց Իսրայելի այն ծրագրերը, որոնք մշակում եք այստեղ, երբեք կյանքի չեն կոչվի, - հակադարձեց Լեորը, - Բացի այդ, մի շարք ծրագրերի հիմքը դրվել է հենց մեր եղբայր հրեաների կողմից, ու դրանց իրագործումը պահանջելու է լուրջ ֆինանսավորումներ, որոնք կարող են իրականացնել հրեաները:

- Պարոն Լեոր, ընդունում եմ, որ աշխարհի տիրակալներն ենք, - թեթևակի ժպտաց Բերենշտայնը, - բայց, ի հարգանս մեր գործընկերների, կարծում եմ՝ չարժե շեշտել Իսրայելի կարևորությունը մյուսների համեմատ: Կարևորը 2030թ.-ի հեռանկարային պլանն է, որ պետք է իրագործենք բոլորս միասին:

Ուոլդենը, որ երկար ժամանակ լուռ լսում էր, խախտեց լռությունն ու ասաց.

- Հարգելով երկու կողմերի տեսակետները՝ կցանկանայի հարց ուղղել հավաքվածներին: Ինչ եք վերջերս արել Իսրայելի համար: Խնդրում եմ սկսել Ֆրանսիայից:

Ֆրանսիայի ներկայացուցիչ Մանուել Մորոն սկսեց.

- Հակասեմականության դեմ օրենքներ ենք մշակել, որպեսզի թույլ չտանք հրեաների հանդեպ բացասական վերաբերմունքի արտահայտություններ, Հոլոքոսթի ժխտումը պատժում ենք տուգանքներով ու տարեկան միլիարդավոր դոլարներ ենք տրամադրում Իսրայելին: Մենք նույնիսկ, հրեաների հանդեպ հարգանքից ելնելով, չենք խոսում պաղեստինցիների նկատմամբ նրանց կողմից զինված առճակատումների մասին, չենք լուսաբանում, թե ինչ է տեղի ունենում Իսրայելի ու Պաղեստինի կենտրոնական ու Գազայի հատվածներում:

Ապա խոսեց Օլեգ Իվանովը Ռուսաստանից.

- Հաշվի առնելով, որ Սովետական Միության կոմկուսի անձնակազմի գրեթե 80%-ը հրեական ծագում ուներ, իսկ ժամանակակից Ռուսաստանը համարվում է նրա ժառանգը, հրեականության հանդեպ վերաբերմունքը դեռ բարձր մակարդակի վրա է պահվում: Դպրոցներում երեխաներին սովորեցնում ենք, որ հրեաներն այս մոլորակի ամենից հալածված ազգն են եղել ու դեռ շարունակում են մնալ, այսպիսով մենք պայքարում ենք հակասեմականության հետ:

ԵՄ-ից Իդա Սորենսենը, որ որոշ փաստաթղթերը պատրաստի պահած անհամբեր սպասում էր հրեականության թեմայի շուրջ խոսելու իր հերթին, մի փոքր առաջ թեքվելով իր տեղից, սկսեց.

- Եվրոպական շատ երկրներում գործում են հրեաների կողմից մշակված ծրագրերը, ներառյալ իմիգրացիոն ծրագիրը և մարքսիզմի գաղափարախոսության տարածումը լիբերալիզմի անվան տակ: Նշեմ, որ իմիգրացիոն ծրագրերի շրջանակներում մենք՝ եվրոպացիներս, նույնպես կողմ ենք հրեաների տեսակետին ու կարծում ենք, որ այլազգիները՝ հիմնականում Աֆրիկայից գաղթածները, նպաստում են մեզ մոտ տնտեսական աճին: Չնայած նրան, որ գաղթածները հաճախ հանցագործությունների ու բռնությունների են դիմում, սակայն մինչ այժմ դա պատճառ չի հանդիսացել շեղվելու մեր ծրագրերից, և վստահությամբ կարող եմ ասել, որ ապագայում ևս նման միտում չի լինելու:

ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ջերմեյն Սմիթի ողջ կեցվածքը վկայում էր այն մասին, որ նա հոգնել էր քննարկումից, սակայն իրականում ուշի ուշով հետևում էր զարգացումներին, ու երբ խոսելու իր հերթը հասավ, միանգամից հավաքեց իրեն, դրեց ակնոցն ու սկսեց.

- ԱՄՆ-ն առանց Իսրայել ոչինչ է, սակայն Իսրայելն էլ առանց ԱՄՆ է ոչինչ, ու կարծում եմ աշխարհում չկան այնպիսի ամուր դաշնակցական կապեր, ինչպիսին մերն են: Հրեաների հովանավորությամբ՝ մեզ մոտ նույնպես ակտիվորեն տարածվում է

մարքսիզմի գաղափարախոսությունը լիբերալիզմի անվան տակ, տեղի է ունենում ֆեմինիզացում՝ աշխատավայրերում կանանց քանակը գնալով ավելանում է, մերձավոր Արևելքում պոտենցիալ թշնամիներին մաքսիմալ թուլացնում ենք, - մի շնչով արտաբերեց Սմիթը ու փոքր դադարից հետո ավելացրեց,- թեև Ռուսաստանը մեզ որոշ հարցերում խանգարում է...

Ռուսաստանի ներկայացուցիչը քմծիծաղ տվեց.

- Մենք, որպես գերտերություններ, միշտ մրցակցել ենք միմյանց հետ՝ հասարակությանը մոլորեցնելով հեքիաթներով, թե տեղի է ունենում բարու ու չարի պայքար, այնինչ իրականում տեղի է ունենում շահերի միավորում:

Ջերմեյն Սմիթը, սակայն, չգնահատեց Իվանովի սարկազմը, նրա տոնը շատ սառն էր, երբ պատասխանեց.

- Պարոն Իվանովին կցանկանայի տեղեկացնել, որ իրենց երկրում կան բաներ, որոնք խանգարում են մեր գլոբալ ծրագրերի իրագործմանը:

- Այո՛, կան բաներ, որ մենք չենք ընդունում ու չենք էլ ընդունելու, բայց դա չի խանգարելու մնացած ծրագրերի իրագործմանը:

Դեյվիդ Բերենշտայնը միացավ Սմիթին.

- Պարոն Իվանով, Եվրոպայում ու ԱՄՆ-ում տեղի ունեցող իրադարձությունները խիստ տարբերվում են ռուսաստանյան իրադարձություններից, այդ ինչո՞վ է պայմանավորված: Մեկ ընդհանուր աշխարհակարգ ստեղծելու մեր ծրագրերը ձեզ դուր չե՞ն գալիս:

- Պարոն Բերենշտայն, չգիտես ինչու, Ռուսաստանը միշտ քավության նոխազ է դառնում, բայց եկեք անդրադառնանք Կուբային, Հյուսիսային Կորեային ու Չինաստանին, որտեղ նույնիսկ չեն էլ կասկածում, թե փոքր կազմակերպությունը ինչ մեծ ազդեցություն ունի աշխարհի երկրների ճակատագրերի վրա, ինչու՞ դրա մասին չենք խոսում:

Ավրամ Լեորը ևս միացավ այս քննարկմանը.

- Պարո՛ն Իվանով, տեսեք քանի երկրներ կան, որ չեն ենթարկվել մեր ծրագրերին ու ինչ ճակատագրի են արժանացել: Իրաքը, Սիրիան, Լիբիան, ապագայում էլ Իրանը: Մեկ ընդհանուր աշխարհակարգի ձևավորումը անխուսափելի է, գլոբալիզացիան աշխարհի վերջնակետն է լինելու, ու չեմ կարծում, թե կգտնվի որևէ մեկը, ով կկարողանա վերացնել ահռելի ուժ ունեցող մեր կազմակերպությունը:

Նելսոն Ուոլդենը միջամտեց՝ դադարեցնելով վիճաբանությունը.

- Հարգելի պարոնայք, չեմ կարծում, որ սա ճիշտ տեղն ու ժամանակն է վիճաբանելու ու միմյանց տեսակետներով ճնշելու համար, ուստի կխնդրեի այսօր շրջանցել այս թեման: Ինչպես գիտեք, մոտ ժամանակներս Մալթայում տեղի է ունենալու «Ազատ

որմնադիրների» ամենամյա միջոցառումը, որին ներկա են գտնվելու ավելի շատ մարդիկ, քան այս դահլիճում, և որի ժամանակ ավելի հանգամանորեն կարելի է քննարկել բոլորիս հուզող հարցերը: Իսկ առայժմ առաջարկում եմ փոխել հարցադրումների ֆորմատը ու շարունակել այլ կերպ: Ես հարցադրումներ կուղղեմ բոլորին, պատասխանները ստանալուց հետո անցում կկատարենք ձեր հարցերին և վերջում պարոն Բերենշտայնի հետ կներկայացնենք 2030թ. պլանը: Խնդրում եմ ձեռք բարձրացնել, եթե համաձայն եք:

Բոլոր մասնակիցները միահամուռ բարձրացրեցին իրենց ձեռքերը: Ուոլդենը բավարարված գլխով արեց ու անցավ իր հարցադրումներին.

- Հարգելի ղեկավարներ, խնդրում եմ ներկայացնել՝ ինչ անհրաժեշտ քայլեր եք ձեռնարկել ձեր պատասխանատվության տակ գտնվող երկրներում մեր ծրագրերը իրագործելու ուղղությամբ: Քննարկենք հետևյալ թեմաները՝ սպորտի ու մշակույթի ոլորտներում անհրաժեշտ փոփոխությունները, լրատվամիջոցների հետ համագործակցությունը, ներգաղթի հիմնախնդիրները, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, ընտանիքի ինստիտուտի թուլացումը, պատերազմների հրահրումն ու զենքի վաճառքը: Խնդրում եմ հերթականությամբ անցնել բոլոր հարցերի վրայով և տալ կարճ ու հիմնավոր պատասխաններ,- այդ ասելով Ուոլդենը սեղանին դրեց իր նշումներով թուղթը ու հանեց ակնոցը:

Բերենշտայնը ավելացրեց.

- Չմոռանանք, որ մեր ծրագրերում ներառված է «Դեպոպուլյացիայի ծրագիրը», արաբական աշխարհի թուլացումն ու կեղծ լոզունգների տակ թաքնված լիբերալիզմի առաջխաղացումը:

Առաջինը խոսեց Ավգուստո Սանչեսը, ով մեծ ազդեցություն ուներ Հարավային Ամերիկայի բանկերի վրա՝ բացառությամբ Կուբայի ու Վենեսուլայի:

- Փաստացի այնպես է ստացվում, որ մեր ծրագրերի իրագործման հարցում շեշտը հիմնականում դրված է ԱՄՆ-ի ու Եվրոպայի վրա, իսկ լատինական երկրներին այդքան էլ մեծ ուշադրության չի դարձվում տարբեր պատճառներով, - իր խոսքն այսպես սկսեց Սանչեսը, - բայց քանի որ, ես միշտ ներկա եմ գտնվում մեր ժողովներին, ապա իմ պարտքն եմ համարում հնարավորության սահմաններում իրագործել մեր ծրագրերը Հարավային Ամերիկայում:

Ապա պարզեց իր առջև դրված թղթերն ու սկսեց կարդալ.

- Անկախ բողոքի ակցիաներից ու մեր կողմից հովանավորվող նախագահներին գահընկեց անելու փորձերից՝ մենք կարողացանք համաշխարհային պանդեմիայի ժամանակահատվածում կառավարել բնակչությանը, ազդել նրանց որոշումների վրա, ինչի շնորհիվ ունեցել ենք «խեղճացած հասարակություն»: Այդ ժամանակահատվածում գրանցվել է հոգեբանական ծառայություններից օգտվողների աճ, բժշկության ոլորտում

կարողացել ենք մարդկանց զրկել ընտրելու իրավունքից՝ պարտադրելով ընդունել դեղամիջոցներ և ստանալ վակցինացիաներ: Ամուսնալուծությունների թիվը կտրուկ աճել է, ընդ որում դատարաններում ամուսնալուծության ժամանակ նախապատվությունը տրվել է կանանց՝ առանց հաշվի առնելու պատճառները: Բնակչության աճը կանխելու համար չափահաս դարձած երիտասարդներին սեռական կրթություն ենք տալիս, գովազդի միջոցով խրախուսում ենք կանխարգելիչ միջոցների օգտագործումը: Ինչ վերաբերվում է դեպոպուլյացիայի ծրագրին, կարծում եմ լատինական Ամերիկայում այն իրագործելու կարիք չկա, ի վերջո մեր մոտ ավելի շատ զբաղված են արտագաղթելու հարցերով:

Բերենշտայնը գլխով արեց ու ասաց.

- Ծնորհակալ եմ, պարոն Սանչես, կարծում եմ խելամիտ եք վարվում նման հարցերում, ուստի վստահում եմ Ձեզ շարունակելու, ինչպես հարմար եք գտնում, - ապա նայելով նստածներին, որոշեց հարցն ուղղել Աֆրիկայի ներկայացուցչին:

- Տիկին Մոնոնգո, կխնդրեմ Ձեզ պատասխանել պարոն Ուոլդենի կողմից առաջադրված հարցերին, մեր ծրագրերով սահմանված գործողություններից որոնք ե՞ք կատարել:

Ջաքլին Մոնոնգոն Աֆրիկայի ֆրանկոֆոնյան պետություններից մեկի մեծահարուստներից էր, նա Ռուանդայի ու Տանզանիայի զարգացման հարցում մեծ դեր էր խաղում ու Կիգալիի պատվավոր քաղաքացի էր: Ի տարբերություն մնացած ազդեցիկ մարդկանց, նա ավելի շատ աֆրիկյան պետությունների բարգավաճման հարցերով էր զբաղվում, բայց, ինչպես հայտնի է, լավագույն նպատակներին երբեմն բացասական գործողություններով են հասնում, արդյունքում էլ տուժվում է հասարակության միավորը՝ անհատը:

- Հարգելի գործընկերներ, ինչպես գիտեք, ի տարբերություն Եվրոպայի, աֆրիկյան երկրները բարգավաճելու շատ հնարավորություններ սխալ են օգտագործել, ու հիմա տարբեր կերպ են զարգանում, օրինակ՝ Ռուանդան աֆրիկյան Սինգապուր է դարձել, Տանզանիայում գիտակցում են, որ մարդը տնտեսությունը զարգացնելու լավագույն ռեսուրսն է, ՀԱՀ-ում սպիտակների ու սևամորթների միջև անհամերաշխությունը դեռ շարունակվում է, Մավրիտանիայում, Մալիում, Նիգերում, Չադում ու Սուդանում ստրկատիրությունը մինչ օրս օրինական է համարվում, Սվազիլենդում, Լեսոթոյում, Բոթսվանայում ու Զիմբաբվեում ՁԻԱՀ-ից մահացությունների կտրուկ աճ է գրանցվում, վերջին տարիների տվյալներով՝ մոտ 2 միլիոն բնակիչ վարակված է ՁԻԱՀ-ով, 30 հազարը մահացել են: Եթե նայենք դեպոպուլյացիայի տեսանկյունից՝ առավելություն է, իսկ եթե նայենք մահաբեր հիվանդության ամբողջ տարածաշրջանով մեկ տարածվելու վտանգի տեսանկյունից, ապա դա կանխելու համար առավելագույն ջանքերը պետք է գործադրվեն:

Բերենշտայնը, որ մինչ այդ ուշադիր լսում էր նրան, ընդհատեց.

- Տիկին Մոնոնգո, Դուք էլ լավ հասկանում եք, որ Աֆրիկայի խնդիրները երբեք չեն լուծվելու, քանի դեռ զինված բախումներ են լինում՝ մարրոկացիներն ու մավրիտանացիները 50 տարուց ավել է պայքարում են Արևմտյան Սահարայի համար, ինչպես հնդիկներն ու պակիստանցիները Քաշմիրի համար: Բացի այդ ուզում եմ հիշեցնել, որ մոտ 20 միլիարդ դոլարի գումար է տրամադրվել զարգացման նպատակներով ու դեպի Եվրոպա ուղեղների արտահոսք կազմակերպելու համար, սակայն, կաշառակեր քաղաքական գործիչները այդ գումարները օգտագործել են իրենց կյանքը դասավորելու համար: Ասելիքս այն է, որ, եթե այսպես շարունակվի, Աֆրիկայի կարևորությունը մեր հետագա ծրագրերի մեջ վերջին տեղում է հայտնվելու: Արդյունքում ոչ միայն Աֆրիկայի հեգեմոնիան կտապալվի, այլև, բազում հիվանդությունների դեմ պայքարելու միջոցներ չեք ստանա:

Մոնոնգոն գլխով հաստատում էր Բերենշտայնի բոլոր ասածները: Նա ինքն էլ լավ գիտեր, որ Աֆրիկան, մնացած մայրցամաքների համեմատ, ամենից թույլ զարգացածն է, որովհետև այնտեղ հիմնականում զբաղվում են կոռուպցիայով ու զինված հեղաշրջումներով:

- Պարոն Բերենշտայն, - շարունակեց Մոնոնգոն, երբ վերջինս ավարտեց իր խոսքը, - Նիգերիան, Անգոլան ու Քենյան հետևում են Ռուանդայի ու Տանզանիայի օրինակին, այնպես որ դեռ կան շանսեր, որ մնացած պետությունները ևս զարգացման ուղին կբռնեն: Ես հավատացնում եմ, որ կօգտագործեմ Աֆրիկայի պետությունների վրա ազդելու իմ ձեռքի տակ եղած բոլոր լծակները ու գալիք հանդիպմանն արդեն կզեկուցեմ կատարված զարգացումների մասին:

- Շատ լավ տիկին Մոնոգո: Նաև խրախուսեք աֆրիկացիների արտագաղթը դեպի Եվրոպա և ԱՄՆ, քանի որ Եվրոպայում վերջին ժամանակաշրջանում նկատվում է ծերության աճ, իսկ ԱՄՆ-ի բնակիչների մեծ մասը աշխատել չեն սիրում: Իմիգրացիոն ծրագրով մենք նոր աշխատողներ կներգրավենք, ի վերջո, խոսքը գնում է միլիարդավոր դոլարների մասին, որ կարող ենք շահել ոչ միայն մենք, այլև մեր ժառանգորդները:

- Բարի, այդ դեպքում կխնդրեմ իմ եվրոպացի գործընկերներին իրենց ծրագրերից երբեք չհանել «Իմիգրացիոն պլանը»:

- Նրանք չեն էլ պատրաստվում, որովհետև լավ հասկանում են իմիգրանտների կարևորությունը: Իսկ այն պետական գործիչը, ով դեմ կգնա այդ պլանին, երկար չի մնա իր պաշտոնին: Դա մեր որոշումն է:

Ջաքլին Մոնոնգոն շնորհակալություն հայտնեց ու ասաց, որ ավելացնելու ոչինչ չունի:

Նելսոն Ուոլդենը խոսեց.

- Հարգելի գործընկերներ, ուզում եմ շեշտել, որ ապագայում որոշ պետություններ հայտնվելու են խորը ճգնաժամի մեջ, ու չի բացառվում, որ ստեղծվեն նոր պետություններ: Բացի այդ, խնդրում եմ առանձնահատուկ ուշադրություն դարձնել

հետևյալ պետություններին՝ Իրան, Պերու, Ուկրաինա, Ռուսաստան, Հնդկաստան, Թայվան, Հոնկոնգ և Մյանմար: Անկախ մեզնից կարող են առաջանալ արտակարգ դրություններ, հեղաշրջումներ, և ձեր աշխատանքը պետք է կայանա նրանում, որ այդ պետությունների առաջնորդները լինեն մեր դրածոները, հակառակ դեպքում մեր ծրագրերի իրականացումը կարող է երկարաձգվել տասնյակ տարիներ:

Օլեգ Իվանովը, այդ ամենը լսելով, ասաց.

- Պարոն Ուոլդեն, ի՞նչ է սպասվում Ռուսաստանին, եթե խանգարի 2030թ. ծրագրի իրականացմանը:

- Ոչինչ էլ տեղի չի ունենա: Ծրագրերն, ամենայն հավանականությամբ, կիրագործվեն այն երկրներում, որտեղ մեր ազդեցությունը չի թուլանում: Ռուսաստանն արդեն իսկ ճահճի մեջ է, փոխանակ առաջնորդվեն նոր գաղափարախոսությամբ, նացիոնալիզմով են տառապում: Հիշեցնեմ, որ ծրագրերի հովանավորությունը գալիս է ԱՄՆ-ից, առանց ԱՄՆ-ի ազդեցության, ոչինչ չի կարող իրագործվել:

- Իսկ ծրագրերով նախատեսված ո՞ր դրույթները չի կատարում Ռուսաստանը,-հարցրեց Իվանովը:

- Չի ներգրավվում գլոբալիզացիայի ծրագրում: Վստահ եմ, դուք էլ՝ պարոն Իվանով, լավ գիտեք, թե այս ամենն ինչով է ավարտվելու,- պատասխանեց Ուլդենը սառը տոնով:

- Այո՛, գիտեմ, արևմտյան լրատվամիջոցներում Ռուսաստանին ներկայացնելու եք որպես հրեշավոր պետություն:

Ուլդենի տոնը հեգնական էր, երբ նա պատասխանեց Իվանովին:

- Շատ ուռճացնելու կարիք չի էլ լինելու, ինքներդ էլ գիտեք, որ ձեզ մոտ տիրում է բռնապետություն, ամեն քայլափոխին խախտվում են մարդկանց իրավունքները, իսկ կոռուպցիան իր մասշտաբներով չի զիջում աֆրիկյան երկրներին: Ասեմ ավելին, ամբողջ Աֆրիկայում այդքան կոռուպցիա չկա, ինչքան ձեզ մոտ:

- Ձեզ ինչու ե՞ն հուզում այդ հարցերը, պարոն Ուոլդեն: Ամենամյա միջոցառմանը բոլորովս պլանավորում ենք իրականացնել միասնական ծրագիր, բայց կան բաներ, որ թույլատրելիության սահմաններն են անցնում, ուստի մենք անհրաժեշտություն չենք տեսնում դրանք մեզ մոտ իրագործելու: Ինչու է՞ ձեզ մտահոգում կոռուպցիան Ռուսաստանում, երբ բոլորդ էլ նույն բանով եք զբաղված: Ռուսաստանը մերժում է իր տարածքում սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, նոր ռասայի ձևավորումը, բայց դա չի նշանակում, որ մենք բազմամշակութային պետություն չենք, ուղղակի դեմ ենք ազգային ինքնության վերացմանը, դեմ ենք ազգ հասկացության վերացմանը: Իսկ հիմա թույլ տվեք թվարկել, ծրագրերում նշված որ կետերին ենք մենք կողմ, - իր առջև դրված թղթերից առանձնացրեց մեկը ու սկսեց կարդալ, - Ռուսաստանը կողմ է մասնավորապես պատերազմներ խրախուսելուն, զենք

վաճառելուն, պանդեմիայի միջոցով բնակչության քանակի քչացմանը, իր քաղաքացիներին կառավարելուն, արաբական աշխարհի թուլացմանը հօգուտ Իսրայելի: Դեմ է կանանց դոմինանտությանը՝ ֆեմինիզմին, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը և այդ գաղափարի պրոպագանդմանը, իմիգրացիոն ծրագրին, որի արդյունքում կվերանա ռուս ազգություն-ինքնություն գաղափարը: Ռուսաստանը պատրաստ է հանդես գալու հրեշի դերում, դա այն զոհողությունն է, որին մենք կգնանք վերը նշված դրույթները չկատարելու համար:

Դահլիճում քար լռություն տիրեց, որը խախտեց Բերենշտայնը.

- Պարոն Իվանով, իմ երկարամյա փորձի շնորհիվ մի կարևոր բան եմ հասկացել՝ քաղաքականություն մեջ ոչինչ պատահական չի լինում, ամեն ինչ նախապես պլանավորված է, որովհետև մենք ենք պլանավորում: Ռուսաստանը միշտ հանդես է եկել չարագործի դերում, իսկ ԱՄՆ-ը փրկիչի: Ինքներդ էլ եք հասկանում, որ դա երկու գերտերությունների շահերից է բխում, ու ընդհանրապես աշխարհակարգի շահերից, որպեսզի մեր ծրագրերն էլ ավելի կատարելագործվեն ու իրագործվեն ի շահ մեզ՝ վերին դասի հիերարխիայի ազդեցիկ մարդկանց, առանց բացառության:

- Ի՞նչ եք ուզում դրանով ասել, - հարցրեց Իվանովը մտազբաղ հայացքով:

- Ասելիքս այն է, որ, ամենայն անկեղծությամբ, այն ծրագրերը, որոնք գործի են դրվում, իրենց նպատակին ծառայելու են, հակառակ դեպքում անախորժություն է տեղի ունենալու:

- Պարոն Բերենշտայն, - կողքից խոսեց Հյու Մաքլարենը, - թույլ տվեք մի բան էլ ես ասեմ մեր գործընկերոջը՝ Իվանովին:

- Խնդրե՛մ, ասացեք,- գլխով արեց Բերենշտայնը:

- Պարոն Իվանով, մեր 70 տարվա գործունեության ընթացքում, քաղաքականության մեջ, ինչպես նաև դրանից դուրս, տեղի են ունեցել բազում փոփոխություններ, որոնց առումով հասարակությունն իրեն շահողի դերում է զգում, քանի որ մենք նրանց տալիս ենք այն, ինչ իրենց է պետք: Քանի՛ արգելված պտուղներ են փորձել ու դրա դիմաց վճարել, քանի՛ սահմանափակ հասարակություններ ենք ունեցել, որ վճարել են ազատություն ձեռք բերելու դիմաց: Վճարել են թե՛ իրենց ունեցվածքով, և թե՛ իրենց կյանքով: Իսկ ինչ վերաբերվում է նրան, որ դուք դեմ եք որոշ ծրագրերի իրականացմանը, ապա դա չի արդարացնում այն փաստը, որ կոռումպացված բռնապետությունը, շարունակում է դեմ գնալ գլոբալիզացիային ու ապրում սեփական կապանքների մեջ:

- Պարոն Մաքլարեն, ես չեմ պատկերացնում, որ մեր պետությունը կգնա նույն ճանապարհով ինչ ԱՄՆ-ն վերջին 50 տարիններին, ու մի կարծեք, որ «ես» ասելով ի նկատի ունեմ միայն ինձ,- պատասխանեց Իվանովը:

- Ընդունում եմ, մանավանդ, որ Խորհրդային Միության կազմաքանդումից հետո դուք ցավոտ էիք տանում, ԱՄՆ-ի տիրակալության տակ լինելը: Սակայն պետք է ընդունենք, որ ԱՄՆ-ին շրջանցելը կամ գերիշխելը դատապարտված է ձախողման:

- Այդպիսի մտադրություն անգամ չունենք, պարոն Մաքլարեն, բայց կան բաներ, որոնք թույլ տալը վատ հետևանքների է հանգեցնելու:

- Դուք իրոք կարծում ե՞ք, որ մարդկանց ազատություն տալը ավելի վատ հետևանքների կհանգեցնի, քան հիմա մեր ծրագրերին դեմ գնալը, - միջամտեց Բերենշտայնը, - այնինչ, եթե նրանց տաք բավականաչափ ազատություն, նրանց մտքով չի էլ էլ անցնի հեղաշրջում կատարել:

- Ի՞նչ ազատության մասին է խոսքը, սեռակա՞ն,- հարցրեց Իվանովը:

- Ոչ միայն...

- Ես առաջարկում եմ այս թեմայի շուրջ այլևս չծավալվել, - կրկին միջամտեց Հյու Մաքլարենը, - հարգելի գործընկերներ եկեք անցնենք առաջ ու ի վերջո լսենք 2030թ. ծրագրի ընթերցումը:

- Մինչև ծրագրին անցնելը, Ձեր թույլտվությամբ, կցանկանայի մի հատված կարդալ ռուսական գրականությունից: Հատվածը Անատոլի Իվանովի «Հավերժության կանչ» գրքից է:

- Միայն թե չասեք, հեղինակը ձեր հարազատներից է, - ժպտալով ասաց Ավրամ Լեորը:

- Ո՛չ իհարկե, Իվանով ազգանունը Ռուսաստանում ամենից տարածվածն է, պարոն Լեոր:

- Գիտեմ, ամբողջ հրեական աշխարհը գիտի դրա մասին, ի վերջո մենք ձեզ հետ էլ ենք ապրել:

- Եվ կազմել բոլշեվիկյան կառավարության 80 տոկոսը, եթե չեմ սխալվում,- ասաց Իվանովը:

- Իհարկե, չեք սխալվում: Լավ, այլևս չեմ ընդհատի, խնդրեմ կարդացեք:

Օլեգ Իվանովը կանգնեց ու, նայելով իր ձեռքի թղթին, կարդաց.

“...Քաոս սփռելով, մենք աննկատ, իրենց իրական արժեքները կփոխենք կեղծերով եւ կստիպենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին: Գրականությունից եւ արվեստից մենք աստիճանաբար դուրս կմղենք նրա հասարակական էությունը. դուրս կմղենք նկարիչների մոտից ժողովրդի հոգու խորքում կատարվող գործընթացների պատկերման եւ ուսումնասիրության ցանկությունը, իսկ գրականությունը, թատրոնը, կինոն պետք է պատկանեն եւ փառաբանեն միայն ամենազազրելի մարդկային զգացումները: Մենք պետք է օգնենք եւ բարձրացնենք այնպիսիներին, որոնք կսկսեն սերմանել, սրսկել

մարդկային գիտակցությունում սեքսի, բռնության, սադիզմի, դավաճանության, այլ խոսքերով՝ ցանկացած անբարոյականության պաշտամունք: Պետության ղեկավարությունում մենք քաոս եւ անկարգություն կստեղծենք: Մենք աննկատ, բայց ակտիվ եւ մշտապես, կօժանդակենք չինովնիկների հիմարությունը, կաշառակերությունը, անսկզբունքայնությունը: Ազնվությունը եւ օրինավորությունը կծաղրվեն, կդառնան անցյալի մնացուկ ու ոչ մեկին այլեւս պետք չեն լինի: Ստահակությունն ու հանդգնությունը, սուտն ու կեղծիքը, հարբեցողությունն ու թմրամոլությունը, միմյանց հանդեպ անասնական վախն ու անամոթությունը, դավաճանությունն ու ժողովուրդների թշնամությունը մենք ճարպկորեն եւ աննկատորեն կսերմանենք: Եվ միայն քչերը կենթադրեն կամ կհասկանան, թե ինչ է կատարվում: Բայց նման մարդկանց մենք կդնենք անօգնական վիճակի մեջ, կդարձնենք խեղկատակ: Կգտնենք միջոցներ՝ նրանց զրպարտելու եւ հասարակության տականք հայտարարելու...”:

Բոլորն ուշադիր լսում էին: Ուոլդենն ու Բերենշտայնը հեգնանքով լի հայացքներ փոխանակեցին:

Ուլդենը ընդատեց Իվանովին.

- Պարոն Իվանով, Անատոլի Իվանովը, ինչպես Օրվելը ու նրա նման անհատները, հենց մտնում է «քչերը կենթադրեն կամ կհասկանան, թե ինչ է կատարվում» բնութագրի մեջ: Բայց դուք էլ եք լավ հասկանում, որ այս ամենն արվում է հանուն մարդկանց կառավարելի դարձնելու նպատակի:

- Այո՛, ի վերջո մարդկությունը ստեղծվել է որոշակի անհատների կողմից կառավարվելու համար,- հաստատեց Իվանովը:

Դեյվիդ Բերենշտայնը շնորհակալություն հայտնեց նրան: Իվանովը զբաղեցրեց իր տեղն ու մյուսների հետ սկսեց սպասել են 2030թ. պլանի ընթերցմանը:

Այս անգամ Բերենշտայնը ոտքի կանգնեց և ակնոցը հագնելով, սկսեց.

- Տիկնայք և պարոնայք, մեր հանդիպումը մոտենում է իր ավարտին, ինչպես խոստացել էինք, հրապարակում ենք 2030թ. ծրագիրը: Այսպես ուրեմն.

Ֆինանսական մեծ կորպորացիաները շարունակ պետք է հովանավորեն ընթացիկ պատերազմները ու հրահրեն նոր պատերազմներ, որոնք կնպաստեն գլոբալիզացիային: Դրա հետ մեկտեղ գլոբալիզիայի ծրագրում չպետք է հայտնվեն հակադիր բևեռներում, սուվերեն պետությունները պետք է հասկանան, որ աշխարհը շարժվում է մեկ ծրագրով, մեկ կառավարության իշխանության ներքո: Այնպես որ, բոլոր ջանքերը պետք է ուղղվեն «Նոր աշխարհակարգ» ստեղծելուն: Գլոբալիզացիայի ծրագրի իրագործման մեջ ներգրավելու ենք փոփ կուլտուրայի հայտնի ու ազդեցիկ մարդկանց, որոնք կկարողանան հեշտությամբ համոզել հանրությանը, որ մեծ կորպորացիաների կողմից հովանավորվող ձախակողմյան գաղափարախոսությունը կբերի խաղաղության ու արդարության: Մանիպուլյացիոն գործիքներով նաև կներառենք երեխաներին, ովքեր կխրախուսեն մեր

ծրագիրը, երեխաների դեմ հարձակումները լրատվամիջոցները կորակավորեն որպես «մանկահասակների հանդեպ ատելություն»: Փոքրամասնությունները հետզհետե շատանում են, ու ցանկացած պետություն, որը մտնում է այս գաղտնի կազմակերպության կազմի մեջ, պետք է լեգալիզացնի ու պրոպագանդի նրանց իրավունքներ՝ ամեն կերպ նպաստելով դեպոպուլացիայի ծրագրերին: Բնակչության հետագա աճը աղետային կլինի սահմանափակ ռեսուրսների առումով, ուստի պետք է ամեն կերպ արգելակել հետագա աճն ու քչացնել թվաքանակը: Միլիարդավոր դոլարներ կտրամադրվեն, որպեսզի պրոպագանդվեն ազատ հարաբերությունները, ընտանիք կազմելը գնա հետին պլան, երրորդ երկրներից իմիգրանտների ընդունելով ու խրախուսելով նրանց հետ ամուսնությունները՝ կնպաստենք նոր ռասսայի ձևավորմանը, մուլատիզացմանը, ազգային ինքնության վերացմանը, որպեսզի ազգային արժեք կոչվածը վերանա: Գլոբալիզացիայի հիմքում ընկած է մեկ համաշխարհային բանակ ստեղծելու ծրագիրը, որը իրագործվում է ՕՆԱՏ-ի պատասխանատվության ներքո, մեկ կենտրոնական համաշխարհային բանկի հիմնադրումը, որը սկսվում է Անգլիայից ու ԱՄՆ-ի ֆեդերալ ռեզերվից: Բժշկության ոլորտում բազմաթիվ անպիտան պատվաստումներ իրականացնել՝ մարդկանց կառավարելի դարձնելու և նրանց տեղաշարժը վերահսկելու նպատակով: Սահմանափակել խոսքի ազատությունը, ու ծրագրի կետերից որևէ մեկին դեմ գնալը պիտակավորել որպես «ատելության խոսք», հայտնի մարդկանց զրկել հովանավորությունից կամ արգելել սոցիալական ցանցերում նրանց պրոֆիլները, եթե դեմ խոսեն մեր ծրագրերին: Չեղարկել նաև հանրահայտ հոգեբաններին, մտածողներին, զրկել նրանց լիցենզիաներից, որպեսզի չխանգարեն գլոբալիզացիայի հաստատմանը: Թուլացնել տղամարդկանց առնականությունը, ու տղամարդու բնազդը պիտակավորել, որպես «թունավոր առնականություն»: Այդ լոզունգի տակ պետք է տղամարդկանց շեղել, ենթարկել կանանց, կանանց տալ դոմինանտություն, քանզի հեշտ կառավարվող են: Այսպիսով ծրագրում ներառված է «ֆեմինիզմի երրորդ ալիքը»: Կարևորվում է այն հանգամանքը, որ առաջիկա տարիներին ֆեմինիզմի գաղափարախոսությունն ավելի շատ մոտենա ձախակողմյան գաղափարներին, այլասերվածությունը դառնա նորմա, ազատության ու անկախ անհատականության նոր չափանիշ: Կանանց խրախուսել աբորտի գնալու՝ հանուն բնակչության նվազեցման: Բանկերը արհեստական ճգնաժամ պետք է ստեղծեն, որպեսզի հասարակության միջին ու ցածր խավերը ավելի շատ աշխատեն, ժամանակ չունենան կյանքը վայելելու, առնետավազքի մեջ ապրեն մինչև կյանքի վերջ: Համալսարաններն ու դպրոցները պետք է պատկանեն պետություններին, որպեսզի մեր ծրագրերի կարևորությունը դասավանդվի նոր սերունդներին: Գլոբալիզացիայի շրջանակներում կարևոր է թուլացնել արաբական աշխարհը: Արաբական գարունը դեռ սկիզբն էր, բայց մենք դեռ չենք վերջացրել մեր աշխատանքները մերձավոր արևելքում ու կտրել այն երկրների ձեռքերը, ովքեր մատ թափ կտան Իսրայելի վրա: Սպորտում, փոփ մշակույթում ուշադրություն հրավիրել փոքրամասնությունների ու սեռամորթների իրավունքներին, նույնիսկ այն ժամանակ, երբ դրա կարևորությունը չկա:

Վերջում շեշտեմ, որ մեր ծրագրերի իրականացմանը խոչընդոտ հանդիսացողներին պատերազմ կհայտարարվի ու դա կիրականացվի ՕՆԱՏ-ի ջանքերով:

-Այսքանը հարգելի գործընկերներ, - իր խոսքն ավարտեց Բերենշտայնը,- մեզ բոլորիս ծրագրերի իրականացման հարցում մաղթում եմ հաջողություն: Կհանդիպենք «Ազատ որմնադիրների» միջոցառմանը:

Այսպիսով հանդիպումն ավարտվեց, հավաքվածներն իրենց անձնական իրերը հավաքեցին ձեռքի ճամպրուկների մեջ ու հերթականությամբ դուրս եկան կիսամութ դահլիճից: Նրանցից յուրաքանչյուրը քաջ գիտակցում էր, որ իրենից շատ բան է կախված, և բոլորն էլ վճռականորեն էին տրամադրված պահպանելու իրենց իշխանությունը:

***

Ահա այսպես են պատկերացնում աշխարհի կառավարումը դավադրության տեսության սիրահարները՝ համոզված լինելով, որ ընդհանուր գաղափարի շուրջ տեղի ունեցող քննարկումները կատարվում մի դահլիճում՝ մի քանի ազդեցիկ մարդկանց ներկայությամբ:

[1]անտագոնիստ – ֆիլմերում գլխավոր հերոսի (պրոտագոնիստի) ախոյանը:

Վերջին հանդիպում

Թբիլիսի քաղաքում գտնվող Սաբուրթալո թաղամասում մենակության մեջ ապրում էր Ալբերտը: Մասնագիտությամբ երաժիշտ անձնավորությունը ոչ ամբիցիոզ է, տարիներով գրոշների դիմաց փաբերում երգում էր ու առհասարակ մտադրություն չուներ իր կարիերան զարգացման ուղի տանել: Չնայած դրան, մեծ շրջապատ ուներ, ու տարատեսակ հարաբերությունների մեջ էր, ինչը ստիպում էր նրան գոյատևել ու օրը լրացնել ստեղծագործելով: Ժամերով մենակության մեջ լուռ լինելուց նոթերում գրում է.

«Տաք եղանակ է:

Դրսում տաք է, անկախ նրանից, թե ժամը քանիսն է, բայց, դու դեռ հոգեպես սառն ես զգում: Շատ զարգացող բաներ բացատրության կարիք ունեն: Շատ խոսքեր օգտագործվում են գործողություններն արդարացնելու համար:

Հիվանդանոցներում աղոթքներն ավելի անկեղծ են, քան եկեղեցիներում: Բարերում ճշմարտությունը ցունամիի նման հոսում է՝ ի տարբերություն դատարանների: Օդանավակայանում համբույրներն ավելի սրտանց են, քան հարսանեկան արարողությունների ժամանակ: Խանութներում ավելի կրթված մարդիկ են աշխատում, քան կառավարություններում: Թշնամիներն ավելի մեծ հարգանք են ստանում, քան ընկերները: Մարմնավաճառներին ավելի շատ են գովում, քան գիտնականներին: Դե սերն էլ... չափվում է գնահատականներով, այլ ոչ թե մարդկային հատկանիշներով: Այդքանից հետո ինքներս մեզ հարցնում ենք, թե ինչո՞ւ ենք ընկճված, ինչո՞ւ ամեն ինչ այնպես չգնաց:

Պատասխանը մենք ենք: Կամ, ավելի շուտ, ես և դու»:

Այդ տողերը գրելուց անմիջապես հետո տեղից վեր կացավ ու մոտեցավ լուսամուտի մոտ, որպեսզի պատշգամբի վրա դրված սիգարետի տուփից հանի սիգարետն ու ծխի: Մոլի ծխողը որոշ չափով լարված էր, քանի որ հանդիպում էր սպասվում, որը լինելու է վերջինը:

Ալբերտը փաբում ծանոթացել էր Մաթիլդա անունով մի ֆրանսիացի աղջկա հետ, կարճ ժամանակով եկել էր Թբիլիսիի Ջավախիշվիլիի համալսարանում սովորելու, ապա վերադառնալու հայրենի Լիոն՝ ավարտելու ուսումը: Մաթիլդան հասցրել էր սովորել վրացերեն, քանի-որ հետաքրքրվել էր, որ Եվրոպայի թոփ 20 համալսարաններից մեկը հենց Թբիլիսիում էր, ու քաղաքի հանդեպ գայթակղությունը դրդեց որոշում կայացնելու ուսման որոշ ժամանակահատված տրամադրեր սովորելու հենց Թբիլիսիում միաժամանակ համատեղելով վայելել քաղաքի գեղեցկությունը: Ալբերտն ու Մաթիլդան 6 ամիս է ինչ ազատ հարաբերությունների մեջ էին ու նրանց սպասվում էր *վերջին հանդիպումը*:

Մաթիլդան նամակ է գրում, որ տաքսու մեջ է, ու տեղ հասնելու համար հաշված րոպեներ է մնացել:

Ալբերտը սեղանին ոչինչ չէր դրել բացի երկու բաժակից ու երկու կիսաքաղցր Կախեթ գինուց (կիսաքաղցր գինու գաղափարը պատկանում էր Մաթիլդային)։

Դռան զանգը լսվեց. Ալբերտը տեղից վեր կացավ ու մոտեցավ դուռը բացելու. Մաթիլդան էր։ Ձույգը գրկախառնվեց։

- Գրկախառնությունն ամենից շուտ ազդող ցավազրկողն է, - ասաց Մաթիլդան Ալբերտի գրկի մեջ։

Ալբերտը լռության մեջ էր, ոչինչ չպատասխանեց, բայց Մաթիլդան խախտեց լռությունը հարցնելով.

- Ինչո՞ւ ես լռում։ Ո՞վ է քեզ ցավացրել։

-Իմ ակնկալիքներն ու սպասելիքները, - լռությունից հետո գրկից դուրս եկած ասաց Ալբերտը, ապա շարունակեց, - Դու փարոս ես օվկիանոսի մեջտեղում, Մաթիլդա ու ես երբեք չէի մտածի, որ էդպես ծանր կտանեմ այս վերջին հանդիպումը։

- Հիշու՞մ ես, որ քեզ անվանել եմ «արևածագ»։ Հիշում ես, թե ինչի հենց արևածագ, չէ՞։

- Դու ինձ վաղուց բացատրել էիր, բայց կուզեմ նորից լսել այդ բացատրությունը։

- Նորից կասեմ։ Քեզ արևածագի հետ ասոսացնելը նշանակում է, որ դու անվերջ ինձ հետ չես մնա, բայց երբ դու կաս, քեզ հաջողվում է գեղեցկացնել իմ կյանքը, թեկուզ որոշ ժամանակով։

Այդ ասելուց հետո Ալբերտի դեմքին առաջին անգամ ժպիտ կայծլտեց, ապա նա իր կողմից մի հիշողություն ջրի երես հանեց.

- Իսկ դու հիշում ե՞ս, որ քեզ համբուրելուց ասացի, որ առաջին անգամ քո շուրթերը զգալը դրախտի համ ուներ. երկրորդ անգամը ինձ տարավ այնտեղ ու հետ բերեց։

Մաթիլդան ծիծաղեց, ապա արտասվեց հուզմունքից հիշելով, որ վերջին հանդիպումն այդքան էլ հեշտ ավարտ չի ունենում։ Երկուսն էլ քայլեցին դեպի հյուրասենյակ, Մաթիլդան նստեց բազմոցին, Ալբերտը նորից ծխելու ցանկություն ունեցավ, որոշեց լուսամուտի մոտ կանգնել ու շարունակ ծխել։

- Գիտես ի՞նչ, - արցունքները սրբելով ասաց Մաթիլդան, - իմ տարիքի համար մի քիչ այն չի հնչում, բայց անկեղծ այնքան մարդու հետ եմ շփվել ու գրեթե բոլորը, տաք-սառը մեխանիզմով ու մանիպուլացիաներով փորձել են ինչ որ բանի հասնեն, իրենց ինքնագնահատականը բարձրացնեն, բացառությամբ քեզնից... դու դրա կարիքը երբեք չես ունեցել։ Աշխարհն այնքան հակասոցիալական է դարձել, որ որևէ մեկին ճանաչելը դժվար է դարձել։

- Ու էլ ավելի է դժվար դառնալու ճանաչելը։

- Համաձայն եմ, ու ինչ ես կարծում, դրա լուծումը ի՞նչը կարող է լինել։

- Իսկ դա կարևո՞ր է։

- Ես չգիտեմ:

- Այդ դեպքում թող այնպես, ինչպես կա: Թույլ տուր, որ զարգացումները հոսանքի ուղղությամբ գնան: Աշխարհը ժամանակի ընթացքում փոփոխվում է հանգստության և քաոսի միջև: Մարդկանց ռեակցիան էլ է այդպես ձևավորվում, իսկ այստեղից կարևորը մեր արձագանքն է այդ տատանումներին:

Այդ ասելուց հետո Ալբերտը ծուխը հանգցրեց, եկավ նստեց Մաթիլդայի կողքին, ու գինու շշի կափարիչը մի կերպ բացեց, լցրեց բաժակների մեջ ու մեկը առաջ քաշեց իր կողմ, մյուսը վերցրեց իրեն:

- Կյանքը փորձում է ինձ այնպիսի խաղերի մեջ ներգրավել, որ կանոններին տիրապետել չկարողանամ, բայց ձախողվում է ինչպես միշտ: Ցանկացած խաղում պատրաստ լինելը ամեն տեղ զենք է: Իսկ ինձ հաճախակի խմելը թույլ է տալիս ավելի սառը լինել ի տարբերություն մնացածների:

- Քո պես էմոցիոնալ, բայց միաժամանակ սառը երևացող մարդ չեմ տեսել, ես վստահ եմ, որ մի բազմամարդ շրջապատում դու առաջինը աչքի կընկնես... տեսք, ձայն, խորհրդավորություն, վտանգի զգացում, հոգատարություն, հենց էտա հակասականն է ձևավորում ուժեղ խարիզմա – Մաթիլդայի ասելուց Ալբերտի մոտ ժպիտ առկայծեց, ու հիշեց, որ առաջին օրվանից միմյանց հանդեպ միշտ անկեղծ են եղել ու դեռ շարունակում են լինել անկախ վերջաբանից - ի դեպ շատ խմելը, համենայն դեպս վնաս է պատճառում, ծայրահեղ հարբելը նույնքան մահացու կարող են լինել, ինչպես փամփուշտները: Հնարավոր է ազդեցությունն անմիջապես ակնհայտ չլինի, բայց հաստատ հոգեկան վնասի արդյունք կհանդիսանա, - ավարտեց Մաթիլդան, ով ի տարբերություն Ալբերտի, կում կում էր խմում գինին: Ալբերտը հարցրեց.

- Իսկ ինչպե՞ս նման իրավիճակում պաշտպանական բնազդ ցույց տալ:

- Կախված: Դա տարբեր կարող է լինել, բայց զգուշությունն ու սահման չանցնելը կարևոր է, ուղղակի դժվարությունը կայանում է նրանում, որ մենք չգիտենք, թե երբ ենք սեղմում այդ թրիգերը: Էդ միտքն է ինձ ավելի շատ տառապեցնում, չնայած ինչպես ասում են, ինչը քեզ չի սպանում, դարձնում է ավելի ուժեղ:

- Երբեմն տառապանքն ուղղակի տառապանք է: Էդ քեզ չի դարձնում ավելի ուժեղ, ոչ էլ բնավորություն կերտում, այլ ցավ է պատճառում:

Մաթիլդան աչքի պոչով հարցական հայացք նետեց, հասկացավ, որ Ալբերտի վրա ազդել է ալկոհոլը:

- Այն բացասական արտահայտությունները, որոնք մարդիկ անում են, կյանքի դրամայի պակասի ավելցուկ է, որ լրացնելուց բավականություն են ստանում, իսկ էժան դրաման նման մարդկանց համար հոգևոր սնունդ է: Դրա հակառակ կողմն էլ նայենք: Շատերը կան չէ՞, որ խոսքով սարեր են շուռ տալիս, բայց երբ հերթը գործելուն է հասնում, ասում են «Մենք այստեղ կսպասենք, մինչև երկնքից մի բան կընկնի»: Մենք՝ մարդիկ ծայրահեղությունից ծայրահեղություն ենք հասկանում: Ոսկե միջինը չկա: Կամ այնքան լավն ենք, որ հազար վագր արժենք կամ այնքան վատը որ օձ էլ չարժենք:

- Իսկ դա վերաբերվու՞մ է նրանց, ովքեր արվեստով են ապրում, - Մաթիլդան հետաքրքրությունից հարցրեց, ինչին Ալբերտը պատասխանեց.

- Ոչ, իսկ հիմա ասեմ ինչու, - երկար ժամանակ փռված լինելուց հետո մի քիչ առաջ հենվելուց շարունակեց, - *առաջին*՝ արվեստի համար ապրած կյանքը երբեք անիմաստ կյանք չի, *երկրորդ*՝ արվեստը հայրենիք չի ճանաչում, *երրորդ*՝ մահ, պարտքեր և բաժանում, դրանք արվեստի շուկայի շարժիչ ուժերն են, և *չորրորդ*՝ երբ կրկեսը փակվում է, ծաղրածուները մնում են, իսկ արվեստը անհատի հոգեբանության մեջ է ձևավորվում:

Կրկեսը տանում է դեգրադացման, սոցիալ հարթակները մարդկանց միջից ջրի երես են հանում իրենց «տուպիզմը», իսկ արվեստն ասում է, որ ամեն ինչ նորմալ է, պետք է լինել անջատված ու ոչնչի մեջ չխորանալ: Կրկեսը բողոքում է ինտերնետում հեղեղված կանանց մերկ նկարների վաճառքից, բայց չի հասկանում, որ պահանջարկը իրենք են ստեղծում: Կրկեսը խոսում է հաջող հարաբերություններից, բայց չի հասկանում, որ հարաբերությունները հիմնված են ստի և խաբերության վրա, չնայած հարաբերությունների ավարտը հենց դրա հիման վրա է լինում, այնուամենայնիվ դա տրամաբանական տեղ է հարաբերությունները սկսելու համար:

Մաթիլդան հետաքրքրությամբ լսում էր Ալբերտի արտիստիկ ու հռետորական խոսքերը, ու հասկանում էր, թե ինչու է նման հետաքրքրություն գրավում մարդկանց շրջանակում ու լուռ չմնալով, շարունակեց Ալբերտի խոսքը, արդեն իր տեսակետով:

- Արվեստն ու կրկեսը այլաբանություն են, կրկեսում մարդիկ մեղադրում են իրար, այն ինչ արվեստն ասում է, որ քո միակ թշնամին քո բանականությունն է, որ պարտվելուց հետո բռունցքները չեն թափահարում, կրկեսն ասում է, որ կրոնը շատ կարևոր է, ինչին արվեստը հակադարձում է այսպես. «ի՞նչ կարևորություն ունի Աստվածդ, եթե աչքերդ միայն չարություն տեսնել են ուզում»:

- Դու էլ ես տեսնում արվեստի ու կրկեսի տարբերությունները: Ցավոք կյանքը դարձել է բաց երկնքի տակ կրկես ու արվեստից քչերն են ոգեշնչվում:

- Ի դեպ - խոսեց Մաթիլդան, - վերջին 6 ամսում քո հետ ժամանակ անցկացնելուց չեմ ձանձրացել, չնայած նրան, որ այսօր մենք առաջին անգամ ենք անկեղծ զրույց ունենում:

- Իսկ կենակցելու՞ց, - հարցրեց Ալբերտը:

- Ոչ էլ դա, - հետևեց Մաթիլդայի պատասխանը ժպիտի տակ:

- Ասում են, որ ձանձրույթն ու կենակցելը մեղքեր են, բայց ամենամեծ մեղքը ձանձրալի կենակցելն է, - ասաց Ալբերտը նորից դատարկելով գինին: Ալբերտը գրեթե հարբած էր, տեղից վեր կացավ ու նստեց Մաթիլդայի կողքը: Ձեռքի ափը մոտեցրեց Մաթիլդայի կոնքերին՝ շոշափելու ու ականջին ասաց.

- Ես քեզ կկարոտեմ, - այդ ասելուց համբուրեց թուշը:

Մաթիլդան զգում էր, որ թե ինչ էր տեղի ունենալու, բայց հրաժարվում էր, քանի որ զգում էր նորից էմոցիաները կբռնկվեն ու այն զգացողությունները, որ սառեցրել էր, ինչ որ

պահի հետ էր վերադառնալու: Որպեսզի չվիրավորեր Ալբերտին համբուրեց նրա այտն ու հարցրեց.

- Կարո՞ղ եմ դաշնամուր նվագել, - ցրողական, բայց սիրալիր տոնով հարցրեց, - կցանկանայի, որ վերջապես լսես թե ինչի եմ ընդունակ արվեստի ոլորտում:

Ալբերտը հասկացավ, որ ոչինչ չի լինի այդ օրը, գլխով արեց ու Մաթիլդան տեղից վեր կացավ ու նստեց դաշնամուրի դիմաց:

- Ի դեպ երկար ժամանակ է դաշնամուրը չի օգտագործվել ու չգիտեմ որքանով է նորմալ վիճակում պահպանվել, - տեղյակ պահեց Ալբերտը, ինչից Մաթիլդան աչքով արեց ասելով «հիմա կփորձենք»:

- Ալբերտ, ես զգացել եմ, որ ոչ մեկի կյանքում մշտական մարդ չեմ լինելու, բայց կարող եմ վստահեցնել, որ լավագույն մարդն եմ, ում ժամանակավոր շփում ես ունեցել:

- Իրական քիմիան մենակ նման շփման արդյունքում է լինում: Ոչ երկարաժամկետ, բայց ազդեցիկ:

- Շատ կարևոր է թե ինչպես ենք նայում իրավիճակներին, քանի որ, եթե մտածում ես խնդրի մասին, պարտվող ես դուրս գալիս: Երբ հուսահատ կամ ընկճված վիճակում ես լինում, պետք է վերաբերմունքը փոխել, բացասականը դրականի, քանի որ հենց վերաբերմունքն է հաղթելու իրավիճակին ու օգնելու քեզ ավելի կոփված դառնալ: Մենք ենք ստեղծում պարտության կամ հաղթանակի համար մթնոլորտը:

- Ո՞ւմից ես նման մտածելակերպը վերցրել, - հարցրեց Ալբերտը:

- Ոչ մեկի: Մեծանալով՝ ես նշանակելի տիպար չեմ ունեցել: Ես պարզապես ունեի մարդիկ, որոնց նմանվել չէի ուզում: Ուստի աշխատեցի ինձ վրա, ու այն ինչ իմ կյանքում տեղի է ունենում ես դրանք դրական եմ վերաբերվում, անկախ նրանից թե ինչով կվերջանա:

- Նման օրինակ ես էլ ունեմ: Դադարեցի սիրել իմ աշխատանքը, բայց շարունակում եմ աշխատել, քանի որ լավ է վարձատրում ինձ: Եվ դա չնայած ստիպում է ինձ հիվանդ զգալ, բայց ոչ այնքան հիվանդ, որ թողնեմ իմ աշխատանքը, քանի որ վարձատրվելու դիմաց հասկանում ես թե ինչեր կարող ես անել, որպեսզի լրացված զգաս աշխատանքի ավարտից հետո, - ավելացրեց Ալբերտն իր կողմից:

- Ինչպես ասում են. «Կախարդանքը, որը դուք փնտրում եք, այն աշխատանքի մեջ է, որից խուսափում եք», - ասաց Մաթիլդան, ապա ծափ տվեց ակնկարկելով, որ լռություն է պետք, որպեսզի սկսի նվագելը, ինչին Ալբերտը ժեստով ցույց տվեց, որ փակում է բերանը:

Մաթիլդան մատները առաջ դրեց դաշնամուրի ստեղներին ու սկսեց նվագելը: Նոտաների սկզբից հասկացավ, որ Լյուդովիկո Այնաուդիի «Una Mattina» կատարումն է նրա ականջները լսում: Ալբերտն այդ պահին հիշեց, որ առաջին անգամ այդ կատարումը լսել էր “The Intouchables” ֆիլմի կադրի վերջնամասում: Մաթիլդայի որոշումն այդ

կատարումը նվագելը պայմանավորված էր հրաժեշտի տեսանկյունից, ինչպես ֆիլմի վերջնամասում էր:

Նվագելն ավարտվեց: Մաթիլդան տեղից կանգնեց գոհունակությամբ, գրկելով Ալբերտին:

Օրը մթնում էր, Ալբերտի մտքում գաղափար ծագեց, օրվա ավարտը տեղափոխել շենքի տանիք ու առաջարկեց Մաթիլդային միասին բարձրանալու: Երկուսն էլ միաժամանակ իրենց հետ վերցրեցին գինու շիշը, բաժակներն ու սիգարետը:

Բարձրանում են աստիճաններով, դուռը բացում են ու տեսնում են երկինքը, մի փոքր էլ մոտենում անկյունային հատվածին ու տեսնում ներքևում վրացիների գեղեցիկ լուսավորված թաղամասը:

Տեղավորվում են, գինին Ալբերտը լցնում է բաժակների մեջ ու կենաց ասում.

- Կարծում եմ մեր շփման լավագույն օրն է, որն ունենում ենք: Խմենք այսօրվա կենացը:

Բաժակ բաժակի տվեցին ու ըմպեցին. Մաթիլդան խոսեց.

- Մարդկության կեսից շատը ձգտում է շփման, բայց կյանքը երբեմն հնարավորություն չի տալիս: Հոգեբաններն ասում են, որ մարդիկ շփման կարիք ի սկզբանե են ունեցել ու անգամ մարդիկ շատ հաճախ դրա բացակայության պատճառով են մահացել: Դա պայմանավորված է նրանով, որ մենակ են մնացել, բավարարել են ֆիզիոլոգիական պահանջները, բայց գժվել են մեղմ ասած:

- Բոլորիս վերջը միայնակությունն է, - ավելացրեց Ալբերտը:

- Ի դեպ, հոգեբանական թեստ կանցնե՞ս հետս, - հարցրեց Մաթիլդան:

- Իհարկե, սկսենք:

- Ասա սիրածդ կենդանին ու 3 հատկանիշ թե ինչո՞ւ ես իրեն սիրում:

- Շուն, առաջին՝ ներդաշնակությունը, երկրորդ՝ անդավաճան հավատարմությունը, երրորդ՝ ուրախ լինելը:

- Հիմա նկարագրիր ծովը 3 բառով:

Առաջինը՝ պարզություն, երկրորդ՝ հանգստություն, երրորդ՝ ձայն:

- Ստացվում է, որ կենդանու մեջ այն հատկանիշները թվարկեցիր, որոնք հակառակ սեռի մեջ գնահատում ու կարևորում ես, իսկ ծովը նկարագրեցիր քեզ:

- Հետաքրքիր էր, - ապա այլ թեմա առաջ քաշեց – ի՞նչ ես կարծում, ում կարելի է վստահել առհասարակ այս կյանքում:

- Վստահել կարելի է միայն հիմարներին և մեռած մարդկանց: Առաջինի դեպքում նրանց երբեք չեն հավատա, իսկ երկրորդի դեպքում նրանք իրենց բերանը փակ կպահեն:

Ալբերտը Մաթիլդայի պատասխանից ծիծաղեց, ու նորից մի կում ըմպեց գինին, ապա խոսեց.

- Վստահության հարցում վատատեսություն եմ տեսնում քո մեջ, կա՞ այդպիսի բան:

- Մարդկանց հարցում՝ այո, բայց դա չի նշանակում, որ հասարակությանը ինտեգրված չեմ:

- Չէ, ինչպես ասում են «լավատեսներն ու վատատեսները պետք են հասարակությանը: Լավատեսները ստեղծում են ինքնաթիռը, իսկ վատատեսները՝ պարաշյուտը:

- Եթե կարողանում ես էդքանը ասել, ապա քեզ քաղաքական հարց տամ. ի՞նչ է պետությունը:

- Պետությունը միասնությունն է առանձին վերցված պաշտոնյաների, ովքեր իրենց սեփական շահին տալիս են հանրային օգուտի կարգավիճակ: Իսկ գիտե՞ս թե ինչ է դեմոկրատիան:

- Դեմոկրատիան այն է, երբ խելոք մարդիկ ոչ միայն ստիպված են լսել հիմարների մտքերը, այլև հաշվի նստել դրանց հետ:

- Բացի այդ, ժողովրդավարությունն շահագործողին ինքնուրույն ընտրելու հնարավորությունն է:

- Եթե ցանկանում ես ոչնչացնել ցանկացած ազգ առանց պատերազմի, ի՞նչ կարող ես անել:

- Այդ դեպքում երիտասարդ սերնդի մեջ սովորական ես դարձնում այլասերվածությունը:

Եղանակը ցրտում է, բայց Ալբերտն ու Մաթիլդան զգում են, որ գինին նրանց տաքացնում է: Ալբերտը մի պահ ընկավ մտքերով, Մաթիլդան նստեց կողքը ձեռքը բռնեց ու հարցրեց.

-Ի՞նչ որ մտքերի մեջ ես ընկել:

- Միշտ եմ մտքերի մեջ: Չկա այնպիսի մի իրավիճակ, որ մտքերս հանգիստ թողնեն, նույնիսկ հանգիստ ժամանակ: Ես իհարկե հասկանում եմ, պատճառները, հանգամանքները թե այդ ամենը որտեղից են առաջանում, բայց ամենից բարդը դրանց լուծումը տալն է: Ամենից շատ հարցերն են «Եթե ոչ այսօր, ե՞րբ: Եթե ոչ դու, ապա ո՞վ»: Ես առհասարակ հասկանում եմ կյանքի արժեքը, այն քրտնաջան աշխատելու մեջ է: Այսպիսի ոչ ամբիցիոզ կյանքով ապրելը մի օր ինձ կործանելու է: Մի անգամ ինձ ասել էին, եթե կարծում ես քրտնաջան աշխատանքի արժեքը թանկ է, ապա սպասիր մինչև զղջալու հաշիվը բերեն, իսկ ես վախենում եմ մի բան գործել:

- Կյանքը ավելի է հեշտանում, լավ իմաստով, երբ հասկանում ես, որ ոչ ոքի չի հետաքրքրում թե ինչ ես անում:

- Այսի՞նքն, - հետաքրքրությունից Ալբերտը հարցրեց Մաթիլդային:

- Մարդկանց հոգեբանական գլխավոր խնդիրը եղել է վախը, բայց երբեք չեն հասկացել, որ վախը կանգնեցնում է կյանքը վայելել, նույնիսկ վախենում են կորցնել, բայց ինչի՞ են վախենում կորցնել, եթե այս աշխարհում ոչինչ իրականում քոնը չի պատկանում: Շատ մեծ ակնկալիքներ են ունենում, բայց ունեցածը չեն գնահատում: Հեղինակություն են ստեղծում տարիներով, ապա ստեղծելուց վայրկյաններ անց փչացնում են:

- Փիլիսոփայական մտքերդ շատ էին, դրանցով ի՞նչ էիր ուզում ասած լինել:

- Ինչպես քիչ առաջ ասացի, որ քո միակ թշնամին քո բանականությունն է: Ավելի լավ չի՞ ապրել ներկայով ու զգալ ցանկացած հաճույք, գիտակցելով, որ ոչինչ քոնը չի պատկանում: Ավելի լավ չի ստեղծել կամ գործել, գիտակցելով, որ կորուստը վախ չպիտի առաջացնի, ոչ էլ ձախողումը: Եթե ցանկանում ես հեշտ ճանապարհ գտնել գումար աշխատելու համար, ապա դրանք վիճակագրությունով հետևյալն են.

- Տղամարդու հեշտասիրությունը,

- Կնոջ գեղեցկություն ունենալու ցանկությունը,

- Տարեցի առողջությունը,

- Հարուստ մարդու կորստի զգացումը/վախը,

- Աղքատ մարդու արագ հարստանալու անհագ ցանկությունը:

Եթե կարծում ես, որ էդքանից հետո քեզ շատ գումար ունենալը չի օգնի, այդ դեպքում կարող ես փոխանցել շվեյցարական բանկի հաշվեհամարիս, - քմծիծաղի տակ հումորով արտահայտելով ասաց Մաթիլդան:

Այդքան փիլիսոփայելուց, Մաթիլդան կես կատակ կես լրջին տալով աչքերով հառեց Ալբերտի հայացքին, որտեղ որսաց, որ Ալբերտը ժպտում է, ապա ցիտեց որոշ հետաքրքիր մտքեր:

- Ալբերտ, լսիր ինձ: Ես գիտեմ, որ այսօր մեր վերջին հանդիպումն է, արի լավ նոտայի վրա ավարտենք, ու ինձ քիչ ժամանակ է մնացել վերադառնալու Ֆրանսիա: Դու քո մտքերի հետ մնալու ես ժամանակ առ ժամանակ մինչև իմաստանաս:

- Ե՞րբ է գալիս էդ իմաստությունը:

- Իմաստությունը միայնակ չի գալիս, այլ հասունության հետ, բայց պատահում է, որ հասունությունը միայնակ է գալիս...

Ալբերտը երկար նայեց Մաթիլդային, ապա իր ձեռքերով շոշափեց նրա այտերին ու համբուրեց, քիչ անց կոնքերից պինդ գրկեց, զգաց, որ անկախ տեղի ունեցածից ինքը կարոտելու է Մաթիլդային:

- Մաթ, դու գիտե՞ս, որ, ինչ-որ մեկը դեռ պատմելու է անեկդոտներ, որոնք սովորել են քեզանից, ինչ-որ մեկը դեռ օգտագործելու է այն բառերն ու ֆրազաները, որոնք դու ես

արտաբերել, ինչ-որ մեկը դեռ լսելու է այն երգերը, որ դու ես ծանոթացրել, ինչ-որ մեկը դեռ ժպտալու է, երբ քո հետ անցկացրած մի պահ է հիշելու. ինչ-որ մեկը ոգեշնչված է լինելու քեզնով:

- Գիտեմ, Ալբերտ: Իսկ դու գիտե՞ս, որ քեզնից ընդամենը մեկ որոշում է պակասում, որպեսզի փոխես ու ունենաս լիովին նոր կյանք:

- Ես չէի ուզում էդ թեմայով խոսել, Մաթ...

- Պետք է կենտրոնանալ նպատակների վրա: Աննպատակ ապրելու հետևանքով կորցնելու ես կյանքի իմաստը փնտրելու ուղին: Դու ամեն ինչ ես, ինչ մարդիկ ցանկանում են լինել: Փորձի՛ր արվեստի աշխարհում տեղ ունենալ:

- Ես այդ ուղղությամբ երկար ժամանակ է ինչ մտածել եմ, միգուցե դա է ճիշտ կարիերայի ուղին:

- Կարիերայի ուղին տանում ես դեպի մի վայր, որտեղ հստակ չի ձախողման հավանականությունը ցածր է թե ոչ:

- Չկա էնպիսի կարիերա, որտեղ հավանականությունը բարձր է, որ կհասնես: Բայց ես գիտեմ, որ դրան կձգտեմ, բայց կուզեմ նպատակիս հասնելուց հետո, գեթ մի անգամ նորից հանդիպել քեզ, այն էլ քո հայրենիքում...

Մաթիլդան այդ վերջին տողերը լսելուց հուզվեց, ապա ասաց.

- Բայց սա մեր վերջին հանդիպումն է:

- Մի թե՞ նամակագրություն չենք ունենալու թեկուզ ինտերվալներով:

- Նամակագրվելու ինտերվալը կապ չունի հարաբերությունների որակի հետ, բայց հարաբերությունների երկար դադարից հետո նորից հարաբերություններում լինելը նույն մարդու հետ... անկեղծ չեմ հավատում այդ գաղափարին: Մահմուդ Դարվիշն այդ մասով ասել էր. «դու չես գտնի նույն մարդուն երկու անգամ, նույնիսկ նույն մարդու մեջ»:

Ալբերտը այդ լսելուց հետո լռեց, հասկացավ, որ այդ մասով ասելիք չուներ:

Լույսը մանրից բացվում է, որը գնալով սպանում է այդ օրվա գիշերվա կախարդանքը: Բաժակները դատարկված են, շշերը հավաքված մի տեղ: Այդ ամենի հետ մեկտեղ նստած են երկու հոգի, ովքեր պատրաստվում են իրար հրաժեշտ տալ, մի պայմանով, որ իրարից նեղացած չեն լինի: Երկուսի ձեռքերը պինդ սեղմած են, վերջին վայրկյանները մոտենում էր մինչ Մաթիլդան իր տաքսին կանչեր ու դուրս գար, իսկ Ալբերտը ևս մեկ անգամ էլ ծխեր, ապա լքեր տանիքը:

Իտալիան ու ֆուտբոլը

2023թ. ապրիլի 18-ն է, ֆուտբոլային աշխարհում տեղի է ունենում «Նապոլի – Միլան» պատասխան խաղը: Առաջին խաղն ավարտվել էր «Միլանի» նվազագույն 1-0 հաշվով՝ Իսմայիլ Բենասերի գոլի շնորհիվ, բայց այս խաղը վճռորոշ է լինելու երկու թիմերի համար: Հաղթողը դուրս է գալու Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ: Իտալիայի համար շատ կարևոր խաղ է՝ հաշվի առնելով, որ երկու թիմերը Չեմպիոնների լիգայում վերջին անգամ իրար դեմ են դուրս եկել գրեթե 20 տարի առաջ:

Ես 2007թ.-ից «Միլանի» երկրպագու եմ: Չնայած պարտություններին, բազմաթիվ ձախողումներին, ինչպես նաև տարիներ շարունակ միջակ մակարդակի ֆուտբոլ ցուցադրելուն, «Միլանի» նկատմամբ իմ հավատարմությունը երբեք չեմ կորցրել: Եվ ահա այսօր, 12 տարի անց, իմ թիմը քառորդ եզրափակիչում է:

Ֆուտբոլ ասելով՝ ոմանք պատկերացնում են մի գնդակի հետևից վազող 22 մարզիկների, ոմանց համար ֆուտբոլը կիրք է, բայց իսկական երկրպագուների համար այն ապրելակերպ է: Հարց է առաջանում, թե նշվածներից որ կատեգորիային են դասվում իտալացիները: Պատասխան՝ նրանց ճնշող մասը ֆուտբոլը համարում է ապրելակերպ, իսկ մնացածի համար այն կիրք է: Իտալիայում դժվար թե հանդիպես մեկին, ով կասի, թե 22 հոգի պարզապես վազում են գնդակի հետևից, կամ ֆուտբոլիստները միլիոններ են աշխատում ընդամենը «գնդակը ցանցին անցկացնելու համար»:

Այս որոշիչ խաղը նայում եմ Երևանի փաբերից մեկում, որտեղ հավաքվել են «Նապոլիի» ու «Միլանի» տարբեր ազգության երկրպագուներ: Նրանցից մեկը Գաբրիել անունով 40-ն անց տղամարդ է, ով, փաբում ազատ տեղ չլինելու պատճառով, թույլտվություն է խնդրում նստել իմ սեղանի շուրջ: Սիրով համաձայնվում եմ, Գաբրիելը նստում է, և մենք ակամայից բռնվում ենք զրույցի: Իմանում եմ, որ 5 տարեկանից Իտալիայի հավաքականի ու «Նապոլիի» մասնակցությամբ ոչ մի խաղ բաց չի թողել ու լավ ծանոթ է Իտալիայի ֆուտբոլի պատմությանը:

Գաբրիելը Նեապոլից է, մասնագիտությամբ ինժեներ ու ունի իր սեփական բիզնեսը: Իտալիայի հավաքականի կամ «Նապոլիի» խաղերի ժամանակ բիզնեսը փակում է, որ խաղը նայի:

Հիմնականում շփվում ենք անգլերենով, Գաբրիելը մեկումեջ իտալերեն արտահայտություններ է գործածում, որոնք, սակայն, հեշտությամբ եմ հասկանում (լատիներենից փոխառված բառերը, որպես կանոն, հասկանալի են): Հետաքրքրությունից դրդված՝ որոշում եմ հարցեր տալ նրան, որպեսզի ավելի լավ հասկանամ, թե ինչպես են նրանց մոտ ֆուտբոլին վերաբերվում:

- Իտալական ֆուտբոլի մասին խոսելուց զգում ես, որ խոսքը պարզապես ֆուտբոլի մասին չի, - մեծ էկրանին ընթացող խաղին հետևելով՝ սկսեց Գաբրիելը, - այլ մի երևույթի, որի մեջ ներառված է ամեն ինչ՝ սեր, կիրք, ընտանիք, պայքար, հիասթափություն, պարտություն, տանջանք, մի խոսքով՝ կյանքի մի ամբողջ ցիկլ: Երբ իտալացուն հարցնում ես ֆուտբոլի մասին, էմոցիոնալ է դառնում, դժվարությամբ թաքցնում հույզերը, ոմանք էլ արտասվում են:

Իտալացիները սենտիմենտալ են: Տղամարդիկ հայտնի «մամայի բալաներ» են, իսկ կանայք «երկաթե ձվերով» արարածների համբավ ունեն Եվրոպայում: Չնայած դրան՝ իտալացի կանայք երբեք չեն խանգարում իրենց տղամարդկանց, երբ վերջիններս շաբաթը երկու անգամ տարվում են իրենց սիրած թիմով ու ֆուտբոլի հետ կապված միջոցառումների մասնակցում:

Կասկածանքով նայում եմ Գաբրիելին, նա էլ, հարցս զուշակելով, բացատրում է.

- Որովհետև իտալացի կինը ունեցել է հայր, ով նույն սենտիմենտալությամբ էր հետևում իր սիրած թիմի խաղերին, ու լավ հասկանում է, որ ֆուտբոլը իտալացու ԴՆԹ-ի մեջ է, չկա այնպիսի մի երկրպագու, ով չգնա իր սիրած թիմի մնացած երկրպագուների հետ հիմն երգելու, քայլերթների մասնակցելու կամ ֆուտբոլային անձնակազմի ավտոբուսը դիմավորելու:

Նկատելով, որ բացի ինձնից նաև կողքի սեղանի երկրպագուներն են իրեն լսում՝ Գաբրիելը ոգևորվում է և փոքր ինչ ավելի բարձր ձայնով շարունակում.

-Ուլտրասները մի այլ երևույթ են: Նրանցից ավելի հավատարիմ երկրպագուներ չկան: Նրանց աշխատանքը թիմին «դուխ տալն է»՝ ստադիոնում երգեր երգելով, մրցակցին խանգարելով, մի խոսքով ամեն ինչ անելով թիմի խաղերի արդյունքների վրա դրական ազդելու համար:

Ամեն թիմ ունի իր երկրպագուների խումբը: Որոշները վտանգավոր են, մի մասն էլ ուղղակի խելագար, ու հասարակ երկրպագուներից տարբերվում են նրանով, որ նրանց երակներում իրենց թիմի գույներով արյուն է հոսում:

Իմ ծննդավայրում՝ Նեապոլում, Մարադոնային «մարդ-աստված» են համարում: Շենքերի պատերին նրա որմնանկարներն են քանդակված, նույնիսկ նրա նկարով մատուռ ունենք, որտեղ մարդիկ կարող են գնալ ու աղոթել Դիեգո Աստվածին:

Ցանկացած նեապոլցու հարցնես, թե ինչ կարծիքի է Մարադոնայի մասին, կպատասխանի. «*Նա մեր աստվածն է*»: Ֆուտբոլը նեապոլցու կիրքն է: Տարիքով տղամարդիկ Մարադոնայի մեկից ավել մարզաշապիկ ունեն: «Նապոլիի» ֆուտբոլային թիմն այնքան է պաշտում Մարադոնային, որ իրենց ստադիոնի անունը դրել են ի պատիվ նրա, ու 10-րդ համարը, որի տակ խաղացել է Մարադոնան, հանվել է շրջանառությունից, այսինքն՝ ոչ ոք չի կարող հագնել այդ համարով մարզաշապիկ, բացի Մարադոնայի ազգանունը կրողից: Նեապոլ, դու մի ուրիշ սեր ես, - Գաբրիելն ու «Նեապոլի» մյուս

երկրպագուները գարեջրով լի բաժակները իրար են խփում, ես էլ, հարգանքից ելնելով, միանում եմ նրանց կենացին:

Այդ պահին խաղի ընթացքում աժիոտաժ է սկսվում: Խաղի 20-րդ րոպեն է, «Միլանը» գրոհում է, Ռաֆայել Լեաուն ընկնում է կանոնների խախտման արդյունքում, ու թիմը վաստակում է տասնմեկ մետրանոց: Ես ու «Միլանի» երկրպագուներից մի քանիսը ծնկի իջած սրտատրոփ սպասում ենք Օլիվյե Ժիրուի իրացմանը... Սե՛յվ: Նապոլիի դարպասապահը գնդակը հեռացնում է: Գաբրիելն ուրախությունից ցատկում է տեղից՝ իտալերենով գովեստի խոսքեր ուղղելով իրենց դարպասապահին: Ես նորից նստում եմ իմ տեղը ու մի քանի րոպե անց վերսկսում զրույցը Գաբրիելի հետ:

- Իսկ ի՞նչ կարծիքի ես Հռոմի, կամ առհասարակ Հռոմեական ֆուտբոլի մասին:

- Հռոմում պատկերն ուրիշ է, - պատասխանում է Գաբրիելը՝ իտալական տիպիկ ժեստիկուլացիայով, - այստեղ հավերժ պայքարի մեջ են երկու մրցակից թիմերի՝ «Լացիոյի» ու «Ռոմայի» երկրպագուները: Այս թիմերի միջև խաղը կոչվում է «Derby Della Capitale», որ նշանակում է...

- Մայրաքաղաքային դերբի, - Գաբրիելի խոսքը ավարտում եմ ես:

- Այո, ճիշտ է: Խաղի օրը Հռոմը լցվում է ֆուտբոլային պաստառներով, մարզաշապիկներով երկրպագուներով: Խաղի ավարտից հետո քաղաքի մի անկյունում ծեծկռտուք է բռնկվում, մյուս անկյունում՝ փաբում վիճում են մրցավարի կողմնակալության կամ սխալ որոշումների վերաբերյալ, երրորդում էլ՝ տրամադրության անկում է տիրում կարևոր խաղում իրենց թիմի տանուլ տալու կապակցությամբ: Մինչև հաջորդ հանդիպումը մրցակցի երկրպագուները վանկարկելու են. «*Հռոմը ջալոռոսի է*», կամ էլ «*Հռոմը բիանկոչելեստի է*»[1]: Հաղթանակած թիմի երկրպագուներն էլ 3-4 ամիս ապրելու են այն երջանիկ մտքով, որ քաղաքն իրենցն է, մինչև այդ թիմերի հաջորդ հանդիպումը: Պատկերացրու, թե ինչ կկատարվեր Հռոմում, եթե երկու թիմերն էլ չեմպիոնական պայքարի համար իրար դեմ խաղային վերջին օրով...

- Քաղաքի գրեթե 3 միլիոնանոց բնակչության 90%-ը դուրս կգար փողոց, ու կցնծար, - առանց վարանելու պատասխանում եմ ես:

- Միանշանակ, - գլխով է անում Գաբրիելը, - բայց ցավոք այդ սցենարը երևի թե երբեք էլ չիրականանա՝ հաշվի առնելով երկու թիմերի մակարդակը:

Նա ճիշտ է, «Ռոմայի» ու «Լացիոյի» նման պատմական թիմերը այլևս այն չեն, ինչ 90-ականներին: Առհասարակ իտալական թիմերը հարգված են միայն իրենց պատմության շնորհիվ, վերջին տարիներին համոզիչ հաղթանակներ չեն ունեցել, ինչը առիթ կտար նորից խոսելու նրանց մասին:

Խաղի 44-րդ րոպեն է ընթանում, գնդակը Ռաֆայել Լեաույի մոտ է, «Միլանի» կիսադաշտից հասնում է «Նապոլիի» դարպասին ու փոխանցում կատարում Օլիվյե Ժիրուին, Ժիրուն հաշիվը դարձնում է 1-0 հօգուտ «Միլանի»: «Միլանի» երկրպագուներս ցնծում ենք, ոմանք սկսում են երգել: Այս պահից սկսած ավելի հանգիստ ենք զգում՝ գիտակցելով, որ 2 գոլի առավելություն ունենք: «Նապոլիի» համար սթրեսային իրավիճակ է:

Խաղի առաջին կեսն ավարտվում է, 15 րոպե դադարից հետո ֆուտբոլիստները նորից դուրս կգան շարունակելու խաղը: Փաբում հավաքված «Նապոլիի» ու «Միլանի» երկրպագուները քննարկում են առաջին խաղակեսը: Գաբրիելի գարեջուրը վերջանում է, նա պատվիրում է միանգամից 2 բաժակ, դեռ 45 րոպե կա խաղի ավարտին, ու նրա վճռորոշ հայացքից զգում եմ, որ սպասում է «Նապոլիի» քամբեքին[3]:

Լարվածությունը թուլացնելու համար Գաբրիելին նորից ներքաշում եմ զրույցի.

- Հռոմից արի անցնենք Միլանին: Ի՞նչ կասես Միլանի մասին, առհասարակ քաղաքի, ֆուտբոլի ու մշակույթի մասին:

- Միլանը մի տպավորիչ, թանգարանային նմուշի պես քաղաք է՝ սկսած գետնին թափված աղբով ու վերջացրած “Il Duomo” եկեղեցով, որը համարվում է ոչ միայն Միլանի, այլև ամբողջ Իտալիայի կարևոր կորիզը տուրիզմի բնագավառում, բայց զիջում է Հռոմի Կոլիզեյին ու Վենեցիայի գետին:

Միլան քաղաքը միշտ անհանգիստ է, որովհետեւ այնտեղ են գործում աշխարհի լավագույն թիմերից երկուսը՝ «Միլանն» ու «Ինտերը»: Ռոսոներիներն ու ներաձուրիները[2] համերաշխ չեն, երբ խաղադաշտում իրար միջև պայքար են տանում: Երկու թիմերը միմյանց մաղթում են վատագույն ցուցանիշները գրանցել, իսկ իտալացիները, պատմության սիրահարներ լինելով, հարմար առիթի են սպասում, որ հիշեցնեն մրցակցին, թե քանի տարի առաջ ի՛նչ ջախջախիչ հաշվով են հաղթանակ տարել նրա նկատմամբ:

1990-ից մինչև 2000-ականները երկու թիմերի համար Եվրոպական ֆուտբոլն ուրիշ էր: Բոլոր թոփ ֆուտբոլիստները երազում էին խաղալ իտալական ակումբներում ՝ «Միլանում», «Ինտերում», «Յուվենթուսում», «Ռոմայում», «Ֆիորենտինայում», նույնիսկ «Լացիոյում» ու «Պարմայում», ու այդ ամենը մի պատճառով՝ ֆուտբոլի հանդեպ կիրքն ուժեղ էր:

Իտալացու կիրքը մի բանի հանդեպ վերածվում է արվեստի:

Գաբրիելը մի մեծ կում է անում իր գարեջից, ձեռքի ափով սրբում բերանն ու քմծիծաղ է տալիս.

- Մի անեկդոտ հիշեցի *իտալական սկետչից:* Ստադիոնում մի երիտասարդ, նստելով միակ ազատ նստարանին, ոգեվորված դիմում է իր կողքի տարիքով տղամարդուն.

- Հավատս չի գալիս, որ դերբիի ժամանակ ազատ նստատեղ է մնացել:
- Այս նստարանը կնոջս համար էր, ցավոք, նա վերջերս մահացավ, - պատասխանում է տարիքով տղամարդը:
- Օ՛հ, ցավում եմ,- շփոթված ասում է երիտասարդը:
- Ծնորհակալ եմ: Նա երբեք ոչ մի խաղ բաց չէր թողնում:
- Բայց միթե՞ Դուք չունեք հարազատներ կամ ընկերներ, ովքեր կցանկանային վերցնել նրա տոմսը:
- Ո՛չ: Բոլորը գնացել են կնոջս թաղմանը:

Սկսում եմ ծիծաղել, ու ինձ միանում են, մոտակա սեղանի շուրջ նստած երկրպագուները, որ ամբողջ ընթացքում հետաքրքրությամբ ականջ էին դնում մեր զրույցին:

Սկսվում է երկրորդ խաղակեսը, Գաբրիելը, մերթընդմերթ նայելով էկրանին, շարունակում է.

- Իտալիա ասելով՝ մարդիկ արվեստ են հասկանում՝ օպերա, ֆիլմ, գեղանկարչություն, գրականություն, բարձր մոդա: Արվեստի մեջ եկեք ներառենք նաև սնունդը, սպորտը ու մայրերին, որ երկրորդ աստված են իտալացու համար, հա, ու մեկ էլ իտալերենը: *Belissimo lingua, Aram!*

Երբ իտալացին որոշում է զբաղվել մի բանով, իր ողջ կրքով կենտրոնանում է դրա վրա, քանի որ նրա համար կարևոր պայման է՝ ինչ անում է, սիրելով անի: Իսկ երբ մտնում է քաղաքականություն, արյունը եռում է, ու էլ առաջվա հանգիստ մարդը չի լինում, ինչ մինչև քաղաքականություն մտնելն էր: Երբ իտալացին ֆիլմ է նկարահանում, մի ակնկալի, որ այդ ֆիլմը շատերին դուր կգա, որովհետև միայն քչերին է հասու լինելու: Ի վերջո արվեստը ընտրյալների համար է:

Իտալացի երգչին օպերայում լսելուց, պատրաստ եղիր, որ հուզվելու ես, որովհետև ուժեղ էմոցիաներ է հաղորդելու քեզ: Ի վերջո Իտալիան աշխարհին Պավարոտիի նման մեծություն է տվել:

Իտալացի հեղինակների նկարների համար աճուրդում կռիվ են տալիս: Հաճախորդներն իրենց հավաքածուներում ձգտում են ունենալ իտալացի հեղինակների նկարներ ու դրա համար պատրաստ են մի քանի զրոներ ավելացնել նախնական գնին:

Երբ իտալացին գիրք է գրում, այդ գիրքը կարդալու համար արժե իտալերեն սովորել, որովհետև բնօրինակից լավը չկա:

Եվ վերջապես անսպառ կրեատիվի շնորհիվ՝ Եվրոպայում իտալացիներն են թելադրում նորաձևությունը:

Խաղի 60-րդ րոպեն է ընթանում, «Նապոլին» իր ամբողջ ուժերով փորձում է հասնել «Միլանի» դարպասին, բայց «Միլանի» պաշտպանական պատը անճեղքելի է:

Գաբրիելը իտալերեն մի քանի բան է ասում «Նապոլիի» հարձակվողներին, նրա ինտոնացիայից ու հարուստ ժեստիկուլյացիայից հասկանում եմ, որ դժվար թե դրանք գովեստի խոսքեր լինեն: Ապա փոքր ինչ հանդարտվելով՝ շարունակում է.

- Վերջին անգամ Իտալիան ֆուտբոլի աշխարհի չեմպիոն դարձավ 2006 թվականին, նրան հաջորդեցին Իսպանիան, Գերմանիան, Ֆրանսիան ու Արգենտինան: Չեմպիոնության կապակցությամբ բոլորից նոստալգիկ են իտալացիները: Նույնիսկ ամեն տարի չեմպիոն դառնալու օրն են հիշում: Ֆուտբոլի պատմության մեջ հայտնի լավագույն մրցավարը ծնունդով իտալացի Պիեռլուիջի Կոլինա էր, ով դեմ էր կաշառքներին: Իտալացի պաշտպանները լավագույնն են համարվում, ի վերջո իտալական ֆուտբոլում շեշտը դրվում է պաշտպանության վրա: Իզուր չէր իտալացի մարզիչ Ալլեգրին ասում. «*Հարձակումը բերում է հաղթանակներ, իսկ պաշտպանությունը չեմպիոնություն*»:

Ինչքան էլ գերմանացու, արգենտինացու կամ անգլիացու կիրքը ֆուտբոլի հանդեպ համեմատես իտալացու կրքի հետ, միևնույն ա, զգալու ես, որ ամենաուժեղը իտալացունն է: «*Իտալացու կիրքն արվեստ է, գերմանացունը՝ զրահատեխնիկա, արգենտինացունը՝ հոգեբանական հիստերիա, իսկ ֆրանսիացուն էլ մեկ գիշերվա համար կին է պետք, որ խաղից հետո քնի հետը*»:

Իտալացի ռեժիսորները, երգիչները և գրողները նույնպես կարևորում են ֆուտբոլը: Օրինակ՝ Սորենտինոն առանց Նապոլիի ու Մարադոնայի չէր դառնա ռեժիսոր, քանի որ, նրա խոստովանությամբ, ծնողների մահից հետո Մարադոնան դարձավ իր ոգեշնչման աղբյուրը: Լաուրա Պաուզինին առանց Միլանի երգչուհի չէր դառնա, իսկ Ումբերտո Էկոն ֆուտբոլը տեսնում էր որպես փոխաբերություն, դրդապատճառ և միջոց՝ մեկնաբանելու մարդկային հրապուրանքը իդեալներով: Էլ չասեմ մեր ազգային հիմնի մասին: YouTube-ում փնտրի Իտալիայի ազգային հիմնը ու զգա, ինչ ուժգին էմոցիաներով են երգում:

Գաբրիելը, որ արդեն բավականին գինովցած է, այլևս կողքից հարցերի կարիք չունի, որպեսզի անվերջ ծավալվի իր պաշտելի Իտալիայի թեմայով: Սահուն անցնում է իտալերենի.

“L'inno nazionale italiano fa parte del nostro DNA. Non cantare significa per noi non esistere. Questo è indiscutibile” .[4]

- Այսպիսի մենթալիտետ ունեցողները դարեդար պետություն են պահելու, ու ոչ ոք չի կարողանա նրանց կոտրել, - նրա պատմություններով ոգեշնչված՝ ասում եմ ես:

Գաբրիելը շոյված է երևում.

- Հայաստանն էլ է այդպես, Արամ: Մեր պետություններն ունեն հարուստ պատմություն: Դարերի ընթացքում Հայաստանին ոչ մի կերպ չեն կարողացել կոտրել ու չեն էլ կարողանա:

Որոշում ենք խմել մեր հայրենիքների կենացը, ապա փոքր դադարից հետո Գաբրիելը նորից վերադառնում է ֆուտբոլի թեմային:

- 1980-ականների վերջում Իտալիայի հարավը «մեռած էր», այդ թվում՝ Նեապոլը: Միջերկրական ծովի մոտակայքում ապրող մարդիկ սպորտից հաճույք չէին ստանում, մինչև այն պահը, երբ ճակատագիրն ամեն ինչ փոխեց: Մի օր «Նապոլիի» սեփականատերերը որոշում են թիմ հրավիրել Մարադոնային: Այդ ժամանակ «Նապոլիի» հետ միասին ամբողջ Իտալիան էր ցնծում: Ֆուտբոլի արքայազնը Իտալիայում էր, պատկերացրու, մեր ժամանակ դա չլսված բան էր: Նապոլիի վերակենդանացման գլխավոր կորիզը դարձավ հենց Դիեգոն՝ ֆուտբոլի մեծություններից մեկը: Նա վերակենդանացրեց իտալական ֆուտբոլը, իսկ նրանից հետո շատ ֆուտբոլիստներ տեղափոխվեցին Իտալիա, որպեսզի զգան կիրքն ու սերը, ի վերջո այդ արժեքներն ավելի վեր են, քան փողը:

Մինչև 2000-ականները իտալական ֆուտբոլը հավասարը չուներ ու չէր զիջում ոչ մեկին, բայց տեխնոլոգիաների ու բիզնես մոդելների զարգացման շնորհիվ Անգլիան շրջանցեց իր մակարդակով, ու բնականաբար շատ տաղանդավոր ֆուտբոլիստներ ձգտեցին իրենց պոտենցիալը բացահայտել այդ ամենաեկամտաբեր երկրում: Իտալացիների սերը ֆուտբոլի հանդեպ անսահման է, բայց մարդիկ սպասում են, թե երբ են կարողանալու վայելել այն ֆուտբոլը, ինչ վայելել է նախորդ սերունդը: Իտալական ծագումով ֆրանսիացի ֆուտբոլիստ Էրիկ Կանտոնան ասում էր.

«*Դուք կարող եք փոխել ձեր կնոջը, ձեր քաղաքական հայացքները, ձեր կրոնը, բայց երբեք, երբեք չեք կարող փոխել ձեր սիրելի ֆուտբոլային թիմը*»:

Երբ նայում ես, թե ինչպես է ամերիկյան սպորտը զարգացնում, հասկանում ես, որ նրանց գաղափարախոսությունը շահույթ ստեղծելն է: Անգլիան էլ, որ համարվում է ֆուտբոլի հայրենիքն ու սուպերլիգան, սպորտը կոմերցիոն է դարձրել՝ հետևելով ամերիկյան բիզնես մոդելին: Մեր ժամանակներում երկրպագուների 60 տոկոսը երկրպագում են անգլիական թիմերին՝ «Լիվերպուլ», «Մանչեսթեր Յունայթեդ», «Արսենալ», «Մանչեսթեր Սիթի», «Չելսի» ու «Տոտենհեմ», բայց առանց կրքի: Անգլիան դա չի տալիս, որովհետև չունի: Իսկ Իտալիան...

Չնայած իր մակարդակի թուլացմանը՝ տալիս է ու ավելի շատ: Նայի հին վիդեոները ու տես իտալացի երկրպագուների վանկարկումները, տոնակատարությունները, էմոցիաները 1980-ից 2010-ականներին: ԱՄՆ-ում ցանկացած սպորտ միլիարդներ է բերում, ցանկացած մարզիկ ավելի շատ կվաստակի, նույնիսկ պատկառելի տարիքում, բայց երբ իտալացուն առաջարկում են խաղալ ԱՄՆ-ում, նա հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ կիրքն ու հաճույքը գումարով չի փոխի: Իհարկե լինում են նաև

բացառություններ, հիմնականում գումարի հետևից են ընկնում կարիերայի ձախողման դեպքում, կամ էլ երբ բարձրակարգ խաղացողների կարիերան մոտենում է մայրամուտին:

Գաբրիելի պատմածներից շատ փաստեր ինձ հայտնի են, բայց նրա կրքոտ պատմվածքը ոչ մի կերպ չեմ ուզում ընդհատել:

- Իտալիայում քաղաքական կուսակցությունները կապ ունեն ֆուտբոլի հետ: Օրինակ՝ Մատեո Սալվինին, ով ժամանակին զբաղեցրել է Իտալիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնը, «Միլանի» երկրպագու է, ռոսոներիները նրան ընտրել են հենց այդ պատճառով: Ժամանակին Սիլվիո Բեռլուսկոնին 30 տարի «Միլանի» սեփականատերն էր: Քաղաքականություն մտավ շնորհիվ իր խոստումների, որ երբ դառնա «Միլանի» սեփականատեր, այն կդարձնի Եվրոպայում ամենաուժեղ թիմերից մեկը: Այդպես էլ եղավ: Եթե մարդ կարողանում է մի ամբողջ թիմ կառավարել ու ուժեղագույններից մեկը դարձնել, մի՞թե տրամաբանական չի, որ նույն բանը կարող է անել նաև քաղաքականության ասպարեզում: Շանսերը 50-50 են, բայց ինչպես տեսանք, Բեռլուսկոնին կարողացավ դառնալ Ջիուլիո Անդրեոտիից ավելի երկար պաշտոնավարող վարչապետ՝ Իտալիայի նորագույն պատմության մեջ: Կարճ ասած՝ քաղաքականության մեջ կարևոր է շեշտը դնել սպորտի վրա: Իտալիայից դուրս նույնպես օրինակներ կան: Բրազիլիայում նախագահական ընտրություններում հաղթանակ տարած Ժաիր Բոլզոնարոյի աջակիցները կրում էին դեղին գույնի շապիկներ, որոնք հիշեցնում էին Բրազիլիայի ազգային հավաքականի առաջին մարզաշապիկը: Աֆրիկայի դեմոկրատ երկրներից մեկում՝ Լիբերիայում, 2018 թվականից պաշտոնավարող նախագահը նախկինում ֆուտբոլիստ է եղել՝ Ջորջ Վեա անունով մի ուժեղագույն հարձակվող: Դու որպես «Միլանի» երկրպագու, պիտի իմանաս, որ նա մինչև հիմա էլ համարվում է միակ աֆրիկացի ֆուտբոլիստը, ով ստացել է ոսկե գնդակ: Սպորտից անցում դեպի քաղաքականություն հեշտ է ստացվում, երբ ունենում ես երկրպագուների մեծ բանակ, այսինքն սպորտը, ներառյալ ֆուտբոլը, շատ մեծ ազդեցություն ունի բոլոր բնագավառներում:

Խաղի 80-րդ րոպեին «Նապոլին» տասնմեկ մետրանոց է վաստակում: Գաբրիելը տեղից վեր է թռնում իտալերեն արտահայտություններով ու էներգետիկ ժեստիկուլյացիայով ցույց է տալիս, որ հարվածը պետք է կատարվի դեպի աջ անկյուն: Գնդակին մոտենում է վրացի ֆուտբոլիստ Խվիչա Կվարացխելիան: Շունչներս պահած սպասում ենք: Հարվա՛ծ... բայց «Միլանի» դարպասապահ Մայք Մենյանը պահում է գնդակը: Ես տեղից վեր եմ թռնում ու «Միլանի» մյուս երկրպագուների հետ գոռում՝ “Big Mike”, “Eagle”, իսկ «Նապոլիի» երկրպագուների հայացքից զգացվում է, որ ամեն ինչ ավարտված է: «Միլանը» հաշված րոպեների ընթացքում լինելու է կիսաեզրափակիչում, 16 տարվա մեջ առաջին անգամ:

Գաբրիելը սեղմում է ձեռքս, ես էլ ձեռքս դնում եմ նրա ուսին՝ փորձելով լավ տրամադրությամբ վարակել: Ինչպես ասում են՝ ֆուտբոլը միավորում է մարդկանց, իսկ քաղաքականությունը բաժանում:

Խաղին մնացել է 10 րոպե: Ինձ մոտ մի հարց էլ է ծագում, որոշում եմ չսպասել մինչև խաղի ավարտը.

- Գաբրիել, Իտալիայի ստադիոններին ի՞նչ ճակատագիր է սպասվում: Ես գիտեմ, որ որոշ թիմեր վերակառուցման ծրագրեր ունեն, այդ թվում «Միլանը», որը հետագայում ուզում է ունենալ «Լա Կաֆեդրալ» ստադիոնը ի պատիվ Դուոմոյի, բայց երբ լսում եմ թե ինչ են անելու «Սան Սիրոյի» հետ, ափսոսանք եմ զգում, որովհետև պատմամշակութային արժեք է:

- Դու ճիշտ ես, Իտալիայի ստադիոնները պատմամշակույթային արժեքներ են, բայց ժամանակակից ֆուտբոլի ստանդարտներին չեն համապատասխանում: VIP տրիբունա, գաջեթներ, մեծ էկրաններ վերջին շարքի նստատեղերի համար, հարուստների համար նախատեսված առանձին ռեստորանային համալիր, որտեղ ճաշակում են տարբեր տեսակի խմիչքներ, ուտեստներ, իսկ տրադիցիոնալ ֆուտբոլի ստանդարտներն էլ չկան, ֆուտբոլն արդեն բիզնես է դառնում: Հեռու չի այն ժամանակը, երբ իտալական ֆուտբոլն էլ կդառնա բիզնեսի զոհ՝ հեռվանալով տրադիցիոն ֆուտբոլից ու դառնալով կոմերցիոն, ինչպես ամերիկյանն ու անգլիականն են: Բայց, ինչևէ, երկրպագուները հա էլ մնալու են իրենց սիրած թիմերի կողքին, իսկ իտալացի երկրպագուները առհասարակ չեն դավաճանի իրենց սիրած թիմերին, նույնիսկ եթե իրենց թիմը գնա ռելեգացիայի[5]:

Պատկերացրու կյանքն Իտալիայում ինչպիսին է, երբ ֆուտբոլի երկրպագու ես: Երեքշաբթի-չորեքշաբթի օրերին երեկոյան, աշխատանքի ավարտից հետո ընկերներով հավաքվում եք, որպեսզի փաբում կամ բարում խմիչքի շուրջ նայեք ձեր թիմի խաղը, եթե իհարկե թիմը խաղում է Չեմպիոնների լիգայում, իսկ եթե չէ, ապա շաբաթ-կիրակի օրերին գնում եք ստադիոն՝ խաղը դիտելու: Ֆուտբոլից առաջ, արվեստով ոգեշնչվելու համար, հաճախում ես պատկերասրահ, կամ օպերա՝ այն պայմանով իհարկե, որ ի վիճակի ես մի օրում ծախսելու միջինը 70-100 եվրո: Իտալիայում միջին աշխատավարձը բավականացնում է, մանավանդ, որ հիմնականում շատ են ծախսում հանգստյան օրերին: Այստեղից էլ հետևություն՝ եթե ուզում ես Իտալիայում բիզնես ունենալ, արժի ավելի շատ աշխատել շաբաթ-կիրակի օրերին: Իտալիայի կիրքը սպորտի ու արվեստի հանդեպ չի մարելու, որովհետև մեզ հենց այդ կիրքն է միավորում:

«Նապոլին» գոլ է խփում 90+3-րդ րոպեին: Երկրպագուները այլևս չեն ուրախանում, բայց ծափահարում են: Օսիմհենի գլխի հիանալով հարվածով գնդակը հայտնվում է «Միլանի» ցանցում: «Նապոլիին» ևս մեկ գոլ է պետք խաղը փրկելու համար, բայց մրցավարի սուլոցն ազդարարում է խաղի ավարտը, «Միլանը» պաշտոնապես կիսաեզրափակիչում է:

Գաբրիելը շնորհավորում է ինձ.

- Քո թիմը՝ «Միլանը», եվրոպական ֆուտբոլի կորիզներից է Մադրիդի «Ռեալի», Բավարիայի, «Բարսելոնայի» ու «Լիվերպուլի» հետ մեկտեղ, ես կասեի միակ ֆուտբոլային թիմն է Իտալիայից, որ Եվրոպայում հաղթելու ԴՆԹ ունի: Մաղթում եմ ձեզ հաղթել Չեմպիոնների լիգայում՝ չնայած նրան, որ բարդ է լինելու:

- Հուսով եմ կհաղթենք, - ջերմորեն գրկախառնվում ենք, ու ես դուրս եմ գալիս փաբից:

Գիշերվա 1-ն անց է, քայլում եմ դատարկ փողոցներով՝ տարված իմ մտքերով, ու ինքս ինձ ասում եմ.

- Փա՛ռք Ջուզեպպե Գարիբալդիին, ով միավորեց Իտալիան:

Միլանը տարիներով քնած առյուծ է եղել: Երբ առյուծն արթնանում է, շատ բան է փոխվում:

Forza Milan!

Ծանոթություններ

1. Giallorossi (ջալոռոսի) - Կամ ռոմանիստա: Հիմնականում այն երկրպագուներն են, ովքեր սատարում են կարմիր-դեղին մարզաշապիկով թիմերին:

1.1 Biancocelesti (բիանկոչելեստի) – Կամ լացիալե: Սպիտակ-երկրպագույն մարզաշապիկով Լացիոյի մականունը:

2. Rossoneri (ռոսոնների) - «Միլան» թիմի լայնորեն գործածվող մականունն է, բառացիորեն նշանակում է «կարմիրներ և սևեր»՝ նկատի ունենալով նրանց մարզաշապիկի գույները:

2.1 Nerazzurri (ներաձուրի) – անվանում են սև-կապույտ մարզաշապիկ կրող ցանկացած մարզական ակումբի խաղացողի կամ աջակցի, բայց ավելի շատ կապում են «Ինտերի» հետ:

3. Comeback - այստեղ՝ պարտվող թիմի կողմից խաղում ոևանշ վերցնելը:

4. Թարգմ. «*Իտալիայի ազգային օրհներգը մեր ԴՆԹ-ի մի մասն է: Չերգելը նշանակում է, դադարել գոյություն ունենալուց: Սա անվիճելի է*»:

5. Ռելեգացիա – բարձրագույն լիգայից դուրս մնալ:

Աբսուրդ մանրապատումներ

Դեպուտատի մանրապատումներից

Դեպուտատը կոֆե դնելու նկատմամբ սեր ուներ: Կոֆեն պատրաստելուց երգ էր լսում, հետո գնում էր աշխատանքի, կոճակ էր սեղմում, օրենք էր փոխում:

Ժամը 6-ից հետո գնում էր կաֆեներում աղջիկների հետ գյալաջի անում:

Ժամը 12-ին վերադառնում էր տուն ու քնում, որ հաջորդ օրը նորից գործի գնա:

Մի օր էլ զանգեցին, ասացին, որ կաֆեում հաշիվը մոռացել է փակի: Երկար մտածելուց հետո որոշեց օրենք հանի, որ եթե կաֆեում հաշիվը մոռացել ես փակել, ապա պիտի պարգևատրվես: Օրենքն ընդունվեց միաձայն:

****

Մոդել Սառան զանգեց դեպուտատ Արտեմին ու խնդրեց փող ուղարկի իրեն, որ գնա փարթիի: Արտեմը դեպուտատ էր, Սառան էլ կես դրույքով մոդել էր աշխատում, կես դրույքով էլ հարուստների կարիքները բավարարող էսկորտ: Արտեմը փողն ուղարկեց, բայց Սառան չստացավ: Բանից պարզվեց՝ Արտեմը մի թիվ սխալ էր գրել ու փողը փոխանցել էր քաղցկեղով հիվանդ երեխաների հիմնադրամին: Հիմնադրամը խորին շնորհակալություն հայտնեց 75,000 եվրո նվիրատվության համար: Ասացին, որ Արտեմը լավ մարդ է, երբ սխալվում է:

****

Ֆիզիկոսները հանդիպում են դեպուտատներին՝ առաջարկելով ստեղծել միջուկային զենք ու ԱԹՍ-ներ, որպեսզի զինեն բանակը: Դեպուտատները պատճառ են բերում, թե բա բավարար գումար չկա էդ ծրագրի մեջ ներդրման համար:

Հանդիպումից հետո դեպուտատները գնում են խորոված ուտելու իրենց էսկորտների հետ: Էսկորտներն էլ Բելառուսից ու Ուկրաինայից եկած աղջիկներն են, որ 10 րոպեի դիմաց ստանում են 1000 դոլարին համարժեք ռուբլի:

Ֆիզիկոսներն էլ մերժում ստանալուց հետո գնում են Գերմանիա ու ստեղծում անթիվ զինտեխնիկա:

Մի տարի անց դեպուտատները առաջարկում են ֆիզիկոսներին հետ դառնալ ու իրագործել ծրագիրը, բայց վերջիններս մերժում են:

Ժողովուրդն էլ էդ ֆիզիկոսներին դավաճան է պիտակավորում:

****

«*Ժողովուրդը տգետ է*». էդ ցանկացած դեպուտատ էլ գիտի:

«*Ժողովուրդն անպիտան է*». էդ ցանկացած դեպուտատ էլ գիտակցում է:

«*Ժողովուրդն ապրանք է, որն ունի օգտագործման ժամկետ*». դրանից բոլոր դեպուտատնելն էլ օգտվում են:

«*Ժողովուրդը գործիք է*». դեպուտատին երբ պետք է, ժողովրդի ականջին կնստի:

Դեպուտատները չեն դարձրել ժողովուրդին էդպիսին, այլ ժողովրդին միշտ էլ դուր է եկել տենց լինել:

****

Դեպուտատը դավաճան հանվեց: Տարան հրապարակի մեջտեղը կախահան անելու: Վերջին խոսքերը հետևյալն էին.

«*Դուք երբեք պետդավաճանություն անող դասակի հրամանատարի հանդեպ նման բան չէիք անի, որովհետև նրանք Ձեզ համար հերոս են*»:

Իսկ ի՞նչն էր կախահանության պատճառը: Դեպուտատը հակապետական փաստաթղթեր էր հրապարակել, որոնք վտանգում էին դասակի հրամանատարների հեղինակությանը:

****

Վարչապետին կանչեցին դեպուտատի սենյակ միասին էրոտիկա դիտելու: Տեղում էր նաև հոգեբանը: Հոգեբանը հետևում էր նրանց ու թղթի վրա գրառումներ անում: Սակայն ո՛չ դեպուտատը, ո՛չ էլ վարչապետը չէին նկատում նրա ներկայությունը:

Պատճա՞ռը: Չէ, էրոտիկայով տարված լինելը չէր:

Ուղղակի հոգեբանը հոգի էր, որ ֆոֆոում էր սենյակում:

****

Դեպուտատը խմած էր, ուզում էր մեկի հետ զրուցել, որոշեց գնալ հոգեբանի մոտ: Հոգեբանը զրուցեց հետը, դիագնոզ արեց, վերջում էլ ասաց, որ լավ կլինի դառնա ծրագրավորող, որպեսզի նոր հետաքրքրություններ ունենա: Դեպուտատը հոգեբանի

ասածը պեչատեց ու կես տարում դարձավ ծրագրավորող: Ծրագրավորելու ընթացքում հասկացավ, որ ուզում է դառնալ գինեկոլոգ: Երկու տարի կանանց ոտքերը բացելուց հետո ուզեց դառնալ ԼԳԲՏ համայնքի միության նախագահ: Տարիներ անց զգաց, որ արվեստն է իրենը ու որոշեց փորձել երաժշտությամբ զբաղվել: Վատ վոկալ ունենալու պատճառով թողեց ու զբաղվեց առաքումով: Տեղի առաքիչներից մեկը առաջարկեց միասին եկամտաբեր բիզնես դնել: Բիզնես դնելուց հետո հարստացավ ու որոշեց քաղաքականությամբ զբաղվել: Եվ նորից ընտրվեց որպես...դեպուտատ: Դրա համար պետք ա շնորհակալություն հայտնել հոգեբանին:

****

Դեպուտատի ծնունդն էր մոտենում, նա էլ երգիչ էր փնտրում, որ ծնունդին երգի: Զանգեց մեկին:

Երգիչը մի ժամվա համար 2000 դոլար ուզեց: Դեպուտատը համաձայնվեց:

Ծնունդին երգիչն եկավ անպատրաստ: Դեպուտատն ասաց ակապելլա երգի, բայց երգիչը չկարողացավ: Դեպուտատն ասաց լավ, գոնե ջազ երգի, դա էլ չկարողացավ: Բանից պարզվեց մի շաբաթ առաջ էր քնից զարթնել ու որոշել երգիչ դառնալ: Դեպուտատը բարկացած հրամայեց գնդակահարել չկայացած երգչին: Արդյունքում երգչի փոխարեն «զոհվեցին» նրա ձայնալարերը:

Միլիոնատիրոջ մանրապատումներից

Միլիոնատերը հասկացավ, որ օրենքի մարդ է, ու որոշեց պատգամավոր դառնալ, որպեսզի անձեռնմխելիություն ունենա: Ընտրություններում ընտրվեց համամասնական կարգով, իսկ նրա կինը հասցրեց քնել գյուղացիների կեսի հետ:

Արդարությունը միշտ էլ հաղթում է:

****

Միլիոնատերը հարաբերություն էր փնտրում, բայց փող չուներ: Նրա բոլոր փողերը կրիպտոարժույթով էին:

****

Միլիոնատերը հանդիպեց մի հրեայի: Հրեան առաջարկեց Իսրայելում բիզնես դնել: Միլիոնատերը հասկացավ, որ Իսրայելում բիզնեսը շահութաբեր կլինի...բայց հրեայի համար:

Հրեան համոզեց միլիոնատիրոջը, որ «չէ ախպեր, փողի կեսը սենց թե նենց քոնն ա»: Միլիոնատերը համոզվեց, ներդրումներն արեց ու երկրից դուրս եկավ՝ որոշելով մի տարուց հետ գալ ու տեսնել, թե ինչպես են գործերն ընթանում:

Մի տարուց հետ եկավ ու տեսավ, որ Իսրայելը էլ չկա, տեղը Պաղեստինն ա: Հրեան գցեց իրեն...

****

Միլիոնատերն ամուսնանում է ինստագրամյան մոդելի հետ: Մեկ տարի անց կինը երեխա է լույս աշխարհ բերում: Անեծքը կայանում է նրանում, որ երեխայի հայրը միլիոնատերը չէր, այլ նրա նախկին կնոջ տղան: Փաստորեն միլիոնատերը երեխայի պապին դարձավ: Պարադոքսալ ա:

****

Միլիոնատերը երեք հազար դոլար արժողությամբ ոսկուց վզնոց էր առել իր շան նամոռդնիկը փոխարինելու համար: Ժամանակի ընթացքում շունը հասկացավ, որ չէ, իրեն սովորական նամոռդնիկ է պետք, որովհետև ինքը մարդ չի, շուն է:

****

Գյուղացի ծեր կինը միլիոնատիրոջը խնդրում է, որ մի երկու կոպեկով օգնի: Միլիոնատերն էլ մտածում է, թե որտեղ է սա իրան ուզում քցած լինի: Իր թիկնապահներին կարգադրում է մտնել ծեր կնոջ տունը ու տեսնել ինչ ունի-չունի: Բախտի բերմամբ երկրաշարժ է սկսվում ու ներսում գտնված թիկնապահները տեղում մահանում են: Մարդաքանակի քչության պատճառով միլիոնատերը ծեր կնոջը դարձնում է իր թիկնազորի պետ:

****

Միլիոնատերը իր աշխատողների համար գրքեր էր առել, որ կարդան:

Երբ հարցրին. «*Ինչի՞ համար ես առել*», պատասխանեց. «*Աշխատողներին պետք է խելացի պահել, եթե դեբիլանան, իմ գործերը կվատանան»:*

Մարդասպանի մանրապատումներից

Մարդասպանը ստել էր ոստիկանին՝ ասելով, որ դիակը թաղել է X վայրում: Այնուամենայնիվ ոստիկանն իր թիմին հավաքեց, ու գնացին Y վայր: Ի զարմանս բոլորի՝ գտան այլ դիակ, որը թողել էր մի ուրիշ մարդասպան: Այս մարդասպանը ոչ մի կապ չուներ առաջինի հետ:

****

Ոստիկանը մարդասպանին ասաց, եթե խոստովանական ցուցմունք տա, դատավճիռը մեղմ կլինի: Մարդասպանը համաձայնվեց, բայց մի պայմանով՝ կխոստովանի, եթե իրեն սկզբում բուրգեր բերեն ուտելու:

Ընդառաջելով նրա տարօրինակ ցանկությանը՝ բուրգերը բերեցին: Մարդասպանը չհասցրեց մինչև վերջ ուտել, թունավորվեց ու տեղում մահացավ:

Պատճա՞ռը:

Բուրգեր պատրաստողը մարդասպանի ենթադրյալ հանցակիցն էր: Մինչ օրս էլ փնտրում են նրան:

****

Մարդասպանը խոստովանեց, որ սպանել է 10 հոգու: Դրանցից 9-ը են խոշտանգումների արդյունքում, իսկ 10-րդը՝ բնական մահով: Դատարանը որոշում կայացրեց, որ 10-րդ զոհի մահը նույնպես խոշտանգումների արդյունք էր: Մարդասպանը բողոքարկեց այդ որոշումը ու շահեց դատը, դրա դիմաց կլորիկ գումարի չափով փոխհատուցում ստացավ, բայց ազատազրկվեց 50 տարով:

****

Ոստիկանը մարդասպանին հնարավորություն տվեց մեկ օր էլ անցկացնել ազատության մեջ: Մարդասպանը այդ մեկ օրը ապրեց առանց օրենքը խախտելու ու հասկացավ ազատության արժեքը, բայց արդեն ուշ էր:

****

Մարդասպանը խնայել էր իր զոհերից մեկին: Հարցաքննության ժամանակ խոստովանեց քննիչին, որ զոհը իր նման էր, դրա համար էլ խնայեց ու հույս հայտնեց, որ մարդասպանները երբեք չեն վերանա, քանի որ հասարակության մեջ կարևոր դեր են խաղում:

****

Մարդասպանը դատարանում ավելի շատ հերոսի տպավորություն թողեց: Նա սպանել էր բազմաթիվ պեդոֆիլների, բայց միևնույն է դատապարտվեց ցմահ ազատազրկման:

****

Ոստիկանը զարմանքով նայեց մարդասպանին ու ոչ մի կերպ չէր հավատում, որ դա իր դասարանցին է, որ սպանել է իրենց մայրենի լեզվի ուսուցչուհուն: Դպրոցում ծաղրուծանակի ենթարկված մարդասպանը վրեժի ծարավը հագեցրել էր՝ զրկելով ուսուցչուհուն կյանքից, ինչպես վերջինս զրկել էր նրան լիարժեք ապրելու հնարավորությունից:

Հոգեբանի մանրապատումներից

Պացիենտը մտավ հոգեբանի սենյակ՝ դանակը ձեռքին: Բայց չհասցրեց սպանել հոգեբանին, որովհետև հոգեբանը նրան հիպնոսացրեց:

****

Պացիենտը ֆինանսական դժվարությունների պատճառով դեպրեսիայի մեջ էր, որոշեց գնալ հոգեբանի մոտ, բայց ընկավ ավելի խորը դեպրեսիայի մեջ, երբ իմացավ, թե ինչքան պետք է վճարի մի սեանսի համար:

****

Պացիենտը հոգեբանական սեանսի կարիք ուներ, բայց հոգեբանը նրան հոգեբույժի մոտ ուղարկեց, հոգեբույժն էլ ուղարկեց պալատ: Պալատում պացիենտի վիճակն ավելի վատացավ: Երկու շաբաթ անց հոգեբուժարանից հոգեբանին տեղեկացրին, որ մի ադեկվատ պացիենտ ինքնասպան եղավ:

****

Պացիենտը գնաց հոգեբանի մոտ մեղքի զգացումից ազատվելու համար: Հոգեբանը նրան օգնեց ընդամենը մի նախադասությամբ: Իսկ թե ինչ ասաց հոգեբանը, կիմանաք, երբ վճարեք 15,000 դրամ:

****

Հոգեբանը պացիենտի հետ քնեց: Վերջինս չհավանեց էդ մոտեցումը: Բայց իր ցանկությամբ էր ամեն ինչ եղել:

Հարց. Ինչու՞ են պացիենտները քնում հոգեբանների հետ:

Պատասխան. Դա հոգեբանական գաղտնիք է:

****

Հոգեբանը մի պացիենտ ուներ, ով ժամանակին մարդ էր սպանել: Մարդ սպանելն իրեն դարձրել էր լավ մարդ: Պատճառն էն էր, որ մի մեծ հանցանք գործելուց մարդիկ ուժ են վերագտնում դեպի լավը փոխվելու:

Հոգեբանը բացատրում է.

«Մինչև մենք մի բան չկորցնենք, չենք հասկանա թե ինչը գնահատենք, մինչև մի հանցանք չգործենք, չենք հասկանա, որտեղ փոխվել»:

****

Հոգեբանը քնելուց առաջ պացիենտների գումարներն է հաշվում, ոնց հովիվը՝ գառներին :

Բժշկի մանրապատումներից

Բժիշկը հիվանդին ասաց, որ նրան 7 օր է մնացել ապրելու, բայց հիվանդն ապրեց 5 օր:

****

Բժիշկը հիվանդին ասաց, որ նրան մնացել է 7 օր ապրելու, բայց իրադարձություններն էնպես դասավորվեցին, որ հիվանդը բժշկից երկար ապրեց:

Պարզվեց, որ 5-րդ օրը բժիշկը կնոջ հետ սեռական հարաբերության ժամանակ ինֆարկտ էր ստացել:

****

Բժիշկը հիվանդին խորհուրդ տվեց կտակ կազմել, քանի որ 7 օրից կմահանա: Բախտի բերմամբ հիվանդն ապրեց 30 տարի ու նույնիսկ մասնակցեց բժշկի հուղարկավորությանը: Բժիշկը մահացել էր էդ նույն հիվանդի ձեռքից, իսկ հիվանդն ամեն օր ապրում էր, ասես իր 7-րդ օրը լիներ:

****

Բժիշկը հիվանդին ասաց, որ ոչ մի հրաշք նրան փրկելու ի զորու չէ, նրան մնացել է ապրել 5 օր: Հիվանդը էդ 5 օրում հասցրեց ավելի շատ բան տեսնել, քան տեսել էր մինչև բժշկից էդ արտահայտությունը լսելը:

****

Բժիշկը հիվանդին ասաց, որ միայն Աստված կարող է երկարացնել նրա կյանքը, դրա համար հիվանդն ամեն օր աղոթում էր առ Աստված, բայց լավ է, շուտ մահացավ, որովհետև քիչ էր մնում աթեիստ դառնար: